

ՍԻՈՆ

ԼՍՏԱԳԻՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ



ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՆՐԱՏ ԵՐԿՈՒՄԱՆ ԵՒՅ ՊԱՏՐԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ
ԵՐԶԱՆ 1957

ԼԱ
ՏԱՐԻ

«سِيُون» مجلة أرمنية شهرية، أدبية، ثقافية، للغة والبيان

"SION," an Armenian Monthly of Religion, Literature and Philology
Printed in JERUSALEM

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՉՈՐՍԱՆՃԱԳԻ ՀԱՅՈՑ - Գ. Ս. Երեւանեան (նուիրատու):
ԱՆՀԵՏԱՑԱՄ ՍԵՐՈՒՆԵՒ ՄԸ - Գր. Զօհրապ: Հրատ. եւ նուէր Կ. Տօնիկեան Գրատան:
ՓՐԿՉԻՍ ՀԱՄՈՐ - Ոստանիկ Մ. Խէրանեան: Նուէր Քարլ Մայրըէն:
ՕՐԱՑՈՅՑ (1957) - Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի, Իսթանպուլ:
ԿՂԶԻՆ ԳՈՂՏՆԻՔԸ - Ժիւլ Վէռն: Նուէր Գէորգ Իփեանէ:
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՇՈՒՆԿՇԻՌՆԵՐ 1953 եւ 1954 ՏԱՐԵՇՐՁԱՆՆԵՐՈՒ

Փարիզի Հ. Բ. Ը. Միութեան Մասնագիւղի:
ՎԵՐՁԻՆ ԿԱՅԱՆԸ - Անդրանիկ Անդրէասեան (նուիրատու):
ԱՇԽՍՐՀԻ ՄԵՆՍԻՍՏՆ ԲԱՆԸ - Հէնրի Տրամընտ: Թրգ. Սիոն Արք. Մանուկեան (նւրտ.):
ՊԱՊԻՅ ԵՒ ԹՈՌՆԻԿ - Խրիմեան Հայրիկ: Հրատ. եւ նուէր Էտվանի:
ՅԱԻԵԼՈՒԱՄ ՉՈՆԱՄԱՏԵԱՆԻ ՎԱՀԱՆ ՄՍԼԷՉԵԱՆԻ ԵՍ ԱՄԵՍԿԻՆ ԱՌԹԻՒ: Նուէր Հրաչ
ՏՕՆԱՑՈՅՑ 1957 ԱՄԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ - Վիեննա: [Զարգարեանէ:
ԼԵՆԻՆ Ժէրանեանէ ստացանք. ա) ԳՐԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ (1957): ք) ԱՌՁԵՌՆ ՏՕՆԱԿՍՐԳ:
ՅԻՍՈՒՍԻ ՄԱՐԿՆՈՅՆ ԼՄԱՆ 3 ՕՐ ՈՒ 3 ԳԻՇԵՐ ԳԵՐԵՉՄԱՆԻՆ ՄԷՋ ՄՆԱՑՍՄ ԸԼԼԱԸԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄՍ - Հովիւ Կարապետ Գ. Ուզունեան (նուիրատու):
ՀԱՅ ԿԱՌԱՂԻԿ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ ԳԻՐՔԸ ԽՈՐՀՐԴ. ՀԱՅԱՍՏԱՆԻՆ, ՆԵՐԳՈՂԹԻՆ ԵՒ
ՀԱՅԿ. ԴՈՏԻՆ ՀԱՆԴԷՊ - Ա. Էլմանեան (Պէյրուի):

ՄՍՍԻՍ - Թիւ 22: Մանկական Գրադարան: 1936:
ՀՈՒՆՁՔ Տարեգիրք - Ա. Տարի, Պրակ Ա. - Գ.: Նուէր Տորթ. Մինաս Գմգմեանէ:
ՕՐԱՑՈՅՑ ԵՒ ԳՈՒՇԱԿ ՕԴՈՑ, 1957 - Վենետիկ:
ՅՈՒՍԱԲԵՐ - Բացառիկ թիւ, նուիրուած Վահան Նաւասարդեանի յիշատակին:
«Մարանաթա» յէն ստացանք 8 Հայերէն գիրքեր:
ԹՈՐՈՍ ԼԵՒՈՆԻ - Ծերենց: Հրատ. եւ նուէր Կ. Տօնիկեան Գրատան:
AU PATRIARCAT ARMENIEN DE JERUSALEM - P. J. Mamour. (նուիրատու):

Գրիտ. Ջանից Ընկերութեան Գրասենեակէն ստացանք. —
ա) ՆՈՒՐԻՑԱ ՎԱՐԺՈՒՇԻ ԼԵՒՈՆԵԱՆ - Օր. Հետուիկ Պիւլ, Հայէպ:
բ) ՀԱՏԸՆՏԻՐ ՊԱՏՄՈՒՄՔՆԵՐ - Հայերէնի թարգմանեց Յովհ. Գ. ձէտիտեան:
ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ - Պօղոս Մնայեան (նուիրատու):

ՄՈՒՍԱՅՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ - Ա. Փ. Մասիսեանց (նուիրատու): [CALFAYAN.
30th ANNIV. TESTIMONIAL DINNER IN HONOR OF HIS GRACE MAMPRE ARCH.
ՅՈՒՆԼԻՆԱԿԱՆ ՃՕՇԿԵՐՈՅԹ ԵՒ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻ ՇԱՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆԻ -
ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԻՒՐ - Հ. Զարգարեան (նուիրատու): [Տիթրոյթ:
Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԸՆԴՀ. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ 1955 ՏԱՐԵՇՐՁԱՆԻ:
Նիւ Եորքէն Պր. Արշամ Գրանեան կը նուիրէ 1957 տարւոյ «TIME» Շարաթաթերթը:
ՄԱՀՈՒՆ ՊԷՍ ՉՈՐԱՒՈՐ - Բ. Տպարթ.: Արամ Մահակեան (նուիրատու):
» » » - Արարեղէն լեզուով: Թրգմ. ձօրճ Թագապահան:

(Շարունակելի)

ԼՈՅՍ ՏԵՍԵԻ Ս. ԱՐՈՒՈՅՍ ՏՊԱՐԱՆԷՆ

ԳԷՈՐԳ Ս. ՃԻՆԻՎԻՉԵԱՆ

ԱՐՑՈՒՆՔԻ ՇԻԹԵՐ

ՔԵՐԹՈՒԱՄՆԵՐ

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ		ԷՐԵՍ
— «Հաւասամբ եւ ի մի միայն ... Սուրբ Եկեղեցի»		249
ԿՐՕՆԱԿԱՆ		
— Ճառ Բարսեղ Հայրապետի		255
— «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»	ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ.	257
ԲԱՆԱՍՏԵՂՆԱԿԱՆ		
— Աղօթք վասն Հայ Եկեղեցւոյ	Թ.	260
— Կեանք	ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ	261
— Գերզայնութիւն	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	261
— Աշխերն խորունկ գիշերուան	Թրգմ. ԶԱԻԷՆ ՎՐԻ.	261
ՊԱՏՄԱ – ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Պապ Արեակունի	ՀՐԱՆԳ Բ. ԱՐՄԷՆ	262
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ		
— Էջմիածին 1655ին	Թրգմ. ՀԱՅԿ ՊԵՐՊԷՐԵԱՆ	268
— Նարեկացու կեանք	Մ. ՄԿՐԵԱՆ	272
ԵՐՄԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ		
— Միջնագարեան հայ կոնպոզիտորներ	ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ	276
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ		
— Սիրահայեաց Ս. Ասուածածին	Ն. ԵՊՍ. ՅՈՎԱԿԱՆ	279
ԳՐԱԿԱՆ		
— Սեւ գոյժը	Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	283
Պատեօնական Հաղորդագրութիւն Ս. Արսուոյ Գիւանէն		284
Խնդակցական հեռագիրներ		289
Մայր Արսու Ս. Էջմիածնի Գիւանասան Հաղորդագրութիւնը		290
Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ		
— Հեռագիրներ		293
— Պատեօնականք		
ՏԻՐՈՒՆԻ		
— Փառէն Եպս. Մելիօնեան		295
— Պօղոս պապա Քեշիշեան		
— Ռաֆայէլ Մուրասեան		

تصدرها - بطريكية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النيابة الاسقف هايكازون أبراهاميان
 أكتوبر - نوفمبر ١٩٥٧ تطبع في مطبعة دير الارمن - القدس العدد ١٠ - ١١

— ≡ Ս Ի Ո Ն ≡ —

Լ.Ա. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1957

◀ ՀՈԿՏԵՄ՝ - ՆՈՅԵՄ՝ ▶

ԹԻԻ 10-11

ԽՄԻՆԳՐԱԿԱՆ

“ՉԱԻԱՏԱՄՔ ԵՒ Ի ՄԻ ՄԻԱՅՆ... ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ”


Եկեղեցին այն կրօնական կազմակերպութիւնն է որուն նպատակն է շարունակել, մինչև ի կատարած աշխարհի, այն առաքելութիւնը որուն համար Քրիստոս աշխարհ եկաւ: Իրագործել, սերունդէ սերունդ, այն նպատակը՝ զոր Քրիստոս զրաւ եկեղեցիին համար. այսինքն սրբացնել իր անդամները և առաջնորդել զանոնք յաւիտենական կեանքի և փրկութեան: Այս հասկացողութեամբ եկեղեցիին գործը շարունակութիւնն է երկրի վրայ Քրիստոսի գործին:

Ուղղափառ եկեղեցին միայն այս գործը կրնայ կատարել: Իր առաքելութեան ճամբէն շեղած, կամ իր նկարագիրը եղծուած եկեղեցի մը չի կրնար աստուածազիր այս նպատակը իրագործել: Եկեղեցին ունի յատուկ նշաններ որոնք կը ճշդեն իր իսկական նկարագիրը և կը հաստատեն իր ուղղափառութիւնը: Եկեղեցիի այս նշանները կամ յատկանիշերը յիշուած են մեր Հաւատոյ Հանգանակին մէջ. «Հաւատամք ի մի միայն, ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցի»: Եկեղեցիի այս նշանները սերտօրէն իրարու կապուած են. մին կ'ենթադրէ միւսը. մին այնքան կարևոր է որքան միւսը: Մեր յառաջադրած նպատակին համար սակայն մենք պիտի զբաղինք անոնցմէ երկուքով միայն. եկեղեցիի Մրբութեամբ և Միութեամբ:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՆՊԱՏՈՒԹՅԱՆ ԵՄՍՈՒՅՈՂԸ ՄԻԱՅՆ ՍՈՒՐԲ Է. —

Մրբութիւնը կրկնակ իմաստ ունի: Սուրբ կը նշանակէ նախ՝ մաքուր, անարատ, ամբիծ: Սուրբ է այն առարկան կամ անձը որ իր մէջ չունի իր ընտելութեան հակառակ տարրեր, որոնք աղարտեն իր զեղեցկութիւնը և խանգարեն իր բարւոք գործունէութիւնը: Մեր երեսը պէտք կը զգանք արել յաճախ երբ անոր վրայ նստած են աւելորդ տարրեր որոնք կ'եղծեն անոր ընտելանութիւնը և կ'աղարտեն անոր տեսքը: Մեր աչքերը կը արբեցնէ երբ անոնց մէջ մտած օտար տարրեր արգելք կ'ըլլան անոր բարւոք գործելուն, յատակ տեսողութեան:

Մրբութիւնը ունի նաև ուրիշ առում: Սուրբ է այն առարկան կամ անձը որ զատուած է իր տեսակներու մէջէն և յատկացուած է աստուածային նպատակի մը: Սուրբ է այն շէնքը որ կը ջոկուի միւս շէնքերէն, կամ կը շինուի



յատկապէս, տրամադրուելու համար աստուածային պաշտամունքի: Սուրբ է այն բաժակը որ կ'ընտրուի միւս բաժակներու մէջէն, կամ կը շինուի յատկապէս, Հաղորդութեան Ս. Խորհուրդի ընթացքին զործածուելու համար: Սուրբ է վերջապէս այն անձը որ աշխարհէն ու մարդերէն կը զատուի՝ ինքզինք ամբողջութեամբ տալու համար Աստուծոյ ծառայութեան:

Եկեղեցին սուրբ է այս կրկնակ իմաստներով:

Երբ Եկեղեցիի սրբութեան մասին կը խօսինք երբեք անտես չենք ըներ այն իրողութիւնը որ Եկեղեցիին բոլոր անդամներն ալ սուրբ չեն: Ստույգ է որ Եկեղեցիի մէջ, և Եկեղեցիի անունով, անսուրբ զործեր կը կատարուին, ինչպէս արդարադատ պետութեան մը հպատակներուն մէջ շատ մը անարդար զործեր կը պատահին: Սակայն այդ մեղսալից զործերը չեն ազդեր Եկեղեցիի սրբութեան վրայ, որչափ ատեն որ Սրբութիւնը Եկեղեցիին իտէալն է, որչափ ատեն որ սրբարար շնորհներ կը զործեն իր մէջ, որչափ ատեն որ Եկեղեցին կը դատապարտէ բացէ ի բաց նման անսուրբ և զայթակղալից զործերը, և որչափ ատեն որ կ'աշխատի մեղաւորները իրենց շար ճանապարհէն հանելով սրբութեան ուղիին մէջ դնել: Բաց աստի, մինչ Եկեղեցին իր անդամները Սրբութեան իտեալին կը կանչէ, միւս կողմէն հաստատ զիտէ որ զայթակղութիւններ անխուսափելիորէն պիտի պատահին մինչև իսկ իր մէջ. «Չէ մարթ չղալ զայթակղութեան (անկարելի է որ զայթակղութիւններ չպատահին) բայց վա՛յ այն մարդոյն յոյր ձեռն գայցէ»: «Եթէ մեղիցէ եղբայր քո... ասալիք յեկեղեցւոջ»: Կը նշանակէ որ Եկեղեցիի մէջ մեղանշողներ պիտի ըլլան, որոնք ասկաւին մեր եղբայրներն են, մինչև որ այն աստիճան անուղղայ մնան որ այլևս մեղի համար «հեթանոսի» պէս ըլլան. այսինքն Եկեղեցիէն դուրս մնացողներու կարգին անցնին: Ս. Օգոստինոս կ'ըսէ. «Կ'ընդունինք որ Եկեղեցիի մէջ չարեր և բարիներ կան. չարերը յարդ են, բարիները՝ ցորեն»: Ապաշխարութեան խորհուրդի գոյութիւնը ինքնին կ'ենթադրէ մեղաւորներու գոյութիւնը Եկեղեցիի մէջ, վասնզի մեղաւորաց համար հաստատուած խորհուրդ մըն է այն:

Աւետարանի Յորենի և Որոմի ինչպէս նաև ծովի մէջ նետուած Ուռկանի առակներն ալ կը հաստատեն այս իրողութիւնը: «Բագումք են կոչեցեալք, սակաւք են ընտրեալք»:

Այս լայն փակազիծը բացինք լոկ ըսելու համար որ Եկեղեցիի Սրբութիւնը և անդամներէն ոմանց մեղաւոր եղած ըլլալու իրողութիւնը իրարու չեն հակասեր, ինչպէս պետութեան մը հպատակներու մէջ վխտացող զոյբերու, կաշառակերներու և մարդասպաններու գոյութիւնը պետութեան արդարադատութեան վրայ չազդեր որքան ատեն որ ան վերոյիշեալները յանցապարտ կը նկատէ և կը պատժէ:

ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ԿՈՐՄՆՅՆԷ ԻՐ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

ԱՇԽՈՐՀԻԿ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԼԾՈՒԵԼՈՎ. —

Եկեղեցին նախ Սուրբ է իբրև մաքուր և անարատ կազմակերպութիւն. որովհետև Սուրբ է իր Հիմնադիրը, Յիսուս Քրիստոս: Սուրբ է իր նպատակը, որ է սրբացնել իր անդամները: Սուրբ են միջոցները զորս կը կիրարկէ իր նպատակին հասնելու համար, այսինքն Ս. Խորհուրդները և սրբազան պաշտա-

մուսըրը : Սուրբ է եկեղեցին որովհետև Աստուծոյ Սուրբ Հոգին իր մէջ կը բնակի : Ըստ այսմ ի հնուամե եկեղեցիի անդամները «Սուրբ» կը կոչուէին : «Ողջոյն տալիք ամենայն սրբոց... ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք, մանաւանդ որ ի տանէն կայսեր են» : Մեր շարականները լեցուն են եկեղեցիի սրբութեան գովքերով . «Սուրբս լեր սուրբ եկեղեցի» . «Խորան սրբութեան կանգնեցաւ սուրբ եկեղեցի» :

Եկեղեցին Սուրբ է նաև երկրորդ իմաստով : Աշխարհի բոլոր ընկերութիւններէն զատուած է ան ծառայելու համար աստուածային վեհագոյն նպատակի մը : Առաքեալը կ'ըսէ . «Ընտրեաց զմեզ (Աստուած) . . . լինել մեզ սուրբս և անարատս առաջի նորա սիրով» : «Գուք (հաւատացեալներդ) ազգ էք ընտիր, քաղաւորութիւն, քաղաք, ժողովուրդ սեպհակալ» : Հետևաբար երբ եկեղեցին նոյնանայ աշխարհիկ ուրիշ ընկերութեանց հետ, և անոնցմէ մէկը դառնայ, կը դադրի սուրբ ըլլալէ : Ու երբ այսպէս կորսնցնէ իր հիմնական մէկ յատկանիշը՝ ան կը դադրի խորքին մէջ «Աստուծոյ եկեղեցի»ն ըլլալէ :

Եկեղեցին իր սրբութեան դէմ զործած կ'ըլլայ եթէ իրեն համար սահմանուածէն քարեր նպատակներու ծառայէ, հոգ չէ թէ որքան «անմեղ» և «օգտակար» համարուին անոնք : «Նպատակն է որ տրուած կազմակերպութեան մը տեսակը և ինքնութիւնը կը ճշդէ, և անոր, այսինքն նպատակին, հաւատարմօրէն զործադրութիւնն է որ առաջը կ'անեն թեքումներու և այլատեսութեան», կ'ըսէինք այս էջերէն ուրիշ առիթով մը : Եկեղեցին եղած է մարդիկը իրենց յաւիտենական ճակատագրին, իրենց փրկութեան առաջնորդելու համար : Եթէ եկեղեցւոյ բարձրաստիճան պաշտօնեայ մը, կամ եկեղեցիի վարչական ղեկը իրենց ձեռքը ունեցող մարդիկ շեղեցնեն եկեղեցին իր այս յաւիտենական նպատակէն և լծեն զայն ուրիշ նպատակներու, այդու իրենց իրաւասութեան ներքև գտնուած եկեղեցւոյ հատուածը կը զրկեն իր սրբութեան յատկանիշէն, կ'եղծեն իրենց յանձնուած եկեղեցական այդ հատուածին իսկական նկարագիրը և զայն կը վերածեն ունէ «անսուրբ» այսինքն աշխարհիկ կազմակերպութեան . . . :

ԻնՖնԻՇԽԱՆ Է ԵԿԵՂԵՑԻՆ .—

Եկեղեցին քաղաւորական, մարգարէական և քաղաքական կոչումներ ունի : Թաղաւորական՝ որովհետև ինքնօրէն, ինքնիշխան, անկախ կազմակերպութիւն մըն է, որ իր անդամները մեղքի և ինկածութեան բռնակալութենէն և ստրկութենէն սրբութեան և հոգեկան ազատութեան կը կանչէ : Եկեղեցին Աստուծոյ թագաւորութիւնն է :

Իր մարգարէական կոչումն է ազատ-համարձակ և անկաշառ կերպով քարոզել ճշմարտութիւնը : Խաբանել և դատապարտել ամէն տեսակ անարդարութիւնները և կրօնական պողտնութիւնը, այսինքն ճշմարիտ Աստուածը ձգելով սուտ աստուածներ, մամոնան, եսը և հաճոյքը պաշտելը : Մարդկային յիմարական տգիտութեան դիմաց գոչել յանուն Աստուծոյ . «Մանեաւ եզն զստածիշ իւր (զինք խնամողը), և էշ զմտուր տեառն իւրոյ . . . բայց ժողովուրդ իմ զիս ոչ ծանեաւ : Վա՛յ ազգին մեղաւորի» : Եկեղեցիին քաղաքական կոչումն է միջնորդ հանդիսանալ Աստուծոյ և մարդուն միջև, սրբացնել իր անդամները Ս. Խորհուրդներու մատակարարութեամբ և աստուածային պաշտամունքով : Անոնք

որ մոռնալով Եկեղեցիի այս սրբազան կոչումները կը լծեն զայն քաղաքական, կուսակցական և այլ անհատական փառասիրական նպատակներու, Քրիստոսի անարատ հարսը օտար տէրերու ազախնութեան տալու սրբապիղծ մեղքը կը գործեն. ու եթէ չզղջան և չդարմանեն իրենց գործած մահացու մեղքը, նե-
րում պիտի չգտնեն «ոչ յայսմ աշխարհի և ոչ ի հանդերձելումն»:

Եթէ Եկեղեցին իր իսկական նպատակին ծառայէ, ըստ աստուածային խոստման՝ անպակասելի է, այսինքն պիտի տևէ մինչև ի կատարած աշխարհի. «Գրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն»: Այդու իսկ, այսինքն իր անպակասելի հանգամանքով իսկ, ինչ որ կապուած է Եկեղեցիին պիտի տևէ իր հետ միասին, ըլլայ այդ լեզու, զիր, զրահանութիւն, մշակոյթ, մինչև իսկ «ազգ»: Իսկ եթէ իր յաւերժական նպատակը թողլով ժամանակաւոր և կորնչական երևոյթնե-
րու ետևէն վազէ, պիտի կորսնցնէ նաև իր ունեցածը. «Ձի ամենայնի որ ունիցի՝ տացի և յաւելցի. և որ ոչն ունիցի՝ և գոր կարծեն թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ»:

Ստույգ է թէ Եկեղեցին իր զխաւոր նպատակին քովն ի վեր՝ յարակից գործեր ալ ունի, օրինակ ընկերային ծառայութիւն և մտաւորական մշակու-
թիւն: Բայց այս բոլորը կ'ընէ ոչ որպէս նպատակ, այլ իբրև միջոց իր հիմնա-
կան նպատակին: Ասոնք Եկեղեցիին կրօնական և բարոյական գործունէութեան քովն արգասիքներ են որոնցմէ կ'օգտուին հաւատացեալն ալ, անհաւատն ալ: Եկեղեցին եթէ վերածուի լոկ բարեսիրական կամ մշակութային կազմակեր-
պութեան մը, այնքան կը մերկանայ իր սրբութեան յատկանիշէն, սրբան պիտի մերկանար վերածուելով քաղաքական կամ կուսակցական ընկերութեան մը:

Եկեղեցին իր Սրբութեան յատկանիշին դէմ գործած կ'ըլլայ նաև եթէ ենթարկուի և գործիք զառնայ ուրիշ ունէ արտաքին իշխանութեան և իր ուղ-
ղութիւնը ստանայ անկէ: Եկեղեցին բացարձակապէս պերժ պէտք է ըլլայ աշխ-
կամ ձախէն եկող ունէ ճնշումէ և հովանաւորութենէ: Եկեղեցին ինքնիշխան և ինքնաբաւ կազմակերպութիւն մըն է Աստուծոյ հովանիին և իշխանութեան ներքև: Եկեղեցին Աստուծոյ իշխանութեան սահմաններէն դուրս կը հանուի, երբ Եկեղեցիի կարգ մը շրջանակներու պատասխանատու անձեր զայն կը դնեն խայտաբղէտ պատմութեաններ հազած այս ու այն կազմակերպութեանց հովանիին և հեղինակութեան ներքև: Ասիկա ստրկացնել է Եկեղեցին և կապուել իրմէ այն ազատութիւնը «որով Քրիստոս գմեզ ազատեցոյց»: Եկեղեցին «յազատութիւն կոչեցեալ է»: Բոլոր անոնք որոնք Եկեղեցին ստրկացնելու սրբապղծութիւնը կը գործեն՝ պատասխանատու են նախ առաջի Աստուծոյ որ կ'ըսէ. «Վայ մար-
դոյն այնմիկ յոյր ձեռն զայցէ զայթակղութիւն: Լաւ էր նմա թէ վէմ երկա-
նաքար կախէր զպարանոցէ նորա և անկանէր ի ծով»: Նման մարդիկ պատաս-
խանատու են նաև Եկեղեցիի բարձրագոյն իշխանութեան տռջև, որ հեղինակու-
թիւնն ունի «սատանային մասնելու» գանոնք:

Աշխարհի մէջ կրնան գտնուիլ կազմակերպութիւններ, որոնց ուղղութիւնը պատահաբար կրնայ ատեն մը զուգահեռ ընթանալ Եկեղեցիի ուղղութեան հետ: Նման երեւոյթներ սակայն ժամանակաւոր են և հետեւաբար Եկեղեցին պէտք չէ անոնց հետ դաշինք կնքէ, որովհետև անխուսափելիօրէն պիտի զան հան-
գրուաններ ուր աշխարհիկ կազմակերպութեան ուղղութիւնը պիտի ընդիլ Եկե-
ղեցիի բռնած ուղղութենէն: Նման պարագաներուն ստիպել որ Եկեղեցին դուրս

զայ իր գծէն և ընթանայ աշխարհիկ կազմակերպութեան հետ, զայն մոլորանքի և կորուստի առաջնորդել է: Եկեղեցին չէ շինուած աշխարհիկ ուղիներէն քալելու համար. երբ նման ճամբաներու մէջ մտնէ, հարկադրաբար պիտի առաջնորդուի այն կազմակերպութիւններէն որոնք մէջտեղ եկած են այդ ճամբաներէն միայն քալելու համար: Հետևաբար Եկեղեցին պէտք է պահէ իր անկախութիւնը և միշտ պէտք է մնայ իր Աստուածային հիմնադիրէն իրեն համար շինուած «Արքունական ճանապարհին» մէջ: Երբեք պէտք չէ հակի անց կամ ձախ, պէտք չէ նոյնացնէ ինքզինք այս կամ այն հոսանքին, այս կամ այն ուղղութեան հետ: Եկեղեցին ունի արդէն իր ուրոյն ուղղութիւնը: Եթէ հետապնդէ իրեն յատուկ եզոզ նպատակները, իրեն յատուկ եզանակներով, Եկեղեցին այդու իսկ կը պայքարի չարին զօրութեանց դէմ, ուր որ ալ ըլլան անոնք:

Մէկ է. ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ԹԷ՛: ԳԱՒԱՆԱՆԳՈՎ, ԹԷ՛: ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ. —

Եկեղեցիին միւս կարեւոր յատկանիշն է միութիւնը: Հայաստանեայց Եկեղեցին մէկ է ոչ միայն հաւատքով, ծէսով, Ս. Խորհուրդներով, այլ նաև մէկ է իր կանոնական օրէնքներով և իր նուիրապետական դրութեամբ: Իր կանոնական օրէնքները դրուած են Հայց. Եկեղեցիի բարձրագոյն հեղինակութիւնը ներկայացնող եկեղեցական ժողովներու կողմէ: Եթէ պէտք ըլլայ անոնց մէջ փոփոխութիւններ մտցնել կամ նոր կանոններ սահմանել, այդ պէտք է ըլլայ Եկեղեցիի միևնոյն բարձրագոյն օրկաններով: Եկեղեցիի լրութիւնէն ընդունուած և դարերու զօրծածութեամբ նուիրազօրծուած հիմնական կանոններու հակառակ մասնակի օրէնքներ սահմանել, կը նշանակէ խախտել Եկեղեցիի Միութիւնը:

Հայաստանեայց Եկեղեցին մէկ է նաև իր վարչական և նուիրապետական դրութեամբ: Իր ընդունած վարչաձևին համաձայն, Հայց. Եկեղեցիի մէջ զոյութիւն ունին ինքնավար քանի մը շրջանակներ: Այս ինքնավար Աթոռներու զոյութիւնը երբեք չեզոք է Հայց. Եկեղեցիի Միութիւնը, որովհետև նախ անոնք իրարմէ բոլորովին անջատ միաւորներ չեն, այլ մեծ ամբողջի մը անբաժանելի մասերն են: Երկրորդ՝ կանոնական որոշ օրէնքներով կապուած են անոնք Հայց. Եկեղեցիի կեդրոնական Աթոռին: Իւրաքանչիւր ինքնավար Աթոռին հեղինակութիւնը կը տարածուի իրեն համար սահմանուած շրջանակին վրայ միայն: Իր շրջանակէն դուրս զալ և իր հեղինակութիւնը տարածել ուրիշ Աթոռներու իրաւասութեան ենթակայ շրջաններուն վրայ՝ նախ բացայայտ հակա-կանոնական արարք մըն է. երկրորդ՝ հիմքէն կը խախտէ Հայց. Եկեղեցիի Մէկութիւնը: «Ինչ որ չէք ուզեր որ ուրիշներ ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս մի՛ ընէք»: Աւետարանական ծանօթ սուկեղէն խօսքին այս ժխտական ձեւին նկատառութիւնը գէթ կը սպասուէր անոնցմէ՝ որոնց մէջ տակաւին չէ մեռած մարդկային ամենէն տարրական ողջմտութեան զիտակցութիւնը, եթէ մեռած է մինչև իսկ Քրիստոնէական ոգին ու կանոնական և կարգապահական զիտակցութիւնը: Ինքնավար Աթոռներէն ոչ մէկը պիտի ուզէր որ իր քոյր նուիրապետական Աթոռներէն մին կամ միւսը ոսնձգութիւններ ընէր իր իրաւասութեան ներքև դրուած շրջանին մէջ: Նման փոփոխութիւններ, եթէ հարկ է ընել, պէտք է կատարուին փոխադարձ հասկացողութեամբ, և Եկեղեցիի Գերագոյն Իշխանութիւնը ներկայացնող ժողովական Մարմիններու կողմէ, և ոչ թէ ինքնազուլու:

Տրուած ըլլալով հանդերձ շրջանային ինքնավարութեան այս սկզբունքը, և ընդունելով հանդերձ ինքնավար Աթոռներու կանոնական դիրքը Հայց. Եկեղեցիի նուիրապետութեան մէջ, դեռ անխախտ կը մնայ այն միւս սկզբունքը որ պայման է Եկեղեցիի մը Մէկութեան. այն է՝ Մէկ Եկեղեցին մէկ զուխ միայն կ'ունենայ:

Երկզլխանի զործարանաւոր միութիւն մը անձանօթ է որքան իրաց բնական մարզին մէջ, նոյնքան և աւելի Մի Եկեղեցիին մէջ: Եթէ այսօր Քրիստոնէական աշխարհի մէջ «բազում Եկեղեցիներ» կան, պատճառն այն է որ «բազում զուխներ» կան: Գլուխին մէկ կամ բազում ըլլալն է որ կը ճշդէ մարմիններուն և կազմակերպութեանց մէկ կամ բազում ըլլալը: Հայց. Եկեղեցին եթէ կ'ընդունի որ Մէկ է, պէ՛տք է ունենայ Մէկ և ընդհանրական զուխ մը, այլապէս՝ կը խախտի Հայց. Եկեղեցիի Մի-ութիւնը:

Եկեղեցիի վարդապետական կամ դաւանաբանական Միութեան դէմ զործելը կը կոչենք հեռեկիկոսութիւն: Իսկ Եկեղեցիի վարչական Միութեան դէմ զործելը, այսինքն Եկեղեցիին մէջ երկուութիւն յառաջացնելը, կը կոչենք հեռնութիւն: Եկեղեցիին համար երկուքն ալ հաւասարալէս վտանգաւոր են և հետեւաբար՝ դատապարտելի: Վասնզի երկուքն ալ կը խախտեն Եկեղեցիի Միութեան յատկանիշը, և կ'եղծանեն անոր զիմազիծը:

Հայաստանեայց Եկեղեցին մէկ է և մէկ միայն կրնայ ըլլալ: Այս Միութեան մէջ մնալու համար անհրաժեշտ է ոչ միայն նոյն հաւատքն ու պաշտամունքն ունենալ այլ նաև անհրաժեշտ է ընթացաւ մէկ եւ նոյն կանոնական օրէնքներով: Անհրաժեշտ է մէջն ըլլալ միեւնոյն նուիրապետական եւ միեւնոյն Եկեղեցական-վարչական դրութեան զոր ունի Հայց. Եկեղեցին: Հայաստանեայց Եկեղեցիի նուիրապետութեան, հոգեւոր իշխանութեան բարձրագոյն զուխը Ամենայն Հայոց կաթողիկոսն է:

«Ամենայն Հայոց Կաթողիկոս» տիտղոսը կարևոր և հիմնական սկզբունքի մը արտայայտութիւնն է. Եկեղեցիի Միութեան յատկանիշէն կը բղխի այդ տիտղոսը: Հայց. Եկեղեցիի Միութիւնը «Ամենայն Հայոց կաթողիկոս»ի անձին մէջ կը մարմնանայ: Զայն նշկանելը կը նշանակէ խզուիլ, դուրս գալ, Հայց. Եկեղեցիի Միութեան սահմանէն: Շրթունքի սպասարկութիւն միայն կ'ըլլայ «ճանչնալ Ս. Էջմիածնի հոգեւոր հեղինակութիւնը» առանց ճանչնալու անոր հաստատեալ իրաւասութեան բովանդակութիւնը և սահմանը:

«Ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր աւերի, և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ»: Աւետարանական և պատմական այս ճշմարտութեան տխուր վիճակ մեր ազգային-քաղաքական պատմութիւնն է: Հայց. Եկեղեցիի բարձրագոյն իշխանութիւնը և Հայ Եկեղեցիի հարազատ զաւակները, արթննալով ահաւորութենէն վտանգին որ կը բացուի Մայրենի Եկեղեցիի ոտքերուն ներքև, թոյլ պէտք չէ տան որ վերոյիշեալ վճիռը իրականանայ նաև մեր Եկեղեցական պատմութեան մէջ:

ԿՐՕՆԵԱԿԱՆ

ՃԱՌ ԲԱՐՍԵՂ, ՀԱՅՐԱՊԵՏԻ

(Կը կարգացուի Աւագ Հինգուստի, Ս. Պատարագի ընթացքին)

Լսեցէք ինձ, զաւակներս, ու ես ձեզի՝
 իբրև սիրելի ու հարազատ սրգիններու՝ Տի-
 րոջ երկուզը պիտի սորվեցնեմ աննախան-
 ձաբար: Վասնզի հարկը կը ստիպէ զիս,
 ու վա՛յ է ինձ՝ եթէ չաւետարանեմ ու չը
 ծանուցանեմ թէ ի՛նչ է Աստուծոյ կամքը՝
 բարին և հաճելին ու կատարեալը: Եզեկիէլ
 մարգարէն միշտ կը զարհուրեցնէ զիս՝ երբ
 ա՛յսպէս կը խօսի քահանաներուն՝ Աստուծոյ
 կողմէ: «Որդի՛ մարդոյ, տեսուչ կարգեցի
 քեզ այդ Ժողովուրդին վրայ: Եթէ տեսնես
 եկող սուրը, և չազգարարես փողով, ու
 անոնք չզգուշանան, ու եկող սուրը ան-
 պատրաստ գտնէ օեւէ մէկը, անիկա իր ա-
 նօրէնութեան մէջ պիտի մեռնի, ու անոր
 արիւնը քեզմէ պիտի պահանջեմ»:

Արդ՝ սուրը զեհներն սպառնալիքն է,
 իսկ փողը՝ Աստուծոյ պատուիրանքը, զոր
 կը հաղորդեմ ձեզի ահաւասիկ, եղբայր-
 ներս: Ես մարդ եմ ձեզ նման, ու ա՛յ աւելի
 մեղքերու մէջ զլտորած, բայց որովհետև
 տեսուչ և խրատող կարգուած եմ ձեզի՝
 լալով ու սրտիս հռոտանքով և սիրով կը
 ներկայացնեմ ձեզի Աստուծոյ կամքը: Մի՛
 կարծէք թէ նորալուր կամ մտացածին խօս-
 քերով տազնապեցնել կ'ուզեմ ձեզի, վասն
 զի ստուգիւ ես ալ ձեզի համար հա՛յր պիտի
 տամ Աստուծոյ: Ատոր համար պարզ խօս-
 քերով կը զեկուցանեմ ձեզ հինչն ի վեր
 սուրբ հայրերէն աւանդուած կանոնները:
 Նախ զիտեցէք որ ոչ թէ հրեշտակներուն
 տրուեցաւ քահանայութեան պատիւը, վասն
 զի անմեղ են անոնք, այլ՝ մարդոց: որով-
 հետև ինչպէս որ մենք կը մեղանչենք ու
 թողութիւն կը յուսանք Քրիստոսէն, նոյն-
 պէս ալ ձեզի կուտանք թողութեան և ա-
 պաշխարութեան յոյսը: Ուստի կ'աղաչեմ
 որ համբերութեամբ լսէք ինձի ամէնքդ:

Ահա վերէն կը բացուի երկինքը, ու
 Քրիստոս իջնելով՝ կը բազմի այս սուրբ

սեղանին վրայ, ու երկինքի հրեշտակները
 երկրի վրայ կը ծաւալին աներեւութապէս
 ու կը բուրբուրեն այս սեղանին շուրջը. ըս-
 պասաւորելու համար Աստուածորդիին. և
 Սուրբ Հոգին իր բարիքներու շնորհները
 առատորէն կը բաշխէ սրբութեամբ մօտե-
 ցողներուն: Եւ արդ զուք, եղբայրներ,
 մեծ զգուշութեամբ և երկուզով մտածե-
 ցէք, ու տեսածնիդ միմիայն հաց ու զինի
 մի՛ նկատէք, այլ՝ այն մեծ խորհուրդը,
 որ ծածկուած է մարմնաւոր աչքերու տե-
 սութենէն, և որ միայն հոգիի աչքով կը
 տեսնուի անոնց՝ որոնք սրբութեամբ կը
 խնդրեն զայն, և որով կը սնանի հոգին և
 կ'ուրախանայ աստուածային ցնծութեամբ:
 Աստուած կրնար հում միսի ու արիւնի
 դարձնել զայն, ինչպէս պատահեցաւ սուր-
 բերէն մէկուն: Բայց որովհետև մեր զգայա-
 րանքները չեն կրնար հանդուրժիլ հում
 միսին ու արիւնին, այդ պատճառաւ հա-
 ցով ու զինիով տպաւորեց Աստուած, ուստի
 իբրև պարզ հացի մի՛ նայէք անոր, ու զինի
 մի՛ նկատէք զայն. որովհետև ասիկա Քրիս-
 տոսի ճշմարիտ մարմինն ու արիւնն է:
 չըլլայ որ մէկը սովորական ընդունելու-
 թեամբ ու արհամարհանքով իբրև դոյզն
 բանի մը մօտենայ, ասիկա կիզող կրակ է՝
 այրող ու սպառող մեղաւորներուն:

Ուստի հարկ է նախ սրբուիլ մեղքերէ
 ապաշխարութեամբ, որպէսզի մեր շատ
 մեղքերու պատճառով չայրինք կրակին
 մէջ, ինչու որ կ'այրին կը սպառին հոգի-
 ներն անոնց՝ որոնք չեն հեռանար մեղ-
 քերէ, ու կապուած կը մնան անոնց: Դարձ-
 եալ չըլլայ թէ մէկը յուսահատութեամբ
 հեռանայ՝ սնտոի երկիւղ պատճառելով՝
 այդ երկիւղը աւելի արհամարհանք է Աս-
 տուծոյ դէմ: Վասնզի ա՛ս է երկինքի ար-
 քայութեան դուռը, ու արքայութիւնն իսկ,
 որ է նոյնինքն մեր Աստուածը Յիսուս

Քրիստոս, ու սրբութեամբ մօտեցողները անջնջելի կերպով օրդեպիր կ'ընէ երկնաւոր Հօրը: Քրիստնալ պէտք է նաև՝ թէ հարազատ զաւակը հօրը նմանութիւնը կը բերէ իր վրայ և դու երբ կ'ըսես՝ «Հայր մեր որ յերկինս», ու խնդրուածք կը մատուցանես (երկնաւոր Հօրդ), արժան է որ անոր նմանութիւնը փայլեցնես անձիդ վրայ, որ պէտքի լսուի խնդիրքդ, իսկ եթէ կատարեալ ու բարեբար երկնաւոր Հօրը նմանութիւնը չունենաս՝ այն ատեն չի լսեր քեզ, ու չի խոնարհիր քու ազաչանքիդ, այլ կը լսէ միայն սանդարմետը բնակող չարին հայրը, որուն գործերուն կը նմանին քու գործերդ ալ:

Այժմ իմանալով զայս՝ հեռու վանեցէք ձեր անձերէն չարութիւնն ու ամէն կերպ խարդախութիւնները: Արտանց ներեցէ՛ք ձեր եղբայրներուն յանցանքին, ու վերցուցէ՛ք ձեր մէջէն խէթն ու ատելութիւնը, որպէսզի դուք ալ ողորմութիւն գտնելով երկնաւոր Հօրմէն՝ արժանի ըլլաք այս պատարագին: Հեռու թող ըլլայ ձեզմէ անհաւատութիւնը, խղճի արատն ու թերահաւատութիւնն, ու ասոնց նման բաներ: Անջնցէ՛ք ձեր մէջէն նախանձը, նենգութիւնը, չարութիւնը, կեղծաւորութիւնը, հպարտութիւնը, ամբարշաւածութիւնը, մարդահաճութիւնը, հակառակութիւնը, սխը, վաշխը, տոկոսը, ու ամէն չարիքներու արմատ՝ արծաթասիրութիւնն ու ազահութիւնը, կանացի փաթեթանքներն ու կախարդական դեղերը, ամէն տեսակ չար խօսքերն ու թշնամութիւնը, ցանկապէս կիրքերը, մանաւանդ ձեր բերնէն ելած տգեղ ու արեղծ հայհոյանքները՝ որով կը նախատէք զիրար, և անօրէն կռակաշտութիւնը և անկարգ ու անառակ մոլորութիւնները, զորս յիշելն անգամ կ'ապականէ ու կ'աղտոտէ միտքերը, նախ իրը՝ ու ապա լսողներունը. վասն զի գատատասնին օրը պիտի օրդնոտին զանոնք յեղիեղող զարշիլ բերանները, վասն զի Տէրը ինքն ըսած է. «Ով որ մօրոս կ'ըսէ եղբօրը՝ պարտաւոր պիտի ըլլայ գեհննի կրակին» . արդ պէտք է արմատախիլ ընել այդ բանը մեր մէջէն:

Թ՛ող չըլլայ այսուհետև ոչ մէկը շնացող, պոռնիկ, արուագէտ, զոռ, յափըշտակող, գիճացող, օրովայնամուլ, արբեցող,

չարակամ, չարայոյզ, սպաննող, խռովարար, անողորմ, բանասարկու, պիղծ, թըշնամանող, երդում ընող, օխտադրուծ, անօրէն, անիրաւ, բամբասող և ուրիշ մեղքերու տէր, վասնզի կան մեղքեր որոնք մահու չափ են, զորս արժանի անգամ չեմ համարիր յիշել այստեղ: Այս բոլորէն վերջ ոչ ոք չհամարձակի հերձուածող ըլլալ: Այս ըսելով՝ կը պատուիրեմ որ հին մարդը բոլորովին մէկ զի ձգէք իր ամէն չար գործերովը: Այլ զգատատնալով՝ եղէք ամէնքդ պարկեշտ, սուրբ, խոհեմ, հեզ, քաղցր, անոխակալ, խաղաղարար, ողորմած հիւանդներու և վշտացեալներու հանդէպ, զթացող եղէք տնանկներուն, աղքատներուն և կարօտներուն նկատմամբ, զարդարուեցէք ամէն առաքինութիւններով, սիրով, հաւատքով, յոյսով, ու կատարեալ սէր ունեցէք Աստուծոյ և մարդոց հանդէպ, վասն զի ամէն առաքինութեանց լրումը, սէրն է՝ բխած սուրբ սիրտէ ու անկեղծ հաւատքէ:

Պատուեցէ՛ք ձեր հայրերն ու մայրերը, սիրեցէ՛ք ձեր կիները իրեն ձեր անձերը, և դուք կանայք՝ հնազանդեցէք ձեր այրերուն իրեն Տիրոջ. ամէնքդ ալ երկիւղ ունեցէք Աստուծմէ ու պատուեցէք և սուրբ պահեցէք կիրակի օրը: Երիտասարդներ և կոյսեր, սիրեցէք սրբութիւնը, որպէսզի այս սրբութիւնը ընդունելով՝ լուսաւորուիք լուսափայլ հայելիի նման, որուն մէջ կը ցոլան արեւին ճառագայթները: Առաքինութիւններու մէջ աճեցէք և ապրեցէք սրբութեամբ, որպէսզի առաքեալին խօսքին համեմատ չգատապարտուիք, վասնզի անարժան հազարգութեանէ առաջ կուգան շատ մը անտանելի ցաւեր ու նեղութիւններ, բորոտութիւններ և այլն: Չըլլայ որ մէկը կեղծաւորելով ներս մտնէ եկեղեցիէն և դուրսը կեցողները կարծեն թէ հազարդուողներէն մէկն է անիկա. վասնզի երկմիտը հեռու է Աստուծմէ, ու Աստուծ չի փորձուիր: Մարդոցմէ գալիք ամօթէն մի վախճաք, ինչու որ այդ ամօթը բան մը չէ, այլ գատատասնի օրը կրուելիք ամօթն է մեծագոյն ամօթը: Ինչ որ հիմա կը պահես ինձմէ և չես խոստովանիր ու չես ապաշխարեր, հոն հրապարակաւ պիտի յայտնուի մեծ գատաւորին առջև, և ուր ոչինչ պիտի կրնաս պահել. վասնզի քու հոգիդ ինքնին գատախապ պիտի ըլլայ քեզի:

“ՔԱՆՁԻ Ի ՍՄԱ. ԾԱԳԵԱՅ ՄԵՁ ԼՈՅՍ”(*)

Այսօր գահակալութեան տարեդարձի տօնն է Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին: Մեզի համար, բոլոր հայոց համար, որոնք իրենց սրտին մէջ Ս. Լուսաւորչի տեսած լոյսէն շող մը ունին, բոլոր անոնց համար որոնց մտքին մէջ Ս. Լուսաւորչի քերած լոյսը կը ճառագայթէ, անոնց համար տօն է այսօր:

Աշխարհիկ իշխանութիւններ հանդիսաւորապէս կը տօնեն իրենց թագաւորին գահակալութեան տարեդարձը, ինչպէս մենք Յորդանանի մէջ կը տօնենք մեր Վեհապետի Հիւսէյն Թագաւորի գահակալութեան տարեդարձը: Այսօր գահակալութեան տարեդարձն է մեր հոգևոր իշխանին, որ մեր Վեհափառն է: Եւ «հոգի առաւել է քան զմարմին»: Հոգևորը ան մեր բուն, ազնուական էութիւնը կը կազմէ: Այս պատճառով կարևոր է մեր եկեղեցիին համար այսօր տօնախմբութիւնը:

Ասկէ 1600 տարի առաջ հաստատուած Ս. Լուսաւորչի Գահը դեռ կը մնայ կանգուն և իր գահակալին ունի: Ս. Լուսաւորչի և անկէ առաջ Ս. Թագչեսի և Բարթողիմէոսի

հաստատած էջմիածնի այս Աթոռը երկար դարերու ընթացքին ի՛նչքան հարուածներ ընդունեց, և ի՛նչ մրրիկներու և փոթորիկներու խաղալիք դարձաւ, ի՛նչ վիշտեր անոր սիրտը խոցեցին՝ ի տես հայ ժողովուրդի կոտորածին, ջարդին և աշխարհի չորս կողմերը ցրումին: Քանի՜ քանի անգամներ սարսեցաւ, բայց այնուհանդերձ տակաց ստալժու չի նար էջմիածինը՝ և կանգուն մնաց և տակաւին կանգուն կը մնայ մայր հողի վրայ: 1600 տարիներէ ի վեր կանգուն կը մնայ ոչ թէ միայն շէնքը և Աթոռը, այլ այդ գահին վրայ կը նստի այսօր պատուական Կաթողիկոս մը, որ կը շարունակէ այն գործը զոր Լուսաւորչի սկսաւ: Եւ վեր կը բռնէ այն ջահը, զոր իր տեսած լոյսէն վառեց մեր երկրորդ Լուսաւորչի: Եւ հին հին դարերէն արձագանգող Ս. էջմիածնի հոգևտաւիզ քնարը՝ կը նուագէ ի լուր աշխարհի չորս կողմը ցրուած և Մայր Հայրենիքի մէջ բնակող հաւատացեալներու ախանջին:

Այս մտածումը առաջին պատճառն է, որուն համար ուրախ ենք այսօրուան տօնախմբութեամբ:

(*) Քառա՛ խօսուած Ս. Յակոբեանց սահաբն մէջ, Կիւսիքի օր, Հոկտեմբերի 6ին, Ն. Ս. Օծուրիւն Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի Օծման Բ. Տարեդարձի առիթով, Ամեն. Սրբազան Պատրիարք Զօր կոչմէ:

Արդ, ան՝ խօսեցայ ձեզի ամէն բան առանց քաշուելու, ասկէ ետք անպարս եմ ես. ձեր արիւնը ձեր գլխուն. քաւուած եմ ես ձեր արիւնէն. վասնզի այսչափ պարտականութիւն միայն դրուած էր իմ վրաս: Բայց ես գիտեմ որ ձեր մէջ կան այնպիսիներ՝ որոնք արժէք չեն տար ըսածներուս. այդ պատճառաւ վկայ կը բունեմ ձեզ քեմիս վրայէն այսօրուան ձեզի խօսածներս. իսկ դատաստանի օրն ալ Քրիստոսի բեմին առջև պիտի յիշեցնեմ զանոնք ձեզի՝ վկայ բռնեմ իմ այս սուրբ Աւետարանս. այն ասան արհամարհողը այլևս պիտի չկրնայ արհամարհել. այլ պիտի կշտամբուի ու պիտի պատուհասուի ու անմար կրակը պիտի զրկուի:

Այժմ կը վերջացնեմ խօսքս, վասն զի ինչ որ անհրաժեշտ էր ըսել այս սուրբ խորհուրդին առթիւ՝ պարզեցինք ձեզի հա-

մառօտի և ըստ պատշաճի: Արդ, անոնք որ կը հաղորդուին արժանաւորապէս ու զարդարուած կ'ըլլան բարեկործութիւններով՝ Պետրոսին ու միւս առաքելներուն հետ պատուուելով կը պսակուին Քրիստոսէն ու մեր Աստուծէն. իսկ անոնք որ ապստամբութեամբ կը հաղորդուին՝ նորէն թաշը կը հանեն Աստուծոյ Որդին, ու անոնք որ լրբենի երեսով ու անարժանութեամբ կը հաղորդուին՝ մասնիչ Յուզային ու խաշը հանողներուն մասն ու բաժինը կ'ընդունին. ձեր օգուտը դուք գիտէք: Եւ Հոգին Սուրբ, որ բնակարան է սուրբերու և ազբիւր է ամէն բարեքներու, մաքրէ ձեր հոգիներն ու մարմինները, ու փրկական խորհուրդիս հաղորդուելով՝ թողութիւն շնորհէ ձեր մեղքերուն. որուն՝ Զօր ու Միածին Որդւոյն և մեր Տէր Յիսուսի Քրիստոսի հետ փառք յաւիտեանս. ամէն:

Երկրորդ պատճառը մեր ուրախութեան
 այն է որ մեր Հայրապետը շինարար Կաթո-
 ղիկոս մը կը հանդիսանայ: Ան լծուած է
 տեղագրին աշխատանքի Ս. Էջմիածինը և
 Հայաստանի մէջ մեր Եկեղեցին վերականգ-
 նելու և պայծառացնելու: Զգոհացաւ մի-
 այն Աթոռին վրայ բազմելով և իր շուրջ
 զիտելով: Այլ լծուած է գերազանցապէս
 կենսական իր հոգևոր գործին, Եկեղեցւոյ
 զօրացման և պայծառացման համար: Կը
 ճգնի ան Մայր Հայրենիքին մէջ Եկեղեցւոյ
 կեանքը վերստին արժարծելու, այն կեանքը
 զոր ան ունէր անցեալին: Իրբև վերին հո-
 գևոր հայր՝ իր նայուածքը կ'երկարէ նաև
 արտասահմանի հայերուն վրայ, որպէսզի
 Աստուծոյ հանդէպ մեր հաւատքը զօրաւոր
 և ուղիղ մնայ:

1917ի սուսական յեղափոխութենէն
 ասդին, Եկեղեցին Սովետական Միութեան
 մէջ մեծ նեղութեանց և հալածանքի են-
 թարկուեցաւ: Անաստուած համայնավար
 կազմակերպութիւններ աշխատեցան որ
 վերջ տան Քրիստոնէական Եկեղեցիի գո-
 յութեան իրենց երկրի սահմաններէն ներս:
 Կրօնքը ծաղրեցին, Եկեղեցականները հա-
 լածեցին և անօթի ձգեցին: Եկեղեցիներ
 գոցուեցան և հաւատացեալներ Ս. Խոր-
 հուրգի մխիթարութենէն զրկուեցան: Բայց
 մարդոց մտքերուն և հոգիներուն մէջ գոյու-
 թիւն ունեցող Եկեղեցին մնաց կանգուն:
 Եղաւ ժամանակ մը՝ երբ համայնավար իշխա-
 նութեան տիրապետութեան ներքև գտնուող
 երկիրներուն մէջ Եկեղեցին դադրեցաւ տե-
 սանելի ըլլալէ: Սակայն մարդոց հոգիներ-
 րուն մէջ Աստուծոյ և Տէր Յիսուսի սէրը
 չանհետացաւ: Տարիներ հաջ, Եկեղեցւոյ
 և կրօնքի հակառակորդները տեսան՝ թէ
 կրօնական զգացումը չէ կարելի ջնջել հո-
 գիներու մէջէն: Ով զիտէ, թերևս իրենց
 համար խելացութիւն սեպեցին արտօնել որ
 Սուրբ Եկեղեցին շարունակէ իր յաւիտե-
 նական ճամբան: Այսօր, այս իրողութեան
 պատճառաւ, մեր պատուական Հայրապետը
 առիթը գտած է, օգտուելով պետական
 թոյլտուութենէն, ծաղկեցնելու Էջմիածնի
 Հոգևոր Ճեմարանը, շէնցնելու Էջմիածինը
 և Աստուծոյ խօսքը վերստին հնչեցնելու
 հաւատացեալներու հոգիներուն մէջ: Վե-
 հափառ Հայրապետը սկսած է արդէն նոր
 և երիտասարդ ոյժեր զրկել թեմերը, մխի-

թարելու համար ժողովուրդը, աննց հո-
 գիին և սրաին մէջ պայծառ պահելու հա-
 մար այն մեծ լոյսը, զոր մեր հաւատքի
 Հայրը Ս. Գրիգոր Լուսաւորիչ տեսաւ բա-
 զում դարեր առաջ: Հետեարար ուրախ ենք
 որ մեր Հայրապետը հոգևոր այս մեծ գոր-
 ծին լծուած է, օգտագործելով առիթը և
 գործածելով ահէն կարելիութիւն Հայաս-
 տանեայց Եկեղեցին պայծառացնելու: Ըրծ-
 ուած է աշխատանքի, որպէսզի հաւատքի
 լոյսը մեր Հայրենիքին մէջ և արտասահ-
 մանի մէջ պայծառ մնայ: Էծուած է ան-
 աստուածութեան դէմ պայքարի, թէ՛ մայր
 երկրէն ներս և թէ՛ անկէ դուրս՝ ուր որ իր
 ձայնը կրնայ լսուիլ: Այդ պայքարին զին-
 ուորներն ենք և պէտք է ըլլանք մենք ևս:

Մեր ուրախութեան պատճառներէն մէկն
 ալ այն է՝ որ մեր Հայրապետը իմաստուն,
 և խոր հաւատքով և սուրբ նախանձախն-
 դրութեամբ լի քրիստոնեայ հովուապետ մըն
 է, զարգացած, խանդավառ, Ազգին և Եկե-
 ղեցիին հոգևոր վերելքին նկատմամբ լա-
 ւատես: Մեր ազգը շատ բախտաւոր պէտք
 է զգայ ինքզինքը, որ Աստուած յարոյց այս
 ճգնաժամային օրերուն Վաղգէն Կաթողի-
 կոսին պէս անձ մը Ս. Լուսաւորչի Աթոռին
 համար: Ծատ երջանիկ պէտք է զգանք
 մենք զմեզ, որ փոխանակ ուրիշ մը՝ զինք
 յարոյց, որպէսզի ուղիղ վարդապետու-
 թեամբ հովուէ իր ժողովուրդը:

Այս պատճառներով այսօրուան մեր տօ-
 նախմբութիւնը իմաստալից կը դառնայ: Եւ
 գահակալութեան այս տարեդարձը առիթ
 մըն է մեզ համար որ անդրադառնանք այն
 պարտականութեան, զոր արտասահմանը
 ունի հանդէպ Տ. Տ. Վաղգէն Կաթողիկո-
 սին, մեր Ընդհանրական Հայրապետին:
 Պէտք է գիտնանք որ 1600 տարիներու ըն-
 թացքին, երբ հովեր ու փոթորիկներ Ս.
 Աթոռը տեղէ տեղ նետեցին, Գուրնէն մին-
 չև Հոսովկայ, մեր ժողովուրդը չդադրեցաւ
 երբք իր աչքը յառելէ այն լոյսին՝ զոր Ս.
 Լուսաւորիչ տեսաւ, երբ այդ լոյսը ճառա-
 գայթեց Ս. Գերեզմանէն մինչև Վաղարշա-
 պատ: Այդ լոյսը միշտ վառ պահեցին մեր
 Ս. Հայրապետները, հակառակ այն իրողու-
 թեան՝ որ ժամանակներ եղան երբ Մայր
 Աթոռը ի սպառ կորստեան վիճին եզերքն
 հասաւ: Եղան ժամանակներ երբ անարժան
 մարդիկ, նստած այնտեղ՝ նսեմացուցին ա-

նոր անունը: Բայց որովհետև գերազան-
ցապէս սուրբ և թանկագին էր անոր անունը
հայ ժողովուրդին համար, ժամանակաւոր
դէպքեր և դժբախտութիւններ չկրցանքնա-
կանարար հինաւուրց այդ հաստատութեան
հիմերը քայքայել: Եւ էջմիածինը կը մնայ
յաւիտենական և անխախտ: Հայ ժողովուրդի
հարազատ զաւակները իրենց հոգիին աչքե-
րը պէտք չէ երբեք շեղեցնեն ուրիշ կողմ:
«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաս-
տան աշխարհի» ինչպէս կ'ըսէ շարականը:

Արեւելեան Եկեղեցիներուն մէջ, զի-
տենք որ իւրաքանչիւր ազգային եկեղեցի
իր պետն ունի: Յոյն Եկեղեցին ունի տասն
և վեց ինքնավար եկեղեցական Աթոռներ,
նոյն հաւատքի, նոյն խորհուրդներու և
կանոններու հոգևոր միութեան մէջ, ա-
նոնցմէ իւրաքանչիւրը ինքնավար վար-
չութիւն մը ունի տուեալ երկրամասի կամ
ազգային ամբողջութեան մը շրջանակին
մէջ, նոյն դրութիւնը ունին նաև արեւելեան
միւս Եկեղեցիները զանազան երկիրներու
մէջ: Զանազան ազգակներ տարբեր միու-
թիւններու վերածած են զանոնք որուն հե-
տեւանքով ինքնավար դարձած են: Այդ
ազգակները ի զօրու կը մնան տակաւին
այսօր: Այս պատճառաւ Արեւելեան Եկե-
ղեցիները չունին այն վարչական դրութիւնը
զոր ունի Հռոմի Եկեղեցին:

Էջմիածնի Կաթողիկոսը հին օրէնքնե-
րուն համաձայն իր որոշ իրաւասութիւնները
ունի համայն Հայաստանեայց Եկեղեցւոյ
վրայ: Այս իրաւասութիւնները կը յարգենք
և պէտք է յարգենք ամէնքս: Մեր Եկեղե-
ցին ալ աշխարհագրական բաժանման հիման
վրայ՝ ունի չորս պատմական Աթոռներ:
Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, Երուսաղէմի և
Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնները և «Կիլիկի-
եան» Կաթողիկոսութիւնը: Այս Աթոռները
իրենց ինքնավարութիւնը կը պահեն Ս.
Էջմիածնի գերագահութեան ներքե: Այս
դրութիւնը շատ դարերով օգտակար եղած
է Հայ Եկեղեցիին, որ մեր ներկայ իրա-
դրութեան մէջ աշխարհի չորս կողմերը
ցրուած է: Մեր Եկեղեցին, աւելի քան եր-
բեք օրէէ ատեն մեր պատմութեան մէջ՝
պէտք ունի հոգևոր միութեան, որ Ս. Էջ-
միածնով իրական կը գտնայ:

Մենք կրնանք ըլլալ և պէտք է ըլլանք
հարազատ և լաւ քաղաքացիները տարբեր

երկիրներու, ուր կ'ապրինք. ընկերային,
անտեսական, և մինչև իսկ մշակութային
տեսակէտէն պիտի միացնենք և համակար-
գենք մեր կեանքը մեր գտնուած երկիրնե-
րու քաղաքացիներուն կեանքին հետ: Այս
բանը արդէն կատարման ճամբուն մէջ է
ներկայիս: Այնուհանդերձ այս իրողութիւնը
պատճառ մը չէ որ քակուի և քայքայուի
այն շաղախը որ զմեզ կը կապէ մեր անց-
եալին և իրարու, հոգ չէ թէ ո՞ր երկրի
քաղաքացիները եղած ըլլանք և աշխարհի
որ կողմը հաստատուած ըլլանք:

Չմոռնանք այն լոյսը զոր Ս. Լուսաւո-
րիչ վառեց Հայաստանի մէջ ի Ս. Էջմիածնի
և որմէ վառեցան մեր այն բազում կան-
թեղները, որոնք կը պլպլան հայ եկեղեցի-
ներու մէջ ի սփիւռս աշխարհի: Պէտք է
հաստատ գիտնանք թէ հոգևոր միութիւնը
վերացական բան մը չէ և պէտք չէ ըլլայ
մեզի, հայերուս համար: Պէտք է որ այդ
միութիւնը ըլլայ տեսանելի, շօշափելի, ի-
րական: Եւ Մայր Աթոռի պատուական և
սրբազնագոյն Գահակալը ցուցիչը, ներկա-
յացուցիչը, խորհրդանիշը և իրականացնողն
է մեր հոգևոր միութեան: Ան մեր զօրա-
վարն է որ մեր հոգևոր Զօրագլուխին, Յի-
սուս Քրիստոսի ներքև կը կուռի մեր հա-
ւատքին համար, Մայր Երկրէն ներս և անկէ
դուրս, և մենք ամէնքս անոր գնդապետ-
ները և զինուորներն ենք և մեր նպատակն
է օրաբոք պատերազմը պատերազմիլ, ըստ Առաքեալին, անհաւատութեան, սուտի,
բարոյական սնանկութեան, յուսահատու-
թեան և բաժանարարութեան դէմ: Պիտի
կուռինք՝ ինչ ալ որ բերեն տարիները, որ-
պէսզի հաստատուն ըլլայ մեր յոյսը և ա-
ռողջ ծառի մը նման կուրծք կարենանք
տալ մեր վրայ եկող փոթորիկներուն:

Այս է իմաստն ու նշանակութիւնը
այսօրուան հանգէսին:

Մաղթենք որ Տէր Աստուած երկար
կեանք տայ մեր Սրբազնագոյն Հայրապե-
տին՝ Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողի-
կոս Տ. Տ. Վազգէն Առաջինին. արդիւնա-
ւորէ իր ջանքերը ի պայծառութիւն Մայր
Աթոռին և Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ
և պայծառ և խաղաղ և բարգաւաճ պահէ
մեր Ս. Եկեղեցին և Աստուծոյ շնորհը
անպակաս ըլլալ մեր պատուական ժողո-
վուրդին և մեր ամենուս վրայէն. ամէն:

Ա Ղ Օ Թ Ք Վ Ա Ս Ն Հ Ա Յ Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Տէր, պահէ՛ Տունը հրաւակե՛րս, ոյր կառոյցին կազմն ու ծիր
 Փողփողե՛նէջ լոյսիդ շողովը դուն ինճնին գրծեցիր,
 Ու կամեցար որ փոքրիկ Հօսրդ զայն ընէ ապաստան
 Խարխլած կեանքին իր եւ հոգւոյն՝ իբրեւ Տապան փրկութեան:
 Փութա՛, հասի՛ր, այցելութեան ժամ է արդ, Տէր ապաւէն,
 Տե՛ս վիճես ու մահ, աղէ՛սն ու չարն ի՛նչպէս իր դէմ կը դաւեն:

Փըրթած՝ ժայռէն ան իր հիմքին, զերդ հողմակոծ նաւ մը մութ՝
 Մերք լոյծ լեռանց բարձրերը, մերք դէպի անդունդ խորամաս,
 Ցասկոս ու խօշ կոհակներուն մէջ կը ծեծուի տարութր,
 Մինչ հրգորները ափունքէն զայն կը դիտեն անտարբեր:
 Կարկառէ՛ աչքդ, Տէր, փրկէ՛ զայն խութրէ՛, հէ՛նրէ՛,
 Թ՛ո՛ղ խաչանիւ խարխսխիդ տեսր իր մէջ Յոյսըդ հրահրէ:

Հրա՛ւժ. չէ խըլուած դեռ անօր կայմը իր կայէն ամրակուռ,
 Չէ պատրոսած առագաստին դեռ քրոչարանը մափուր,
 Չեն յօռնուած կապարանները հաստապինդ զիստրուն,
 Չի դեռ դէկին դամբարն — Հաւասքը — կը հեւայ մէջն անմուն:
 Բայց կը գոռայ մըրքիկն իր շուրջ, մաւայն է պատեր իր չօրս դին.
 Խաղաղութեան Տէր, շունչըդ լոկ կրնայ սաստել անդունդին:

Խարակներ բուխ, զերդ գազաններ յուշկապարիկ, փրփրազայր
 Յորձանքներէն յանկարծ ցըցած դուրս գլուխներնին բազմասայր,
 Կը մըղձկոտեն սիրտերն անոնց որ հոն մըքնած երկնից տակ
 Կը գալարուին զահանգանքովը վիհերուն անյասակ:
 Տէր սիրոյ, ոյր սքրտին ծնունդն է ամէն ինչ որ է բարի,
 Պիտի ներե՛ս որ ողջ ազգի մ՛հոգին այսպէս խաւարի:

Հրամայէ՛, եւ պիտի ալեաց կիրքերն ադի խաղաղին,
 Ու նաև յոյսիդ առասանով պիտի զըքնէ իր ուղին.
 Պասռէ՛ քրխպոս ամպերուն դէզն, որ կը ծածկէ հորիզոնն,
 Որ ան տեսնէ նոր գարունի մը փառքերուն ծաղկիլն հոն:
 Տէր գրքութեան, սիրտերն ամէն, բերերն ամէն դէպի Քեզ
 Են սեւեռուած, քաղցր ակնարկիդ ըսպասումովն ըզձակէզ:

.

Ազգ Հայոց, ազգ իմ սիրական, պահէ՛ Հաւասքդ, Յոյսդ ու Սէրն,
 Աստուծային Հոգւոյն բըղխումնն երեւակ այդ սուրբ սերս եւ սեռն.
 Պիտի կանգնի իր հիմունքէն սասանած Տունը նորէն,
 Պիտի բերկրին անօր ի տես դարձեալ սիրտերն համօրէն,
 Փըրած չէ գահը. չէ կոտրած մականը սուրբ. ողջ եւ դեռ.
 Սըրբէ՛ արցունքդ, հայէ՛ երկինք. ամպն է արդէն փարատեր:

Թ.

Կ Ե Ա Ն Ք Ը

Տարիներն անցան .	ձրագներ էին .
Կրակներ էին .	Իսկն ըսպանեցաւ .
Մոխիրը մընաց :	Խաւա՛ր է հիմա :
Ծաղիկներ էին .	Ա.կօսներ էին
Թեթեւ հովին մէջ	Հասկերով ծրփուն .
Բոյրը ցնդեցաւ :	Հունձը վերջացաւ :
Համբոյրներ էին ,	Ու ոսկեհնչուն
Անոնցմով հոգիս	Ծնծղաներ էին .
Արբեցաւ գաղտնի :	Լըռեցին վաղուց :
Մատաններ էին .	Ցնծերգներ էին .
Էջերը դարձան	Մընացեր է սոսկ
Մահուան ձեռքին սակ :	Լար մը հեծեծուն ...

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Գ Ե Ր Զ Գ Ս Յ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Քարգամ վ.դ. ին

Աւխարհի դիմաց
Սիրքս՝ նորէն բաց .
Արդէն բաց է միս ,
Բայց հիմա այնքա՛ն
Ան խոր է ու լայն ,
Որ բոլոր մարդոց
Խինդն , երազն ու վիս
Իր մէջ է առած ...

Սիրս՝ մայրական ծոց ,
Ամենուն դէմ բաց ,
Ծաղիկին , ծառին ,
Հողին ու ֆարին ,
Ճիչերուն մանկանց ,
Զանգերու կանչին ,
Հովուն աւաչին ,
Ու բոլոր մարդոց ,
Բարիին , չարին :

Մ. ՄԱՆՈՒԿԵՍՆ

Ա Չ Բ Ե Ր Ն Խ Ո Ր Ո Ւ Ն Կ Գ Ի Շ Ե Ր Ո Ւ Ա Ն

Գիւտերն ունի հազար այֆեր ,
Այլ ինչն ունի այֆ մը միայն .
Լոյսն աւխարհին կ'անցնի երբոր
Արեւն երբայ երեկոյեան :

×

Մեր միտն ունի հազար այֆեր ,
Այլ սիրսն ունի այֆ մը միայն .
Լոյսը կեանքին կ'անցնի՝ երբոր
Սէրը երբայ , ապաժաման ... :

F. BOURDILLON

Քրգմ. ԶԱԻՆՆ ՎՐԻ.

(1852 - 1921)



ՊԵՏՐՈՍ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՊ ԱՐՇԱԿՈՒՆԻ

Պ Ա Պ Ե Ի Կ Ե Ս Ա Ր Ի Ա

ՊԱՊ Ե Ի Կ Ե Ս Ա Ր Ի Ա

2. ՎԱՂԷՍ ԵՒ ԲԱՐՍԵՂ

Բարբարոս Գոթերու զէմ մղած պատերազմէն յաղթական վերադարձած, Վաղէս իր ուշադրութիւնը կեդրոնացուց Ուղղափառեաններուն, անոնց վերջը բերելու առաջադրութեամբ:

371ին Կայսրը մայրաքաղաքը ձգեց և Փոքր Ասիա անցաւ: Ամէն այցելած նա, հանգի մէջ գտնուող Ուղղափառեաններուն կը հրամայուէր իրենց դաւանանքը մէկդի ձգել և ընդունել Արիոսեանը: Գրեթէ ամէն տեղ Ուղղափառեաններ սարսափած տեղի կուտային: Բիւթանիոյ մէջ գտնուողները ընդգրկմանալուն, Վաղէս սարսափելի խըստութեանց ենթարկեց զանոնք: Կապագովկիոյ գրացի Գաղատիան համակերպեցաւ, և հալածանքէ զերծ մնաց:

Հիմա Կայսրը և իր շքախումբը կ'ուղղուէր Կեսարիա: Անոնք զիտէին Բարսեղի անյողոցող և յամառ կեցուածքը: Դեռ Կայսրը կեսարիա չեկած, գալիք վտանգէն վախցած, բազմաթիւ բարձրաստիճան անձեր խնդրեցին Բարսեղէն որ տեղի տայ, զոնէ ժամանակաւորապէս, մինչև որ փոթորիկը անցնի, ո՞վ գիտէ ի՞նչ կ'ըլլայ, ի՞նչ չըլլար: Կայսրը կրնայ մեռնիլ, կամ կրնայ իր միտքը փոխել: Բարսեղ բացարձակապէս մերժեց տեղի տալ:

Յետոյ եկան խումբ մը Արիոսեան եպիսկոպոսներ: Բարսեղ մերժեց նոյնիսկ անոնց հետ հաղորդակցիլ: Վաղէսի բարձրաստիճան պաշտօնեաններէն Մօտէսթոս, կայսեր անունով Բարսեղին առաջարկեց կամ ընդունել Արիոսեան դաւանանքը և կամ պաշտօնազուրկ ըլլալ: Մօտէսթոս նախատալի ամբարտաւանութեամբ սպաննաց

Բարսեղին, մերժեց զինք եպիսկոպոս կոչել, աքսորի, չարչարանքի, կալուածոց զրաւման, նոյնիսկ մեռցնելու խօսք ըրաւ: Բարսեղ պատասխանեց թէ նման սպառնալիքներ չէին կրնար ազդել իրեն որուն ամբողջ հարստութիւնը ցնցոտիացած վերարկուէ մը և մէկ քանի գրքերէ կը բաղկանար, որուն համար ամբողջ աշխարհը տուն էր, և որը մահը պիտի ընդունէր որպէս ազատարար: Երբ ապահար Մօտէսթոս զարմանք յայտնեց յայսպիսի աներկիւղ արտայայտութեան, Բարսեղ պատասխանեց, «Ասկէ առաջ ճշմարիտ եպիսկոպոսի մը չես հանդիպած», ատոր համար հիմա կ'ապշխօս:

Կայսեր և Բարսեղի նկարագրերը և անհատականութիւնը եթէ բաղդատութեան դնես, Վաղէս կը կորսնցնէր: Ամմիանոս, որ կը ճանչնար կայսրը, կ'ըսէ թէ ան տատամտտ, երկմիտ մարդ էր, զիւրազրգիւ, լրտեսներու ամէն ըսածին հաւատք ընծայող, առանց սուտն ու ճշմարիտը զատորոշելու⁽²⁾:

Վաղէս տատամեցաւ Բարսեղին զէմ կտրական որոշում մը տալու: Առաջարկեց որ Բարսեղ հաղորդութիւն տայ Արիոսեաններուն: Եպիսկոպոսապետը մերժեց, Կայսրը ինք ներկայ եղաւ Բարսեղի մատուցած պատարագին, և այնքան ազդուեցաւ տեսածէն, որ քիչ մնաց յուզումէն մարէր իշնար:

Կայսեր հետ եղող Արիոսեաններ պընդեցին թէ Վաղէս իր զէպի Բարսեղ թոյլատու ոգիով իրենց դաւանանքը կը վտանգէր: Վաղէս ստիպուած Բարսեղը աքսորելու հրաման տուաւ:

Երբ Բարսեղ կը պատրաստուէր մեկնել

(2) Ammianus, XXXI, 14, 6:

լու իր արքայազնը, կայսեր միակ որդին յանկարծ հրահանգացաւ: Թագուհի Ալպիա Տոմինիքա սարսափած աւաղեց թէ զաւկին հրահանգութիւնը երկնային պատիժ մըն էր՝ Բարսեղի գէժ գործադրուած խտուածան: Վաղէս ինքն ալ վախցաւ: Իր մօտ գտնուող Ուղղափառեան երկու զօրավարները, Տերենտիոս և Արենթէոս, Բարսեղին զրկեց, որ ան գայ և աղօթէ հրահանգ տղուն վրայ: Բարսեղ հաւանեցաւ, պայմանաւ որ մանուկը Ուղղափառ եպիսկոպոսի մը ձեռքով մկրտուի, և այդ հաւատքի մէջ կրթուի:

Բարսեղ եկաւ, աղօթեց: Հրահանգը լուսանալու նշաններ ցոյց տուաւ: Բարսեղի հեռանալէն վերջ, Արիստեաններ կրկին համոզեցին Վաղէսը, և մկրտեցին մանուկը, որ շուտով մեռաւ:

Փաւստոսի այնքան ախորժելի թուեր է այս դրուագը, որ, փոխան Բարսեղի, ատոր հերոսը կ'ընէ ներսէս կաթողիկոսը: Երկար տրամաթիկ պատմութիւնը կ'ընէ ներսէսի անվախ ելույթին Վաղէսի առաջ: Եւ վկայարանական պատկերը կատարեալ ընելու համար ալ, Վաղէսի հրամանով կաթողիկոսը արքայի կուտայ⁽³⁾:

Ներսէսի հանգէպ իր պաշտամունքը, սակայն, Փաւստոսը չարգիլէր Բարսեղի արժանիքը գովարանելու: «Նա մեծ զիտութեան տէր էր, իմաստութեան անպակաս ազրիւր էր և հաւատարիմ ուսուցիչ ու վարդապետ, որովհետեւ նա իր փրկիսփայլական արուեստով միշտ կը փակէր պապանձեցնէր հերետիկոսներու զուր բացած բերանները և ամենասուրբ Երրորդութեան ճշմարիտ հաւատքը կը հաստատէր ամենուն առաջ»⁽⁴⁾:

Բարսեղ չարքորուեցաւ: Մնաց յաղթական իր աթոռին վրայ, հրացմունքի առարկայ բոլոր Ուղղափառեաններուն:

Վաղէս երբ կեսարիա կը գտնուէր, կապաղովկիոյ նահանգը երկուքի բաժնեց: Առաջին մասին մայրաքաղաք Մնաց կեսարիան, երկրորդին՝ Տիյանա, Տաւրոս լեռներու ստորոտը, կրկնական Դրունք կոչուած լեռնանցքի մօտ:

Եկեղեցական պատմիչներ Վաղէսի այս քայլը կը վերագրեն Բարսեղէն վրէժ առ-

նելու համար: Անտարակոյս նման զաղափար կայսեր մտքէն անցած ըլլալու էր: Թէև կը գտնուին ներկայ ժամանակներու ուսանողներ, որոնք աւելի քաղաքական նպատակ մը կը տեսնեն կայսեր ըրածին մէջ, որպէս թէ նահանգային կառավարչներու գծրութիւնը նուազեցնելու⁽⁵⁾:

Ի՞նչ նկատուեով ալ Վաղէս շարժած ըլլար, որոշ է որ կապաղովկիոյ այսպէս երկուքի բաժանումով Բարսեղ շատ մեծ փնաս կրեց:

Ինչպէ՞ս: Երկրորդ կապաղովկիոյ մայրաքաղաք Տիյանայի եպիսկոպոսը Անթիմոս, թէև ձեռացած, բայց փառասէր և կուռապան մէկը, յանկարծ պահանջ ներկայացուց թէ քաղաքային բաժանումին հետեւելու էր եկեղեցական բաժանումը, ինչպէս նախորդ պարագաներուն եղած էր: Հետևաբար, երկրորդ կապաղովկիոյ սահմաններուն մէջ գտնուող եպիսկոպոսական թեմերը այլևս Բարսեղի իրաւասութեան ենթակայ չէին կրնար ըլլալ և պէտք է պատկանէին Անթիմոս եպիսկոպոսին: Դժուար չէ երեւակայիլ թէ Բարսեղի աթոռը եկամուտի որքան մեծ կորուստ մը պիտի ունենար:

Երկու եպիսկոպոսներու մէջ կատաղի մրցակցութիւն և վէճ սկսաւ: Եւ երկուստեք հետամուտ եղան եպիսկոպոսներ շահելու: Բարսեղի ընտրութեան ատեն իրեն հակառակ երկու եպիսկոպոսներ Անթիմոսի կողմը անցան: Երբ եպիսկոպոս մը մեռաւ, Բարսեղ անոր յաջորդը կարգեց: Անթիմոսն ալ իր կողմէ իր մարդը նշանակեց:

Բարսեղ, Երկրորդ կապաղովկիոյ մէջ գտնուող վանք մը գնաց՝ այդ տեղի բերքը հաւաքելու և կեսարիա բերելու: Անթիմոս եպիսկոպոս զինեալ հետեւորդներով զիրք բռնեց լեռան այն անցքին մէջ ուրկէ Բարսեղի կարաւանին ջորիները պիտի անցնէին, և երկու հակառակորդներու մէջ կոխ տեղի ունեցաւ:

Վերջ ի վերջոյ Անթիմոս յաջողեցաւ, և Մնաց Երկրորդ կապաղովկիոյ Մեարապոլիտը:

Յիշեցնիք Անթիմոսը, որովհետեւ Հայ կաթողիկոսական աթոռի շուրջ կատարուող տրամայի մէջ գեր մըն ալ ան ունի:

(3) Փաւստոս, Դ. 5:
(4) Փաւստոս, Դ. 7:

(5) Jones, A. H. M. p. 185:

Ասակէ առաջ, սակայն, Պապ թագաւոր գործ պիտի ունենար Բարսեղի հետ: Մեծ Եպիսկոպոսապետը, որ Վաղէս Կայսեր կըրցած էր զիմազրելի, միթէ՞ Հայերու երիտասարդ Արքայէն պիտի վախնար:

3. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԻՆՔՆԻՆԵՍԱՆ

Կիւրեղ եպիսկոպոս Սատաւա քաղաքէն վերադարձաւ Հայաստան: Ինք և իր կողմնակիցները ուրախ էին որ Մեծն Բարսեղ, քննութենէ վերջ, անպարտ հաշակած էր Կիւրեղը, եղած ամբաստանութիւնները անհրժեշտ զրպարտութիւններ համարելով, Կիւրեղի թշնամիներու կողմէ յերիւրուած:

Բարսեղ՝ Տերնատիոս կոմսին զրկած իր նամակին մէջ չյայտնէր Կիւրեղի հակառակորդներուն ո՞վ ըլլալը: Բայց անտարակոյս հայ եկեղեցականներ էին, և վստահ կրնանք ըլլալ որ Պապ թագաւորի կողմը անցած հոգեւորականներ էին: Թերևս աշխարհականներ ալ:

Կաթողիկոսական ընտրութեան շուրջ տեղի ունեցող այս բացառիկ պայքարի ընթացքին ակնկալելի էր, որ հայ հոգեւորական զատու մէջ միաձայնութիւնը, եթէ գոյութիւն ունեցած էր, բոլորովին խախտէր: Կիւրեղի թշնամիներ ունենալու հանգամանքը, որ զիրենք կը մղէ նոյնիսկ Կեսարիոյ Մետրապոլիտին բողոքելու անոր դէմ, ցոյց կուտայ բաժանում հայ եպիսկոպոսներու մէջ:

Պապ թագաւոր ունէր իր կողմնակիցները, որոնք հասկնալիօրէն Կիւրեղի կաթողիկոս ըլլալուն հակառակ էին:

Բարսեղ քաջ ծանօթ Կեսարիոյ եպիսկոպոսապետի հին իրաւունքին հայ կաթողիկոս օժելու, իր հաւանութիւնը տուած էր Վմեր մեծայարգ եղբոր՝ Կիւրեղին: Սակայն օժում չէր կատարած, Կիւրեղեաններու կողմէ տրուած տեղեկութեան վրայ թէ, թագաւորին հաւանութիւնը ապահովել անհրաժեշտ էր: Անոնք յոյս ներշնչած ըլլալու էին թէ, անգամ մը որ Կիւրեղ իրեն դէմ եղած ամբաստանութիւններէն մաքրուէր, թագաւորը համոզելու գործը կը զիւրանար:

Սակայն, Պապ թագաւոր անդրդուելի մնաց:

Կաթողիկոս պիտի ըլլար ի՞ր թեկնա-

ծուն Փաւստոսը: Դժբախտաբար, Բարսեղի նամակները այս Փաւստոսի անձի մասին մանրամասն տեղեկութիւն չեն տար: Բայց դժուար չէ կուսել թէ Փաւստոս՝ Պապ թագաւորի հոգեւոր պէտքերուն մատակարարն էր: Թերևս Պապի Պոլիս գտնուած ատեն իսկ հետը եղած, որովհետեւ Արքայազուն իշխանը առանց հոգեւոր առաջնորդի չէր կրնար ձգուիլ: Իսկ Փաւստոսի պարագային, ինչ որ Կիւրեղեաններու աչքին խրատ ծանրակշիռ կէտ մըն էր, ան եթէ Արիստեան չէր, շատ ալ ջերմ վերաբերում մը չունէր Ուղղափառեան գաւառանքին: Իր ընթացքը Բարսեղի հանդէպ, երբ Կեսարիա գնաց, կասկած չեն ձգեր թէ Փաւստոս եկեղեցականը ո՞չ կը վախնար ոչ ալ կը քաշուէր Ուղղափառեաններու կուռք Բարսեղէն:

Այս բուն պայքարի մասնակցող երկու կողմերն ալ, սակայն, Պապ թագաւոր և Կիւրեղեաններ, տակաւին կը հաւատային թէ, որպէսզի կաթողիկոսական ընտրութիւնը օրինաւոր ըլլայ, ընտրեալը պէտք է օժում ստանայ Կեսարիոյ Մետրապոլիտէն: Գրեզոր Լուսաւորիչով սկսող և մինչև Ներսէս կաթողիկոս շարունակուող այս սովորութիւնը յարգուելու է, հոգ չէ թէ այդ կերպ հայ եկեղեցին կախում կ'ունենար Կեսարիոյ թեմէն:

Այս համոզմամբ ալ Պապ թագաւոր առանց երկար բարակ վէճը շարունակելու իր հակառակորդներուն հետ, իր ընտրելին Փաւստոսը Կեսարիա զրկեց, Բարսեղին ալ յանձնարարական նամակ մը գրելով, պահանջելու որ ան Փաւստոսը օժէ Հայաստանի կաթողիկոս:

Փաւստոս իր համախոհ շքախումբով Կեսարիա մեկնեցաւ: Ըստ ընկալեալ սովորութեան, ան ստիպուած էր վկայագրիներ ստանալ Փոքր Հայքի եպիսկոպոսներէն, որովհետեւ առանց այդ յանձնարարական նամակներու, Կեսարիոյ Եպիսկոպոսապետը կրնար մերժել ձեռնադրութիւնը:

Փոքր Հայքի քաղաքներու եպիսկոպոսները ընդհանրապէս յոյներ կ'ըլլային, յամենայն դէպս հայեր չէին, և յայտնապէս անոնցմէ յանձնարարական ապահովելու մեթոտը որդեգրեր էին, որպէսզի հայ կաթողիկոսական ընտրելին Կեսարիոյ համակիր — և ընդունելի — մէկն ըլլայ:

Փաւստոս, ճամբուն վրայ եթէ հանդի-

պեցաւ Փոքր Հայքի եպիսկոպոսանիստ քաղաքներէն ոսէ մէկուն, ինչպէս Նիկոպոլիս, Կօլոնիս, և Սատալա, ուր Բարսեղ իր մէկ ազգականը, Պոմենիոս, նոր եպիսկոպոս նշանակած էր, ոչ մէկ յանձնարարական նամակի համար դիմում կատարեց:

Կեսարիա հասնելուն, դիմեց Բարսեղին, և Պապ թագաւորի նամակը յանձնեց անոր:

Բարսեղ հարցուց Փաւստոսին թէ յանձնարարական նամակներ բերած էր Նիկոպոլիսոյ Թէոդոտոս եպիսկոպոսէն, Սատալայի Պոմենիոս եպիսկոպոսէն, և Փոքր Հայքի միւս եպիսկոպոսներէն⁽⁶⁾: Փաւստոս անգոսական շեշտով պատասխանեց թէ ուզուած նամակները չունէր, և թէ Հայոց թագաւորի նամակէն ուրիշ նամակի պէտք չկար:

Բարսեղ զայրացած, մերժեց Փաւստոսը ձեռնադրել:

Թերևս հուշակաւոր եպիսկոպոսապետը, որ Վաղէս կայսեր պարտադրեր էր յարգանք իր անձի հանդէպ, կը խորհէր թէ իր մերժումը Փաւստոսը խելքի պիտի բերէ:

Բայց Պապի թեկնածուն, կամ նման պատահականութեան համար իր դասը ըստացեր էր թագաւորէն, և կամ անձնական յանդուգն մտածումով մը, ետ առաւ իր թագաւորին նամակը, և առանց այլևայլի ձգեց Բարսեղը:

Ան ճամբորդեց Տիւանա քաղաքը, նորահաստատ Երկրորդ Կապադոքիկոյ մայրաքաղաքը, ուր Անթիմոս եպիսկոպոս, Բարսեղի մրցակիցը և հակառակորդը, նոր թեմ մը հաստատած էր:

Անթիմոս եպիսկոպոս յօժարութեամբ և անմիջապէս Փաւստոսը Հայաստանի կաթողիկոս օծեց: Անթիմոսին մեծ գոհունակութիւն կը պատճառէր իր այս արարքը: Նախ, Հայաստանի մէջ այդ պիտի ծառայէր իր և իր թեմի վարիչ բարձրացնելու, ինչպէս նաև ընդունելու սովորական դարձած նուէրները հայ աշխարհէն, յետոյ, այդ ալ աւելի կը կրճատէր իր թշնամի Բարսեղի հեղինակութիւնը:

Բարսեղ յանկարծակիի եկաւ Փաւստոսի քայլէն: Զայրացաւ յոյժ, քանզի եղածը ուրիշ բան չէր այլ Հայաստանի վրայ իր

իրաւասութիւնը վերջացնել, ու այդպէսով Կեսարիոյ իր թեմի եկամուտի ուրիշ կարեւոր աղբիւր մըն ալ պիտի չորնար:

Փաւստոս Տիւանայէ վերադարձին, ճամբուն վրայ Կեսարիա հանդիպեցաւ և Բարսեղին այցելեց: Այժմ ան Հայաստանի եպիսկոպոսապետն էր և պատշաճ սեպեր էր Բարսեղ եպիսկոպոսապետը տեսնել, անոր քաղաքէն չհեռացած:

Բարսեղ՝ ստացած հարուածի սաստկութենէն իր բարկութիւնը առանց սքողել փորձելու արգիլեց Փաւստոսի եկեղեցի մուտքը, բողոքելով անոր ըրածին դէմ⁽⁷⁾:

Բարսեղ այս հարուածը չկրցաւ մարսել: Նոյնիակ վախցաւ որ շատեր զինք քննադատեն իր անխորհուրդ կտրական քայլին համար: Ինքնարդարացումի նամակներ գրեց ասոր անոր, այպանելով Տիւանայի Անթիմոս եպիսկոպոսը, և միաժամանակ արդարացնելու իր վարմունքը:

Մելիտիոս, Անտիոքի եպիսկոպոսը, որ Կայսեր կողմէ Հայաստանի սահմանները արտորուած էր, Բարսեղէն նման չքմեղանքի նամակ ստացաւ, ուր մեծ Կեսարացին Փաւստոսի դէպքը կը պատմէր, Անթիմոսը պախարակելով, որ Փաւստոսը ձեռնադրելով, Հայաստանի մէջ Կիւրեղին իրաւունքը ոտնակոխ եղած էր, և այդ պատճառաւ հայ եկեղեցականներ բաժան բաժան եղած: Եթորհեցայ որ արդար է ձեր մեծայարգութեան գրել, որպէսզի չըլլայ թէ անոնք իմ մասին սուտ խօսելով, ես պատասխանատու համարուիմ այս անկանոնութիւններուն: Դուք ալ արդար պիտի նկատէք որ այս կէտը ուրիշներու ըսէք⁽⁸⁾:

Նոյն ոճով գրեց Նիկոպոլիսոյ Թէոդոտոս եպիսկոպոսին, որ իրեն հետ գժտուած էր, և Բարսեղի Հայաստան ճամբորդութիւնը ձախողեցուցած:

Իր ազգական Պոմենիոս եպիսկոպոսը, որ Հայաստանի սահմանին մօտ Սատալա քաղաքի առաջնորդն էր, նոյնպէս նամակ ստացաւ Բարսեղէն:

«Երբ հայերը վերադառնալուն ձեր քաղաքէն անցան, անտարակոյս անոնց հարցուցիր իմ կողմէ նամակի մը մասին: Անշուշտ քեզի ըսին թէ ինչո՞ւ իրենց նամակ

(7) Basil, Letter No. 122.
(8) Basil, Letter No. 120:

(6) Basil, Letters Nos. 121, 122:

մը չտուրի։ Եթէ ճշմարտասէր անձերու նման պատճառը ըսինք քեզի, զիտեմ որ ինձի ներքեցիր անմիջապէս։ Եթէ ամէն բան չը յայտնեցին, յամենայն դէպս լսէ ինձմէ . . . Անթիմոս, երբ պատեհութիւնը գտաւ իր սնափառութիւնը գոհացնելու, և ինձի նեղ-սրտութիւն պատճառելու, ձեռնադրեց Փաւստոսը, առանց սպասելու իմ քեզմէ ստանալիք վկայագրին, և ծաղրելով իմ բծախնդրութիւնս այս տեսակ հարցերու մէջ։ Նկատելով որ ան (Անթիմոս) խառն-չտկեց հին սովորութիւնը և առ ոչինչ համարեց քեզ, որու վկայագրին կը սպասէի, և, իմ կարծիքով, աստուածահաճոյ գործ ալ չըրաւ. այս պատճառներով սրդողեցայ հայերէն և ոչ մէկ նամակ տուի իրենց, Հայաստանի մէջ եղողներուն, ոչ ալ քեզ։ Փաւստոսը եկեղեցի խօսի չընդունեցի . . . Եթէ ուէ ճար կայ այս բաներուն, վստահ-օրէն գրէ ինձի . . . Իսկ եթէ կատարուած չարիքը անբուժելի է, գրէ որ իմանամ, և ասկէ վերջ գործ չունենամ անոնց հետ։ Թէն, ինչպէս ապացուցին, անոնք ապագային որոշած են իրենց հաւատարմութիւնը Անթիմոսին փոխանձել, ի հեճուկս ինձ և իմ եկեղեցոյս, կարծես իմ բարեկամութիւնը այլևս արժէք չունէր»⁽⁹⁾։

Որքան պերճախօս են այս նամակները։ Գրուած օրը օրին, տաք տաք, դէպքերու անմիջական ազդեցութեան տակ։ Եւ որքան ձեռնառու դէպքերը լուսարանելու և մեկնելու։

Ինչե՛ր պիտի չտայի եթէ մեր ձեռքը հասած ըլլար, օրինակ, Ներսէս կաթողիկոսի, կամ Արշակի, կամ Պապի իրապէս գրած նամակները! Պատմագրական ուսանող մը միթէ՞ ատկէ աւելի թանկագին գանձ կրնայ հրեւակայել։

Երբ Փաւստոս, Անթիմոսէ ձեռնադրուած, Հայաստան վերադարձաւ, Կիւրեղեաններու յամառ ընդդիմութեան հանդիպեցաւ։ Անոնք աղմուկ բարձրացուցին։ Իրենց աչքին, կատարուածը խիստ ապօրինի էր։ Միմիայն Բարսեղ Եպիսկոպոսապետի ձեռնադրութիւնը վաւերական էր, սուրբ էր և օրինաւոր։ Անթիմոս Եպիսկոպոս խարդախ մըն էր, որ, Վաղէս կայսեր

քաջաւերութեամբ, Բարսեղը կողոպտած էր իր թեմի խոշոր մէկ մասէն։

Կիւրեղեաններու կատաղութիւնը կը կրկնապատկուէր երբ Փաւստոսի (կամ Պապի) վարպետ խաղը նկատի կ'ունենային, որ Բարսեղի մերժումէն առանց այլայլելու, թակարդը մեծ եպիսկոպոսապետի զլխին կը դարձնէին, Անթիմոսին երթաւով։

Եթէ Կեսարիոյ Եպիսկոպոսին ձեռնադրութիւնը անհրաժեշտ էր հայ կաթողիկոսի օրինականութեան տեսակէտէ, կը պնդէին Փաւստոս և իր կողմնակիցները, շատ լաւ, Անթիմոսինն ալ Կեսարիոյ թեմ էր, վաւերացուած կայսեր անօրինութեամբ և պետական օրէնքով։

Փաւստոս Պապ թագաւորին պատեց Բարսեղ Եպիսկոպոսապետի անարդական վարժուճքի մասին, թէ՛ առաջին անգամ իրեն ներկայանալուն, և թէ յետոյ, Անթիմոսէն օծուելէ վերջ, երբ Փաւստոս Կեսարիա հանդիպեցաւ։ Բարսեղ առ ոչինչ համարած էր Հայոց Արքայի սահակը։ Իսկ վերջէն ալ, Փաւստոսը, որ հայրապետ օծուած կը դառնար, արգիլած էր եկեղեցիէն ներս մտնել։

Թագաւորը բնականաբար պիտի զայրանար օտարազգի Եպիսկոպոսի մը, այդ ալ մօլի Ուղղափառեան, իր արքայական արժանապատուութիւնը այս կերպ նախատելուն։

Այդ ատենն էր որ Պապ յանդուզն դադափարը յղացաւ վերջացնելու սովորութիւն մը, որ կը պահանջէր ամբողջ Հայաստանի եկեղեցիներուն զուլթ ըլլալիք Հայրապետ մը, երթալ օտար երկիր մը, օտարազգի Եպիսկոպոսէ մը օծում ստանալու։

Կիւրեղեաններու կատաղի հակառակութիւնը Փաւստոսին մէկ կողմէ, միւս կողմէ Փաւստոսեաններուն նոյնքան յամառ պնդումը արդէն օծուած կաթողիկոսի մասին, Պապ թագաւորին թելադրեցին արժատական քայլ մը։

Կիւրեղն ալ, Փաւստոսն ալ պիտի հեռացուէին։ Թագաւորը ինք պիտի ընտրէր կաթողիկոսութեան ուրիշ թեկնածու մը, և ան ալ պիտի օծուէր հայ Եպիսկոպոսներէ, առանց կարեւորութիւն տալու Կեսարիոյ Մետրոպոլիտին։

Պապ թագաւոր ընտրեց Յուսիկ Եպիսկոպոսը, և որ Մանազկերաի Աղբիւնոս և

(9) Basil, Letter No. 122։

գիտնականները, որ պատմիչ Փաւստոսի և Սորենացիի վկայութեամբ, յա նկարագրով քրիստոնեայ մէկն էր⁽¹⁰⁾։

Երբ Բարսեղ իմացաւ Հայաստանի մէջ պատահածը իր յուսախաբութիւնը չափ ու սահման չճանչցաւ, և ատոր առթած բարկութիւնը շտապած, նամակ գրեց նորընտիր Յուսիկ կաթողիկոսին, նամակ գրեց Պապ թագաւորին։ Սպասնաց երկուքին ալ, Հայաստանը տակաւին կեսարիոյ իր թեմին ենթակայ համարելով, իր զրկած նամակներով կաթողիկոսի իշխանութիւնը կտրտեց, ըսաւ թէ ան իրաւունք պիտի չունենար հայ եպիսկոպոսներ ձեռնադրելու։ Ետ շատ կրնար թագաւորի սեղանին հացը օրհնել⁽¹¹⁾։

Բարսեղի գայրոյթը հասկնալի էր։ Վաղէս կայսեր կողմէ կապողովկիոյ թեմը երկուքի բաժնուելէ վերջ, Անթիմոս եպիսկոպոսին կողմէ Բարսեղի հպատակ եպիսկոպոսական անթոններէն շատերուն իւրացուելէն յետոյ, հիմա ալ, երիտասարդ քարբարոս թագաւոր մը, եկամտաւոր ուրիշ հարուստ ազրիւր մըն ալ կը չորցնէր։ Սա անտանելի էր։

Յուսիկ Ֆնաց կաթողիկոս, և թէ ան զրեթէ ամենէն ընդունուեցաւ, յայտնի է այն իրողութենէն, որ տարին չանցած, Պապ թագաւորի սպանութենէն վերջն ալ, ան շարունակեց պաշտօնը մինչև իր մահը, չորս տարի պաշտօնավարելէ յետոյ⁽¹²⁾։

Յուսիկէն քիչ վերջ Բարսեղ կը մեռնէր, և իր մահով կեսարիոյ թեմը կը կորսնցնէր շատ բան իր կարևորութենէն և հեղինակութենէն։

Այսու ներկայացուցինք հայ եկեղեցական և քաղաքական պատմութեան մէկ յոյժ կարևոր դրուագը, որ առհասարակ հայ պատմաբաններէ անտեսուած է։

Այս զանցառումը ներելի չէ, քանզի պատահածը ուրիշ բան չէր այլ Հայ եկեղեցւոյ տալ իր անկախութիւնը, իր մինչև այդ զլացուած իրաւունքը ինքնիշխան տնօրինելու իր բախար։

Հայ եկեղեցւոյ պատմութիւնը գովասանքի էջ մը կը պարտի Պապ թագաւորին։

Ափսո՛ս, ոչ թէ այդ էջը մերժուեցաւ ողբերգական այս երիտասարդ Արքային, այլ քինախնդիր Փաւստոսի կոյր տանուլթեան բաժնեկից ըլլալով 1600 տարիներէ ի վեր անիծեր է անոր անունը և յիշատակը։

Պապի այս քայլին կարևորութիւնը ալ աւելի կը զնահատուի երբ նկատի առնենք դարեր տեղոյ այն յամառ պայքարը, որ հետագային յոյն եկեղեցականութիւնը պիտի մղէր Հայ եկեղեցին իր գերիշխանութեան տակ ձգելու համար։

Պէտք չէ մոռցուի նաև թէ Պապ թագաւորի այս մեծ ձեռնարկը որքան եկեղեցական նոյնքան ալ քաղաքական անդրադարձում ունեցաւ, երբ Սահակ Պարթևի օրով և անկէ յետոյ՝ կաթողիկոսութիւնը քաղաքական ազդակ դարձած, սկսաւ ազդայնանալ, օտար կաշկանդող շղթաներէ փրկուած։

Դառն փայտ մը կ'ունենանք երբ կը թերթատենք Հայ եկեղեցւոյ օրացոյցը, ու հոն կը տեսնենք անհատնում խուճրը յոյն, ասորի, Ափրիկեցի և այլ օտարազգի սուրբերու, որոնք իրենց կենդանութեան հազիւ թէ ուէ օգուտ մը ունեցան հայ ժողովուրդին, և վախճանք, հանդերձեալի մէջ ալ մոռցած են մեզ մեղաւորներուս համար բարխօսել Տիրով։

Պապ սուրբ մը չէր կրնար ըլլալ, բայց գոնէ անէժքէ ազատ կացուցուելու էր։

ՀՐԱՆԴ Բ. ԱՐՄԷՆ

Շարձակէն (27)



(10) Փաւստոս, Ե. 29, Խորենացի, Գ. 39.
(11) Փաւստոս, Ե. 29.
(12) Խորենացի, Գ. 39.

ԲԱՆՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷԶՄԻԱԾԻՆ 1655ԻՆ

ՀԱՍԿԻ ՅՈՒՆԻԱ-ՅՈՒԼԻԱ 1957 ի բիւլին մեզ Պր. Յ. Քիւրսեան բարգմանած է Ֆրանսացի վանառական Ժան-Պարիսք Թավերնիէի ուղեգրութեան անգլերէն ճիշտ մէկ բարգմանութեան էջովիստճի վերաբերեալ մասը: Այս բարգմանութիւնը կը պարունակէ քէ սխալներ եւ քէ բերիներ:

Ստորեւ կը հրատարակենք նոյն մասին բարգմանութիւնը Ֆրանսերէն բնագրէն, որ քանի մը անգամ սպազրուած է: Ըստ կարելւոյն պահուած է ճշգրիտակից շատ պարզ ոճը:

Հայաստանէն Պարսկաստան գացող ճամբուն վրայ ուշադրութեան արժանի վայրը կը կոչուի Երեւ Եկեղեցի⁽¹⁾ և կը գտնուի Երեւանէն երեք մղոն հեռու: Երեք վանք կայ հոս մէկը միւսէն քիչ մը հեռու: Ամենէն մեծը և ամենէն գեղեցիկը Հայոց մեծ հայրապետին աթոռն է: Ուրիշ մը կը գտնուի հարաւակողմը, առաջինէն հրացանադարկ մը հեռու: Երբորդը քառորդ մղոն դէպի արեւմուտք և կուսանոց մըն է: Հայերը այս վայրը կը կոչեն Էջմիածին, այսինքն Միւստին Ուղի, որ գլխաւոր եկեղեցիին անունն է: Անոնց պատմութեան մէջ գրուած է թէ Յիսուս-Քրիստոսի ծնունդէն շուրջ երեք հարիւր տարի ետք սկսուած է ասոր շինութիւնը և թէ երբ պատերը մինչև արմուկները հասնելու չափ կը բարձրանային, սատանան գիշերը կուգար քանդել ինչ որ շինուած էր օրուան մէջ: Այս վիճակը գրեթէ երկու տարի տեւեց. բայց գիշեր մը Յիսուս-Քրիստոս երեցաւ և այդ օրէն սկսեալ սատանան այլևս չկրցաւ արգիլել եկեղեցիին կառուցման աւարտումը: Այս եկեղեցին նուիրուած է սուրբ Գրիգորի, զոր Հայերը շատ կը յարգեն: Հոն կը տեսնուի քարէ սեղան մը, որ նոյն պատմութեան համաձայն, այն քարն է որուն վրայ Յիսուս-Քրիստոս կը հանգչէր երբ սուրբ Գրիգորի կ'երեւար: Ամէն

անոնք որ եկեղեցի կը մտնեն մեծ ջերմեւ, օսնդութեամբ կը համբուրեն այս քարը: Երկրորդ վանքը շինուած է ի պատիւ իշխանուհիի մը, որ Խաչիայէն եկաւ քառասուն ազնուական կոյսերու հետ տեսնելու համար սուրբ Գրիգորը: Հայ թագաւոր մը զայն (Գրիգորը) նետել տուաւ վիրապ մը լի օձերով, որոնք իրեն չմտասցին քնաւ:

Մեծ հրաշքով մը, տասնըջորս տարի հոն ապրեցաւ և այդ օրէն ի վեր վանքին շուրջը մինչև երկու մղոն տեղ օձերը մարդու չեն մտասեր: Այս կոսապաշտ թագաւորը ուղեց կենակցիւ այս շատ գեղեցիկ իշխանուհիին և անոր ընկերուհիներուն հետ, որոնք, շնորհիւ իրենց զգաստութեան, յաղթեցին անոր բռնութեան: Թագաւորը, մոլեգնած որ անկարող էր իր զիտաւորութիւնը գուհացնել, սպաննել տուաւ ամէնքն ալ: Այս է Հայերուն պատմածը այս վանքին հիմնարկութեան մասին:

Բոլոր Հայերուն սովորութիւնն է, թէ անոնց որ Պարսկաստան կ'երթան և թէ անոնց որ Պարսկաստանէն կուգան այս ճանապարհով զոր կը նկարագրիմ, Երեք Եկեղեցիները երթալ հաղորդուելու համար, և կարաւանը սովորաբար հոն կանգ կ'առնէ հինգ կամ վեց օր: Այս միջոցին անոնք կը խոստովանին և հայրապետէն կը ստանան իրենց մեղքերուն արձակումը:

Պատրիարքին ենթակայ են քառասունը հինգ արքեպիսկոպոս, և մէն մի արքեպիսկոպոս իր իշխանութեան տակ ունի չորս կամ հինգ եպիսկոպոս, որոնց հետ միաբանաբար կ'ապրի վանքի մը մէջ, ուր եպիսկոպոսներուն ենթակայ են բազմաթիւ արեղաներ: Առաւօտեան պաշտամունքը կատարելէ և պատրաստելէ ետք, ինչ որ սովորաբար ըրած կ'ըլլան արշալոյսէն ժամ մը առաջ, ամէնքն ալ հողը կը մշակեն իրենց ապրուստը հողալու համար: Մեծ հայրապետին եկամուտը վեց հարիւր հազար սկուդ (էքիւ) է կամ մօտաւորապէս այս գումարին հաւասար է. տասնըհինգ տարեկանէն վեր բոլոր հայ քրիստոնեաները պարտաւոր են տարեկան հինգ սոլ վճարել, սակայն շատերը անկարող ըլլալով չեն վճարեր: Հարուստները կը լրացնեն անոնց պակասը, ոմանք մինչև երկու կամ երեք սկուդ վճարելով: Այս ամբողջ դրամը հայրապետ-

(1) Թարգմանութիւն թուրքերէն Իւլ Քիլիսէին:

տին գրպանը չի մնար: Տարի կ'ըլլայ որ իր խնայողութիւններէն մաս մը կը յատկացնէ և նոյն իսկ պարտքի տակ կը մտնէ օգնելու համար չքաւոր Հայերուն որ անկարող են վճարել խաւածը, այսինքն տարեկան տուրքը զոր պարտաւոր են վճարել այն մահմետական իշխաններուն որոնց տիրապետութեան ենթակայ են. այլապէս պիտի վախճուէր որ այս խեղճերը ստիպուէին մահմետականութիւնը ընդունիլ կամ իրենց կիներուն և զաւակներուն հետ ծախուիլ: Մեծ հայրապետը այս վիճակին դարման կը տանի որքան որ կրնայ: Ամէն արքեպիսկոպոս իր իշխանութեան ենթակայ վիճակին մէջ այսպիսի մարդոց ցանկը կը ղրկէ: Այսպէս, ինչ որ հայրապետը մէկ ձեռքով կ'անտէ միւս ձեռքով կը ծախսէ, անձնապէս բնաւ չօգտուելով այն եկամուտէն զոր կը ստանայ իրեն ենթակայ 80,000 զիւղէ, ինչպէս ինծի հաւաստեց Ս. Ստեփաննոսի արքեպիսկոպոսը: Աւրիշ տեղ պիտի խօսիմ Հայոց և քանի մը ուրիշ արեւելեան քրիստոնեաներու կրօնքին վրայ անձնապէս քաղած տեղեկութիւններու համաձայն...

1655ին Պարսկաստանէն վերադարձիս երեք Եկեղեցիներէն անցայ Փետրուարի վերջերը: Մեր կարաւանը տասնութէկ օր կանգ առաւ հոն, թէ՛ թանձր ձիւնին պատճառաւ որ ճամբաները գոցած էր և թէ սրովհետև Հայերը կը փափաքէին Բարեկենդանը հոն անցընել և յետոյ հաղորդուիլ: Մեր ժամանումին յաջորդ օրը այցելեցի հայրապետին: Զիս տարին փոքր սենեակ մը, ուր փոխաթիւ վրայ նստած էր արեւելեան ձևով սրունքները խաչաձեւած, մեր դերձակներուն պէս: Անենակին շուրջը նոյն ձևով նստած էին չորս արքեպիսկոպոս և ինը եպիսկոպոս: Եպիսկոպոսներէն մէկը բաւական լաւ իտալերէն կը խօսէր: Հայրապետը շատ սիրալիբ ընդունելութիւն մը ըրաւ ինծի: Երեք ժամու շափ մնացի անօրքով: Մեր տեսակցութեան ընթացքին յայտնեց թէ շատ պիտի փափաքէր քանի մը ֆրանսացի կրօնաւոր տեսնել բարեկամաբար խօսակցելու համար անոնց հետ, որովհետև գիտէր թէ ֆրանսական ազգը քաղցրաբարոյ է և քաղաքակիրթ, մինչ Իտալացիները, ընդհակառակն, կ'ուզեն միշտ տիրաբար գործել: Այս խօսքերուն ատեն ներս մտաւ վանքին արեղաներէն մէկը, որ

քսան երկու տարիէ ի վեր մարդու հետ չէր խօսած՝ ինք իրեն պարտադրած ապաշխարութեամբ մը: Վանքին մէջ բազմաթիւ արեղաներ կան որ յաճախ աւելի դժնդակ ապաշխարութեանց կ'ենթարկեն իրենք զիրենք: Այս արեղայէն աւելի ժանտատեսիլ և ծիրած մարդ չեմ տեսած: Հայրապետը զինքը զիտմամբ բերել տուած էր: Իր հեղինակութիւնը պարտադրելով այս երկարատես լուսթիւնը խզել տուաւ, և երբ հրամայեց խօսիլ՝ անմիջապէս հնազանդեցաւ:

Երբ հայրապետէն հրատեչտ առնել կ'ուզէի, բերել տուաւ նախընթիքը, որ կը բաղկանար պանիրէ, տանձէ, խնձորէ և տեսակ մը սոխէ: Երբ այս ամէնը ստճարային վրայ գրին, որ գետինը փոռուած կաշի մըն է, հայրապետը իրեն մօտեցնել տուաւ, օրհնեց հացը, յետոյ բրդեց, մէյ մէկ պատառ տուաւ իւրաքանչիւրին, բայց ինք միայն պատառ մը առաւ: Օրհնեց նաև զինին, բայց ինք չլսեց, իսկ ես, տանձ մը ուտելէ և գաւաթ մը զինի խմելէ ետք, հրատեչտ առի հայրապետէն և մեկնեցայ: Իր կարգին պիտի պատմեմ թէ ինչպէս կ'ապրի հայ կղերը և որքան մեծ խտտաբերութեամբ, թէ ինչ խտտութեամբ կը պահեն մեծ պահքը և պահքի ուրիշ օրերը, որոնց համագումարը վեց ամիսէն աւելի է:

Երբ կարաւանը երեք Եկեղեցիները կը գտնուէր, հայրապետը ամէն օր ինծի զինի, սեխ և ուրիշ պտուղներ զրկելու պատիւը ըրաւ: Յաճախ երկու կամ երեք ոտք երկարութեամբ պատուական կարմրախայտներ ալ կ'աւելցնէր:

Բարեկենդանի Կիրակիին նախօրը Ծաբաթ օրը հայրապետը ամբողջ կարաւանը, տէր և ծառայ, հրաւիրեց Կիրակիի պատարագին և յետոյ վանքին մէջ ճաշելու: Այս Կիրակին Հայերուն համար իրենց Բարեկենդանին վերջին օրն է. յաջորդ օրը կը սկսին պահք պահել: Երբ արարողութիւնները վերջացան, ամէն մարդ անցաւ կամարակապ երկար սրահ մը, որ 15էն 20 ոտք լայնութիւն ունէր: Երկու կողմերը սրահին երկայնքը երկու սեղան կայ բազմաթիւ քարերէ շինուած: Պատերուն երկայնքն ալ քարաշէն նստարաններ կան: Սրահին մէկ ծայրը ուրիշ սեղան մը կայ չորս ոտք քառակուսի, որուն վերեւը կամար մը կայ՝ յետոյ չորս սիւնի վրայ որոնք կը միանան

չորս անկիւններուն և կը կազմեն սեղանին ամպհոզանին: Առջևը դրուած է հայրապետին համար աթոռ մը, ուրկէ կարելի է տեսնել սրահին մէկ ծայրէն միւսը, և երկու աթոռ ալ աջ և ձախ կողմերը երկու արք. եպիսկոպոսի համար: Այս սեղանը և աթոռներն ալ քարաշէն են: Միւս արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, արեղաները և հիւրերը նստած էին երկու երկար սեղաններու շուրջը: Հայրապետին աթոռին զիմացը, դահլիճին միւս ծայրը, պղտիկ դուռ մը կայ, ուրկէ երեք աստիճան բարձրանալով, կը բերեն խոհանոցին. կերակուրները: Ինչ որ մեզի բերին այդ օրը քանի մը տեսակ զոյնզոյն բիւլաւ էր, ինչպէս նկարագրած եմ Սարային նկարագրութեան մէջ⁽²⁾: Մեզի տունն նաև քանի մը տեսակ ձուկ, և, ի մէջ այլոց, անմահական կարմրախայտեր: Ընդամէնը չորս աման բերին, բայց ամէն աման այնքան մեծ էր և այնքան լեցուն որ մէկ մարդ աւելի ծանրը չէր կրնար վերցնել: Ամանները զետինը հայրապետին սեղանին առջև դրին: Երբ ամենուն կափարկները բացին, հայրապետը ոտքի ելաւ և միւս բոլոր ներկաներն ալ անոր հետևեցան, յետոյ աղօթք մը ըրաւ և օրհնեց կերակուրները: Այն ատեն վեց եպիսկոպոս շերտներով կերակուրները այս մեծ ամաններէն առին և աւելի փոքր ամաններու մէջ լեցնելով երկու երկար սեղաններուն վրայ դրին: Ամէն մարդ հողէ մեծ ըմպանակ մը ունէր, որուն մէջ զինի կը լեցնէին երբ պարպուէին, և զինին շատ ընտիր էր: Հայրապետին և անոր սեղանակից երկու արքեպիսկոպոսներուն երկու քական հակելթ և խաւարտներ տուին, ինչպէս նաև միւս արքեպիսկոպոսներուն և եպիսկոպոսներուն սրճեք սեղանակից էին հիւրերուն: Նոյն իսկ եպիսկոպոսներէն ոմանք քիչ մը ձուկ կերան միայն և զինի չլածեցին:

Ճաշը վերջանալուն մօտ, եպիսկոպոս մը, ձեռքը թուզթ մը և կաղամար մը բռնած, մէկ սեղանէն միւսը անցնելով հարցուց թէ իւրաքանչիւր սեղանակից ի՞նչ կը փափաքէր տալ ըստ իր կարողութեան: Եպիսկոպոսը այդ օրը միայն կ'արձանագրէ սեղանակիցներուն անունները և այն գու-

մարը զոր կը փափաքին նուիրել: Նուէրները կը հաւաքուին յաջորդ օրը: Հարուստ վաճառականներ կան որ մինչև երկու քուման կուտան, և նուազագոյնը զոր ծառայ մը կուտայ մէկ Օր⁽³⁾ է: Ես արձանագրուեցայ չորս թօման, որ 60 սկուզէն աւելի է, պայմանաւ որ յաջորդ օրը, արարողութիւններէն ետք, աղօթք կարդացուէր թագաւորին և Օրլէանի դուքսին համար, որմէ կախում ունենալու պատիւը ունէի: Եպիսկոպոսը չպատասխանեց, այլ գնաց կաթողիկոսը գտաւ, որ անմիջապէս գայն վերագարծուց ըսելու համար թէ նոյն իսկ եթէ բան մը չտայի, իրենք պարտաւոր էին աղօթել քրիստոնեայ մեծագոյն թագաւորին, Օրլէանի դուքսին և համայն արքայական գերդաստանին համար: Եպիսկոպոսը արձանագրութիւնները վերջացնելէ ետք, կերակուրները վերցուցին և կաթողիկոսը փառք տուաւ: Յետոյ պտուղ բերին և մեծաքանակ սեխ: Քիչ մը ետք, երեկոյան ժամերգութեան գանդակները հնչեցին և ամէն մարդ եկեղեցի գնաց. որովհետև հոս թուրքիա չէ այլևս ուր քրիստոնեաներուն արգելուած է գանդակ գործածել: Պարտիք թագաւորը ամէն թոյլտուութիւն ըրած է անոնց և հայկական ամէն եկեղեցի իր գանդակը ունի, եթէ քրիստոնեայ աշխարհէն կրցած է բերել տալ:

Երեկոյան ժամերգութեանէն ետք, հայրապետը մարդ զրկելով վիս հրաւիրեց ըսելու համար թէ իրենց սովորութիւնը չէ այդ օրը ուրիշ օրերէ աւելի զուարճանալ, բայց զխանալով որ Եւրոպայի մէջ քրիստոնեաները մեծ խրախճանքներ կը կազմակերպեն, կը փափաքէր որ ես և միւս բոլոր վաճառականները որ քրիստոնէաբնակ երկիրները կ'երթանք, գոմէշամարտի մը զբօսանքը վայելենք: Այս երկրին մէջ գոմէշ շատ կայ և հողը հերկելու կը գործածուի: Էգերը շատ կաթ կուտան, որով կարագ և պանիր կը շինեն: Այս կաթը ուրիշ ամէն տեսակ կաթի հետ ալ կը խառնեն: Էգեր կան որ

(2) Օրը պարսկական զրամ մըն է, որ թօմանին մէկ տասներորդին հաւասար էր:

Սկուզ, scud, éca, այդ թուականներուն կէս անգլիական ոսկիէն քիչ մը պակաս կ'արժէր: Գոյութիւն ունէր արծաթ սկուզ մըն ալ:

Pintre հեղուկի հին չափ մըն է, որ Բարիդի մէջ 93 սանթիմիթրի հաւասար էր:

(3) Թափեռնիէ Կ. Պոլսոյ պալատին նկարագրութիւնը հրատարակած է:

օրական մինչև քսաներկու բենդ (pinte) կաթ կուտան:

Գոմէշամարտը տեսնելու համար մեզ տարին որմափակ ընդարձակ բակ մը, ուր ութը գոմէշ կար: Զանոնք իրարու դէմ զրգոհու համար կարմիր լաթ մը ցոյց տուին անոնց, ինչ որ զանոնք նախ այնքան մօլեղնեցուց որ կոտորի առաջին հարուածներուն տակ երկուքը գետինը փոռեցան, իսկ միւսները ամէնքն ալ վիրաւորուեցան: Երբ գոմէշամարտը վերջացաւ, մեծաքանակ փայտ բերին և իրարու վրայ ղիզեցին կրակի տալու համար, ինչպէս կ'ընեն Յրանասայի մէջ Ս. Յովհաննէսի նախատեսակին: Փայտը ղիզուելէ ետք, արքեպիսկոպոսներէն մէկը սպիտակ մեղրամոմէ մոմ մը տուաւ ներկաներէն ամէն մէկուն, թէ՛ տէրերուն և թէ՛ ծառաներուն, որոնք իրեն ըսին թէ յաջորդ օրը ի՛նչ պիտի տային մեղրամոմին փոխարէն: Երբ ամէն մարդ վառած մոմերը բռնած էր, հայրապետը, եպիսկոպոսի մը մականին ձեռով շինուած զուազանով մը յառաջացաւ շարական մը երգելով: Իրեն կը հետեւէին միւս բոլոր եկեղեցականները և աշխարհականները: Երեք անգամ փայտի դէզին շրջանը ըրաւ: Դէզը կրակի տալու պատիւը վայելիլու համար, վաճառականներէն մէկը խոստացաւ որոշ քանակութեամբ իւղ տալ եկեղեցիին կանթեղներուն համար: Ուրիշ մը աւելին խոստացաւ: Երրորդ մը երկրորդէն աւելին տալ խոստացաւ, և ի վերջոյ կրակը վառելու պատիւը վիճակեցաւ անոր որ խոստացաւ առաւելագոյնը տալ: Անմիջապէս ամէն մարդ իր մօմը մարեց զայն խնամքով պահելու համար, որովհետև հզօր հաւատքը ունին թէ երբ ծովագնացութեան ասան փոթորիկ ծագի, այս մոմերէն մէկը վառելով և աղօթք մը ըսելէ ետք մօմը ծովը նետելով փոթորիկը անմիջապէս կը դադրի: Հետաքրքրութեամբ հարցուցի թէ ի՞նչ էր կրակի և մոմի այս արարողութեան ծագումը: Ահաւասիկ իրենց պատասխանը: Ս. Կոյսը, ըսին, ծննդաբերութենէն քսան օր ետք Երուսաղէմ գնաց իր օրդուոյն Յիսուսի և Յովսէփի հետ, և տաճարը մտաւ ուր կը գտնուէր Սիմէոն: Այս սուրբ ծերունին Փըրկիչը թեկերուն մէջ առաւ և սկսաւ երգել: Արդ արձակեալ զձառայս քո, Տէր, ըս բանի քու ի խաղաղութիւն: Երգը աւարտելէ ետք

ամբողջ ժողովուրդը սկսաւ գոչել թէ Տէրը ծնած էր և տաճարէն դուրս ելլելով բարձրադաղակ յայտարարեց քաղաքին մէկ ծայրէն միւսը: Գիշեր էր: Ամէն մարդ տաճար վազեց աշտանակներ բռնած, և շատերը, կարծելով թէ Տէրը իրենց դուռներուն առջևէն պիտի անցնէր, կրակ վառեցին: Ահա թէ ինչ պատմեցին ինձի այն ատեն: Հայոց այս արարողութիւնը տեսակ մը Շանաըլի էօրի տան է, որուն հայերէն Ter en arache կ'ըսեն, այսինքն ուր որ է Տէր: Արարողութենէն ետք զանգակը հնչեցուցին, ամէնքը եկեղեցի գացին և յետոյ իրենց տեղերը մեկնեցան: Գիշերն ի բուն, Հայերը, տէր ու ծառայ, Բարեկեցականը վերջացնելու համար լաւ մը խմեցին, մինչ հայրապետը եկեղեցին դարդարել տուաւ ամենէն գեղեցիկ զարդերով:

Երեք պիտի չկարենայի հաւատալ թէ այսքան հարստութիւն կրնար գտնուիլ մահմետական տիրապետութեան ենթակայ քրիստոնեաներուն եկեղեցիներուն մէջ: Հարիւր տարի առաջ այս հայրապետական եկեղեցին այսքան ճոխ զարդեր չունէր: Պարսից Մեծ Շահ Ապպասը Հայերը վաճառականութեան մղելէն ետքն է որ հարստացած են: Սկիզբները շատ դրամ կը շահէին և յաճախ ուխտ կ'ընէին և դրամական մեծ նուէրներ կ'ընէին եկեղեցիին, ուր այսօր այնքան փարթամ զարդեր կան որքան ուրիշ սեւէ քրիստոնեայ եկեղեցիի մէջ: Եկեղեցիին դասը զարդարուած է վենետիկեան օսկեղիպակով, և թէ՛ դասը և թէ կոնքը, ուրկէ աստիճաններով սեղան կը բարձրանան, ծածկուած էին թանկարժէք զորդերով, ուրովհետև եկեղեցիէն ներս մտնելէ առաջ Հայերը իրենց կօշիկները կը հանեն և երբիք չեն ծնրադրեր, ինչպէս կ'ընեն Եւրոպացիները, այլ սաքի վրայ կը կենան: Պատարագի ատեն, տեղական ձեռով կը նստին, բայց աւետարանը կարդացուելու ատեն ամէն մարդ սաքի կ'ելլէ: Արարողութեանց ամբողջ ընթացքին, զլուխնին ծածկուած է, միայն վերացումի ատեն զլուխնին կը բանան և երեք անգամ երկրպագութիւն կ'ընեն: Սորանին վրայ խաչ մը և վեց սուկեայ աշտանակ կար, իսկ աստիճաններուն վրայ արծաթէ վեց աշտանակ շուրջ հինգ օտք բարձրութեամբ: Բազմաթիւ շարականներ երգուելէ ետք, հայրապետը եկաւ մե-

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԿԵԱՆՔԸ

Իսկ վանքում ո՞վքեր են եղել Նարեկացու ուսուցիչները, ի՞նչպէս է կազմակերպուել Նարեկացու մտաւոր աշխարհը, այս հարցերին որոշ պատասխան մեզ տալիս է «Յայտմաւուրքը»։ «էր սուրբն Գրիգոր վարդապետն ի վանս Նարեկայ։ Մենալ և վարժեալ ինքն և եղբայրն իւր Յովանէս առ Երջանիկ վարդապետն Անանիա որ էր հօր եղբայր մօրն Գրիգորի և Յովանիսի։ Զորս առեալ էր վարդապետն Անանիա ի վանս Նարեկայ առ իւր հարազատ որդին և եղբօր դստերն իւրոյ, և ուսուցեալ զուսումն աստուածային գրոց անյագ բաղձանօք»¹⁾։ Ուրեմն Նարեկացու անմիջական ուսուցիչն է եղել վանքի վանահայր և դպրոցի հիմնադիր Անանիան, որն իր ժամանակի նշանաւոր գիտուն մարդկանցից մէկն էր։

Թէպէտ Անանիայից մեզ քիչ գործեր են հասել, բայց ժամանակակիցների արտայայտած կարծիքներից պարզ երևում է նրա՝ իբրև ուսուցիչականի վայելած պատիւն ու հեղինակութիւնը։ Առանձնապէս ուշագրաւ են պատմիչ Ուխտանէս եպիսկոպոս Սեբաստացու՝ Անանիային ուղղած գնահատական-ներբողական խօսքերը իր գրած պատմութեան ներածականում։ Ուխ-

տանէսը, որ իր Պատմութեան գիրքը գրել է Անանիայի յանձնարարութեամբ, ներածականում մի զարմանալի երկխոսք և յարգալիր վերաբերմունք է հանդէս բերում Անանիայի նկատմամբ՝ չնայած ինքը եպիսկոպոս է, ըստ երևոյթին նա Անանիայի հետ յաճախակի հանդիպումներ և զրոյցներ է ունեցել իր գրելիք պատմութեան նիւթի շուրջը, ապա յետոյ համաձայնուել է կատարել այդ գործը, որի համար ասում է. «Արդ սկսայց այսուհետև՝ սկիզբն զնելով զսէր և զխոնարհութիւն՝ վայել է քում սրբութեանդ և պարկեշտ վարուցդ՝ ով պատուական զուխ և պատկառելի, զի իբրև ընդ հայելի հայելով ի քեզ տեսանեմք զամենայն բարեկարգութեան ձև և նմանութիւն և իր և օրինակ»²⁾։

Անանիայի նկատմամբ Ուխտանէսի ունեցած շատ բարձր ու զրական կարծիքը միաժամանակ լոյս է սփռում մի բաւական մութ մնացած հարցի վրայ։ Բանասիրութեան մէջ կան կարծիքներ, որ Անանիա Մոկացի կաթողիկոսի կասկածները Անանիա Նարեկացու թոնդրակեցիներին յարած իրենիւ մասին գուցէ և անհիմն չեն եղել, որովհետև վերջինս կաթողիկոսի պահանջով թոնդրակեցիների դէմ գրած իր խոստովանագրում ասում է, թէ ինքը հիւանդ լինելով՝ հարկից ստիպուած է գրել այդ։ Բայց Անանիայի այդ արտայայտութիւնը ըստ էութեան այնքան էլ հիմք չի տալիս նման կարծիքի, որովհետև, հակառակը, նա շատ

¹⁾ Գիրք, որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ ԳՃԳԳ (394)։

²⁾ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն, Վազարշապատ, 1871, էջ 3։

տաքսեայ գործով մը ծածկուած գահու մը վրայ բազմեցաւ. իր աջ կողմը, յեցակի մը վրայ նստած էին չորս արքեպիսկոպոսներ։ Արարողութիւնները հանդիսաւորապէս կատարեց արքեպիսկոպոս մը, որուն քով երկու եպիսկոպոս կար։ Արարողութեանը վերայ պիտի խօսիմ Հայոց կրօնքին վրայ խօսելու ատեն։ Հայրապետը յետոյ թագաւորին և Օրլէանի դուքսին համար աղօթել տուաւ. յետոյ արքեպիսկոպոսը աւետարա-

նը, զոր կարդացած էր, համբուրել տուաւ հայրապետին, արքեպիսկոպոսներուն, եպիսկոպոսներուն և համայն ժողովուրդին։ Այդ գիրքին կողքերէն մէկուն վրայ ընդունուեալ մասունքներ կային բիւրեղի մը տակ, և գիրքին այս կողմն էր որ համբուրել կուտար։ Արարողութիւնը վերջանալէ ետք հայրապետը օրհնեց ժողովուրդը, շատերը ձեռքերը համբուրեցին, և յետոյ, ամէն մարդ մեկնեցաւ։

Թարգմ. Մրանսերէն քննարկէն
ՀԱՅԿ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԺԱՆ-ՊԱԹԻՍԹ ԹԱՎԵՐՆԻԷ

գալարացած է կաթողիկոսի դէմ և անկամ է գրել իր խոստովանագիրը ոչ թէ այն պատճառով, որ իրօք եղել է աղանդաւոր, այլ այն պատճառով, որ այդպիսին չլինելով՝ խիստ վերաւորուած է զգացել իրեն, որ կասկածուել է այդ բանի մէջ և ստիպուած է եղել կասկածները փարատելու համար գրել իր ուղղափառութեան մասին:

Անանիան «Գիր խոստովանութեան» սկզբում խորապէս դառնացած՝ բողոքով դիմում է կաթողիկոսին, թէ ինչպէս՝ նա չնայած իրենց «նախահարք և գաւառաւ», «ազգաւ և ասորժակովք», «վարժիւք և կենակցութեամբ», միանման կեանքին և անցեալին, պահանջել է իրենից իր հաւատարմ հաւատքի մասին գրաւոր յայտարարութիւն: Ուխտանէսի գրքի երկրորդ մասը, որ վերաբերում է հայոց և վրաց եկեղեցիների անջատման պատմութեանը, ցոյց է տալիս նրա հեղինակի քաղկեդոնականութեան համոզուած հակառակորդ և հայ եկեղեցու դաւանանքի պաշտպան լինելը: Հետևաբար, քանի որ այդ գիրքը գրուած է Անանիայի ծրագրով ու յանձնարարութեամբ, և Անանիան վայելում է հեղինակի ամենաջերմ համակրանքը ուստի դա էլ ապացուցում է, որ նա, այնուամենայնիւ չէր անցել բացայայտ աղանդաւորութեան:

Ուխտանէսի՝ Անանիային տուած բնութագրին նայելով երեւում է, որ նա հաւանաբար միստիկ էր կամ ունէր միստիկի հակումներ. «Իսկ դու կենդանախարուկեալ քոյին սուրբ և պարկեշտ վարուք և յարածգնեալ խստակիր վշտաբերութեամբ...»¹⁾ արտայայտութիւններով՝ ներածականում մի տեղ դիմում է նրան պատմիչը: Իրրև միստիկ, Անանիան կարող էր քննադատական վերաբերմունք ունենալ եկեղեցակաՆութեան նկատմամբ, որը զսպելու նպատակաւ, այն ժամանակ (թողարկեցիների պայքարի ծաւալման պայմաններում) կաթողիկոսի կողմից հեշտութեամբ որակուել է որպէս հնարաւոր աղանդաւորութեան արտայայտութիւն: Յետագայում ճիշտ այդպիսի վերաբերմունքի է հանդիպել նաև Գրիգոր Նարեկացին:

Վանքում՝ ուսման տարիներին Նարեկացու հոգեւոր կեանքը կազմակերպողը եղել է տիեզերական վարդապետ Անանիան: Անշուշտ Նարեկացին Նարեկում ստացել է այն բոլորը, ինչ որ կարող էին տալ ժ. դարի ամենաառաջաւոր դպրոցները: Իսկ դա ամենից առաջ ինքնուրոյն թէ թարգմանական կրօնական ու փիլիսոփայական ահազին զրականութեան ամենալայն իւրացումն ու ծանօթութիւնն էր: Մեզ ոչ մի տեղեկութիւն չի մնացել այն մասին, թէ Նարեկացին արդեօք սովորել է օտար լեզուներ: Ելնելով այն փաստից, որ նա իր անունը և մի քանի այլ անուններ որոշ առիթներով ստուգաբանել է իրրև յունարէն բառեր (Գրիգոր-արթուն, հսկող, Ստեփանոս-պսակ և այլն), ենթադրուել է, որ նա իմացել է յունարէն լեզուն:

Նարեկացու վանական կեանքը թէպէտ հարուստ չէ քաղմազան դէպքերով, բայց, այնուամենայնիւ, չպէտք է կարծել, որ այն անցել է խաղաղ ու հանդարտ՝ առանց ալեկոծութիւնների և ներքին ցնցումների: Վերածնութեան սկզբնաւորման այդ դարաշրջանում, երբ գնալով ուժեղանում էր պայքարը ֆեոդալական եկեղեցու դէմ, երբ եկեղեցին էլ իր հերթին զստանօրէն հաշիւ էր տեսնում իր հակառակորդների հետ, շատերն էին կասկածուած և մեղադրուած աղանդաւորութեան մէջ ու ենթարկուած հալածանքների: Նարեկացին նոյնպէս գերծ չի մնում կասկածների ու հալածանքների ենթակայ լինելուց: Նա ևս մեղադրուած է իրրև թողարկեցութեան մասնակցի: Այս առթիւ «Յայտմաւուրք»-ի մէջ շատ զգուշաւոր ձեւով գրուած է հետեւեալը. «Եւ զի ջան և փոյթ էր սրբոյն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զեղծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցւոյ սրբոյ ի ծուլից և ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերստին նորոգել: Վասն որոյ այսպսնէին զնա ըրիտ և սոպո մարդիկ և համբաւէին զնա ծայթ»¹⁾: Սրա համար մի վայր են հաւաքուած եպիսկոպոսներ և իշխաններ, ազատներ և տանուտէրեր, որպէսզի Նարեկացուն հրապարակով յանդիմանեն և ապա աքսորեն

¹⁾ Ուխտանէս եպիսկոպոս, Պատմութիւն, Վաղարշապատ, 1871:

¹⁾ Գիրք, որ կոչի Այսմաւուրք, Կ. Պոլիս, 1730, էջ 391:

«զնա պատուհասիս որպէս զհերձուածող»:

Այս գէպքի յիշատակութիւնը միանգամայն պարզ ցոյց է տալիս, որ Նարեկացու գործունէութիւնը՝ եկեղեցու գէմ ուղղուած քննադատութիւնը աղանդաւորական բնոյթ չի ունեցել (որովհետեւ անմիջականօրէն եկեղեցին նա չի ժխտել), այլ, ինչպէս հաւանաբար Անանիայինն էր, եղել է միատիկայի ելակէտներէր: Այդ շրջանում միտախցիզմը նմանապէս՝ ֆետալականութեան գէմ գծողութեան ու պայքարի արտայայտութիւններէր մէկն էր, որը սովորաբար նախապատրաստում էր անցումը գէպի աղանդաւորութիւնը, ուստի շատ բնական է, որ Նարեկացու հակառակորդները նրան իրրե հերձուածող ներկայացնելով՝ դատել ու պատժել ցանկային:

Մեզ ոչինչ ստոյգ յայտնի չէ, թէ ինչպէս է Նարեկացուն յաջողուել ազատուել իր համար կազմուած դատարանին ներկայանալուց. կամ եթէ ներկայացել է, ինչպէս է արդարացել: Այս գէպքի շուրջը մնացել են միայն ժողովրդական ծագում ունեցող հրաշքներ, որոնցից մէկը անցել է Ճեայմաւուրքօի կենսագրականի մէջ: Ըստ այդ հրաշքների, երբ կազմուած դատարանի կողմից երկու պատուիրակներ են գալիս Նարեկացուն տանելու՝ նա նրանց ընդունում է առանց թշնամանքի և հրաւիրում է հացի ու առաջներն է դնում երկու խորոված աղաւնի: Պատուիրակները սակայն նկատում են, որ օրը ուրբաթ է (պաս է) և իրենք չեն կարող աղաւնիները ճաշակել. այն ժամանակ Նարեկացին ներողութիւն է խնդրում իր մոռացկոտութեան համար և ասում է իր հիւրերին, որ հրաման տան աղաւնիներին թոչնչուելու: Նրանք այդ չեն կարողանում անել, այն ժամանակ Նարեկացին է հրամայում, և աղաւնիները թե աննելով թոչնչում են: Եկեղեցիքը հրաշքը տեսնելով սարսափած և ամօթահար եղած հեռանում են, և այդպիսով դատը չի կայանում:

Այս, ինչպէս և շատ ուրիշ հրաշքներ, որ պատմուած են Նարեկացու մասին, ապացուցում են երկու բան: Նախ՝ այն, որ բանաստեղծը, ինչպէս ինքն էլ է վկայում, իր կենդանութեան օրով իսկ ժողովրդի մէջ հռչակուած ու սիրուած է եղել իրրե հրաշագործ և այդ անշուշտ հենց իր միտակ

լինելու պատճառով¹⁾: Այնուհետև՝ այն, որ պատմական ճշմարտութիւն է պաշտօնական եկեղեցականութեան կողմից նրա հետապնդուելը: Այս վերջին հանգամանքի կապակցութեամբ ժողովուրդը շատ շեշտուած կերպով արտայայտել է սիրած անձնաւորութեան հակառակորդների նկատմամբ իր հեզման քն ու հակակրանքը: Ահա Նարեկացու հրաշագործութիւնների մասին պատմող ժողովրդական վիպերգների մէկի մի հատուածը, որն ըստ երևույթին վերոյիշեալ երկու պատուիրակների գալստեան գէպքի բանաստեղծական արտացոլման մի այլ տարբերակն է հանդիսանում:

Երկու վարդապետ կին կլօ Սիս
Ուրինք բարձր ին բունի բեանց Մասիս
Էան չափիւնի ջուր լցուցին
Ասածոյ շնորով դարգրուցին
Նարեկացուն օրողիցին:
Մենք էլ տեսնք ուր բարամաթ
Ծառա կեղնեմ Նարեկացուն:
Իրենց օրողկած չափիկի ջուր փոխեց
Գրած բամբակ ուր ծնօր բունեց
Վառվով կրակ մէջ փաթուլեց
Չափիկի ջրի մէջն էլ դրեց
Վարդապետացն էլ օրողիցի:
Վարդապետներ որ էն տեսն
Ինոնք էնտեղ շատ զարմացան
Էրթանք տեսնենք Նարեկացին:
Եկան խասան Նարեկ սարին
Հրեշտակ խապար տվով Նարեկացուն:
Քյո վարդապետք էկան քեզ խուր
Ծառա կեղնեմ Նարեկացուն:
Վեղար գլխէն էլ վեր ի տիր
Խոփովու բեպանակ տուեց թելին
Գնաց խասաւ մէջ ուր սարին
Էկաւ դիմաց ջուխտ վարդապետին
Աջն առեց ջուխտ վարդապետին:
Վարդապետներ ջուր ուղեցին
Ծառա կեղնեմ էն խովովուն
Խաչակներեց վեր էն սարին
Գաւգար իգար վեր չոր քարին
Ջուր բղխեցուց քարի մէջէն:
Առաւ խմցուց վարդապետաց
Ծեր սիվտակ մուրունին ճահիլացաւ
Էնոնք էնտեղ շատ զարմացան
Էնոնք էնտեղ անմահացան
Ծառա կեղնեմ Նարեկացուն²⁾:

Այն ենթադրութիւնները, որ իրր թէ

¹⁾ Բնաւ պատահական չէ, որ եկեղեցական խաւից դուրս եկած միջնադարի մեր գրողներէր միայն Նարեկացու մասին են ստեղծուել ժողովրդական վիպական երգեր:
²⁾ Լոււա, Թիֆլիս, 1899, Բ. գիրք:

Նարեկացին կարող էր իրօք աղանդաւոր եղած լինել, բայց յետոյ զզջացած ու հրաժարուած, որն է լուրջ հիմք չունենն։ Այս բովանդակութեամբ՝ իրօք, մի քանի յիշատակութիւն կայ իր մասին «Ողբերգութեան մատեան»-ի մէջ. այսպէս՝ Հն գլխում (որի՝ հեղինակին պատկանելը դեռ վիճելի է) գրում է, որ տարուելով հերձուածողական չարափառութեամբ, արտաքուսել է զբախտից, բայց այժմ ուղիղ և ամբիժ գաւառանքով նորից պիտի բարձրանայ երկինք։ Սակայն այս և նման այլ արտայայտութիւնները դժուար է անպայման ինքնակենսագրական գեղումներ համարել՝ նկատի առնելով միտախցիկով պայմանաւորուած «Ողբերգութեան մատեան»-ը ընդհանուր ոճի կողմերից մէկը՝ այն, որ բանաստեղծը իր այդ պոէմում, առհասարակ, անթիւ անհամար զանազան տեսակ յանցագործութիւններ էլ է վերագրում ինքն իրեն, որոնք երբեք չէին կարող իրական - կենսագրական լինել։

Նարեկացու աղանդաւոր լինելու հաւանականութեան համար իրրե փաստ բերուում է նաև այն, որ նրա դաստիարակ Անանիան կասկածուել է թոնդրակեցութեան մէջ, իսկ հայրը՝ Սոսրով Անձևացեաց եպիսկոպոսը բանադրուել է իրրե հերձուածող։ Ինչ վերաբերում է Անանիային, այդ մասին վերեւում խօսուեց արդէն. իսկ Սոսրովի մասին պէտք է ասել հետեւալը։ Սոսրովին ծեր հասակում Անձևացեաց թեմի եպիսկոպոս է նշանակում Անանիա Մոկացին, սակայն շատ չանցած՝ 953 թուին Սոսրովը ապստամբում է նրանից։ Բայց ինչ տեսակ ապստամբութիւն էր դա, արդեօք թոնդրակեցիական, հաւանաբար՝ ոչ. որովհետև ըստ պատմիչների տուած տեղեկութիւնների՝ ապստամբութեան մէջ նրա համախօնը, նոյնիսկ զրդիլը եղել է Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսը, իսկ Յակոբի մասին, նայելով Օրբէլեանի թողած շատ ամերամասն տեղեկութիւններին, հաստատապէս կարելի է ասել, որ թոնդրակեցի չէր։ Անկախ այս բոլորից, միևնոյն է, եթէ Նարեկացու հայրը և զաստիարակը թոնդրակեցիներ էլ լինէին, այդ դեռ չի կարող զիտական հիմք լինել նրա աղանդաւորութեան ապացուցման։

Այսպիսով, թէև ըստ երևոյթին նա-

րեկացու զէմ (թեկուզ կեանքի վերջին շրջանում նրա արդէն ձևաւորուած միտակ լինելու պատճառով) լարուած մարդիկ նրան մեղադրել են հերձուածողութեան մէջ, բայց այդ մեղադրանքի հիմաւոր լինելը ընդունելու համար այսօր դեռ ոչ մի լուրջ փաստ չունենք։ Ընդհակառակը, կայ փաստ, որ նա՝ աղանդաւորութեանը յարած կճափա վանքի վանաօրը նամակ է գրել՝ ուղղուած թոնդրակեցիներին ուսմունքի զէմ։ Ոչ միայն բացատուած չէր, այլ նոյնիսկ անհաւանական չէր, որ, թերևս, Նարեկացին հատապարտ միտակայից անցներ աղանդաւորութեանը, բայց, ինչպէս յայտնի է, նա իր միտակական պոէմ «Ողբերգութեան մատեան»-ը արտելուց շատ չանցած՝ վախճանուեց։ Ուրիշ բան է, ի հարկէ, այն, որ աղանդաւորական շարժումների հետեանքով ժ. դարում առաջացած աշխարհիկ-հումանիտական տրամադրութիւնները, ինչպէս պիտի տեսնենք, իրենց որոշակի արտացուցում են գտել նրա ստեղծագործութիւնների մէջ։ Իր ժամանակի Տանթէն թէպէտ աղանդաւոր չէր, բայց նոյն այդ աղանդաւորութեան շնորհիւ հասարակութեան մէջ առաջացած նոր տրամադրութիւններն ու պատկերացումներն արտայայտող առաջին մեծ բանաստեղծը հանդիսացաւ Արուստայում։

Նարեկացուց Մնացել է բուսական հարուստ գրական ժառանգութիւն, ինչ որ նրա երկերից՝ թուարկուած են հնագոյն ձեռագիր կենսագրականում, դրանք բոլորն էլ հասել են մեզ և դեռ աւելին։ Այդ երկերն են՝ «Մեկնութիւն Երզոց Երզոյն Սուղամի», «Յիշատակագրութիւն պատմութեան ամենագոր նշանի աստուածեան խաչին», որ ի վերուստ ամենահայեաց նախատեսն ակնարկութեան է ի ստորին կողմաց կայից աշխարհի ազգացն Յունաց բերեալ հանդուցաւ ի սահմանս վայրից գաւառին Մոկաց, ի շինուած բնակութեան ուստին որբութեան, որ կոչի Ապարանք», սրան աւրելիք երկու ներքող նուիրուած Ս. Պաչին և Աստուածածինն, ուրիշ երկու ներքող առանձին՝ նուիրուած առաքեալներին և Յակոբ Մձբնայ եպիսկոպոսին», «Գանձ ի գալուստ Սուրբ Հոգւոյն», «Գանձ ի սուրբ եկեղեցի», «Գանձ ի սուրբ խաչն աստուածընկալ», «Տաղք» (թուով 25ից աւելի),

«Մատենան ողբերգութեան» և «Թուղթ ի հոյակապ ուխտն կճափայ, վասն կարծեացն անխճելոց թոնրակեաց Յանէսի և Յամբէսի»: Բացի սրանցից նարեկացուն վերագրուել են նաև մի քանի բանաստեղծական այլ գործեր, դաւանաբանական ճառեր և մեկնարանական գրուած քներ, որոնք բանասիրութեան կողմից իրաւացիօրէն համարուել են հեղինակին անհարազատ, որովհետև գրանց գրութեան ոճը բոլորովին նման չէ նարեկացու ոճին և գրանց նարեկացունը լինելու մասին ոչ մի յիշատակութիւն չկայ ոչ նրա կենսագրականներում և ոչ պատմագիրներէր գործերում:

Երբուանից է սկսում և ո՞րքան է տեսել նարեկացու ստեղծագործական կեանքը: Եթէ նկատի առնենք, որ բանաստեղծի մեզ հասած գործերից (յիշատակարաններում նշուած թուականներին նայելով) առաջինը «Երգ Երգացի» մեկնութիւնն է, գրուած քսանվեց տարեկան հասակում՝ 977 թուին, իսկ վերջինը «Ողբերգութեան մատենան» է, գրուած 1002 թուին, ապա կը ստացուի, որ նրա գրական ստեղծագործական կեանքը տեսել է մօտաւորապէս քսանհինգ տարի: Նա իրրե գրող և բանաստեղծ հետզհետէ աճել է և վախճանուել իր ուժերի ծաղկման գագաթնակէտին:

Նարեկացու գրական հռչակը սկսել է նրա կենդանութեան օրով, և ժամանակի ընթացքում հետզհետէ մեծացել է: Մեր պատմիչները յաճախ են նրա մասին խօսել՝ արտայայտելով իրենց սէրն ու հիացմունքը: Այսպէս՝ Սամուէլ Անեցի, Սմբատ Բ. թագաւորութեան տարիների կարևոր եղելութիւնների մասին պատմելով, գրել է. «Յաւուրս յայտոսիկ փայլէր իրրե զարեգակն իմաստութեամբ . . . Գրիգոր նարեկացին՝ որ ի Հայք ի գաւառն Վասպուրական՝ որզի Տեառն Սոսրովու՝ Անձևացեաց եպիսկոպոսին»¹⁾:


Մ. ՄԿԻՐԵԱՆ

(Շարունակելի՛ 2)

ԵՐԱԺՇՏԱԳԻՏԱԿԱՆ

Մ Ի Ջ Ն Ա Դ Ա Ր Ե Ա Ն

Հ Ա Յ Կ Ո Ս Պ Ո Ջ Ի Տ Ո Ր Ն Ե Ր



Գ Է .

ԵՐԱԺԻՏՏ Մ Ս Ա Ն Ո Ւ Է Լ .

Ակնների պատմական վանքի հպարտութիւնն է կազմում մի լուսագոյն արուեստագէտ, որ դեռ 13րդ դարում, մենաստանի կամարների ներքոյ զարկ է տալիս հայ երաժշտական արուեստին: Դա իր դարաշրջանում սիրուած ու յարգուած «իմաստուն» արուեստագէտ Մանուէլն է, որ իր ժամանակի վաստակաւոր երաժշտագէտների շարքում ունի իր ուրոյն էջը: Նա իր գեղարուեստական գործունէութեամբ Ակնների մենաստանի միաբանների և իր միջավայրի երաժշտաւէրների հոգիների վրայ խոր և անմոռանալի տպաւորութիւն է թողնում: Թերևս այդ երեւոյթով էլ պիտի բացատրել, որ դեռ 1333 թուին Ակնների վաստակաւոր գրիչ Սարգիս կրօնաւորը, նրա յիշատակը վառ պահելու համար, գրում է մի «Երգաբան»: Ահա գրչի վկայութիւնը. «... Գրեցաւ Երգարանս ի թվ. հայոց 998 (1333), ձեռամբ անարհեստ գրչի Սարգիս . . . կրաւնաւորի . . . ի յիշատակ շնորհալի քահանայի Մանուէլի»:

Այս վաստակաւոր երաժիշտն իր լուսագոյնը նուիրում է նաև հայ գրչական արուեստի զարգացման գործին: Նա է, որ Արքայակաղինում Պօղոս կրօնաւորի գրչով գրուած «Թէոփիլոսի ներքողեան» յունարէնից թարգմանուած ճառի ձեռագիրը, իր ուսերի վրայ գրած, բերում է «չերկնանման սուրբ և աստուածարնակ անապատն ի յԱկներն, առ լուսազգեստ սուրբ և երջանիկ հայրն Ստեփանոս»: Ահա յիշատակարանի տողերը. «... Եւ ես ըստ իմում կարի, — գրում է Պօղոս գրիչը, — գրեցի և առաքեցի: Եւ աղերսալի պաղատանաւք աղաչեմ ո՞վ սրովբէանման դասք լուսերամից, յիշեսջիք աղաւթիւք զաստուածապատուեալ հայրն զՍտեփանոս, զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատիս. և

¹⁾ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

զծնաւզան իւր և զիմաստուն երաժիշտն զՄանուէլ՝ որ ուսով իւրով բերաւ զ(բերող) եղև ճառիս ի վանս: Եւ զաշխատաւ զգրիչս զՊաւղոս և ծնաւզան մեր և զամենայն ի Քրիստոս հաւատացեալս: Իսկ Գարեգին Ա. կաթողիկոսի «Յիշատակարանք ձեռագրաց» գրքի 1177րդ էջում կարգում ենք հետեւեալ սեղմ տողը. «Մանուէլ երաժիշտ, ԺԿ. դար, 1273., Ակնբուում»:

Ուշագրաւ է և այն, որ Մանուէլը գրչութեան մատենի կազմարարութեան խնդրում ևս բերում է իր աջակցութիւնը: Այդ հանգամանքը հաստատում են Պօղոս գրչի ձեռքով ընդօրինակուած ձեռագրի յիշատակարանի հետեւեալ տողերը. «Ով մանուէլք եկեղեցոյ և որդիք վերին սիոնի, յորժամ ընթեռնոյք զգիրս զայս զատուցեալս ի բարեաց զՄանուէլ յիշեսջիք, զի սակաւ մի և մեք աշխատեցաք ի կազմած գրոյս»:

Մանուէլի կեանքի պատմութեան մասին, դժբախտաբար, չկան այլ տեղեկութիւններ: Յայտնի է միայն այն, որ նա ապրել է և ստեղծագործել 13րդ դարում և օժտուած լինելով գեղարուեստական ձիրքով՝ իր ապրած դարաշրջանի երաժշտական և գրչական արուեստների զարգացման գծով որոշ դեր է կատարել:

* * *

Իրջնագարի հայ երաժշտական արուեստի պատմութեան էջերն արձանագրելիս նշենք նաև Մշոյ պատմական «Առաքելոց» վանքում փայլող երաժիշտների անունները ևս, որոնք ժամանակի, 13րդ դարի, հայ արուեստագէտների շարքում ունին իրենց համեստ էջը: Դրանցից յայտնի են՝ Յուսիկ, Ռտապէս, Աւետիս, Ստեփանոս և Ներսէս երաժիշտները, որոնց անունները գրչում ունիւմ են 1204 թուին. կարնեցի Վարդան քահանայ գրչի ձեռքով «Առաքելոց» վանքում գրուած «Տաւնական» ձեռագրի յիշատակարանում: Այս վաստակաւոր երաժիշտները հայ եկեղեցական երաժշտութեան արուեստի զարգացման գծով կատարած դերի մասին, դժբախտաբար, փաստացի տեղեկութիւններ չունենք: Նրանց կեանքից յայտնի է միայն այն, որ նրանք եղել են «Առաքելոց» վանքի միաբաններ, պատմական մենաստանում զբաղուել են

երաժշտական արուեստով, իսկ 1204 թուականին գրուած «Տաւնական» մատենը գնելու համար նուիրատուներ են հանդիսացել, երեւոյթներ, որոնք ընդգծում են նրանց գրասէր, լուսաւոր, առաջադէմ և այլ գեղեցիկ յատկանիշների մասին:

15րդ Գ.Ա.Բ

25.

ԵՐԱԺՇՏԱՊԵՏ Ա. Ա. Հ. Ռ. Մ. Գեղամայ

15րդ դարի երաժշտական արուեստի պատմութեան մէջ ցոյանում է տաղանդաւոր երաժշտագետ Վահրամ քահանայի պայծառ կերպարը, որ իր գեղարուեստական գործունէութեամբ միջնադարի հայ երաժշտութեան վարպետների շարքում առանձնայատուկ տեղ է զբաւում:

Հայ երաժշտութեան պատմութեան դեռ անձանօթ այս վաստակաւոր երաժշտագետի կեանքի հիմնական էջերը պատկերելու համար տեղեկութիւններ, դժբախտաբար, չատ քիչ ունենք: Այդ տեսակէտից մի թանկագին աղբյւր է 15րդ դարում գրուած մի ձեռագիր: Դա 14-15րդ դարերի նշանաւոր մատենագիր, եկեղեցական գործիչ և Հայաստանի ամենանշանաւոր ուսումնական հաստատութեան՝ Տաթևի համալսարանի, ղեկավար Գրիգոր Տաթևացու (*) «Գիրք հարցմանց» խորագրով գրչագիրն է, որի յիշատակարանում վաստակաւոր արուեստագէտ Վահրամի մասին արձանագրուած են կենսագրական սեղմ ակնարկներ, որոնք մասամբ պարզում են նրա կեանքի մի քանի հիմնական էջերը: Զեղ ցայտուն գա-

(*) Գրիգոր Տաթևացին հռչակաւոր Տաթևի համալսարանի զլիսաւոր սիւներից մէկն է: Դեռ նրա ղեկավարութեան շրջանում համալսարանը փայլել է երեք ուսումնական բաժիններով — նկարչական, գրչական և երաժշտական: Մի ուսումնարանում Տաթևացին շուրջ 1500 զնախկին երգիչ վարդապետաց զերաժշտութիւն քաղցրաւոր ձայնի եղանակաւ. մինչև անգամ յամենայն երկրէ և ի քաղաքաց եկեալ պարագէտն առ ոտս նորա: Եւ ի միւսին՝ նկարագրութիւն պատկերահանութեան և զանազան նկարչութիւն: Եւ ի միւսումն գնեքքին և զարտագին զրեանս»:

Տաթևացին հարստացրել է նաև զարաշրջանի հայ մատենագրութեան էջերը: Դեռ 1405 թուին նա հայ գրականութեան նուիրել է «Մեկնութիւն

զափար են տալիս նախ նրա երաժշտական պատրաստութեան մասին: Նա մէկն է 15րդ դարի ա՛յն պայծառ ղէմքերից, որ խորապէս հասկացել է, թէ հոգևորականը պէտք է ոչ միայն ընդհանուր զարգացում ունենայ, այլև երաժշտական կրթութիւն: Ըմբռնել է և այն, որ ժամերգութիւնն անթերի և ճիշտ կանոններով կատարելու համար անհրաժեշտ է ծանօթանալ մանրուսմունքներին, զանձերին և շարականներին էութեան հետ: Այդ գրիտակցութեամբ էլ նա խորապէս ուսումնասիրել է երաժշտական արուեստը և նրա գեղեցկութիւններն ու նրբութիւնները:

Թէ երաժշտագետը Կիլիկիայի ս^ր վանքում և ս^ր տոնգանդաւոր երաժշտագէտի մօտ ստացել է իր երաժշտական կրթութիւնը, յիշատակարանում, զժբախտաբար, փաստական տուեալներ չկան: Պարզ է միայն այն, որ նա իր զարտըջնանում փայլել է իր երաժշտական հմտութեամբ և վարդապետութեամբ: Դրա ցայտուն ապացոյցն այն է, որ նրա անունը ժողովրդի մէջ հռչակուել է որպէս սերաժշտագետ պանծալի: Իր գեղարուեստական տաղանդով էլ

նա առանձին երանգ է տուել իր ժամանակի երաժշտական մշակոյթին: Այս մասին 1421 թուականին գրուած «Վիրք հարցմանց» խորագրով ձեռագրի յիշատակարանում կարգում ենք հետեւեալ բնորոշ տողերը. «Ո՛վ քահանայք սուրբ Սինի և դասք ընթերցողաց, որք հանդիպիք սմայ, կարգալով կամ աւրինակելով, յիշեցէք ի Քրիստոս զօրրասնեալ և զարժանապատվեալ, ծաղկեալ ալեաւք ծերունին, զգահազուրի քահանայն զտէր Վահրամն, որ էր երաժշտագետ պանծալի և փակակալ սուրբ Լուսաւորչին Վրիգօրի»:

Երևանյի պետ. ձեռագրատանը գտնուող «Վիրք հարցմանց» ձեռագրի յիշատակարանն ուրոյն արժէք է ներկայացնում նաև նրանով, որ ընդգծում է երաժշտագետ Վահրամի մի այլ գեղեցիկ յատկութիւնը: Իր միջավայրի ժողովրդից նա սիրուել է ու յարգուել ո՛չ միայն որպէս պանծալի երաժշտագետ», այլև որպէս իր կոչման բարձրութեան կանգնած մի պարտաճանաչ հոգևորական, որպէս «գահազուրի» քահանայ, որ նուիրուել է հայ եկեղեցու պայծառութեանն ու բարեկարգութեանը: Դրայն շրջանն էր, երբ նա Կիլիկիայի «Վրիգօր Լուսաւորիչ»ի փակակալն էր:

Մի այլ հանգամանք նոյնպէս արժէքաւորում է երաժշտագետ Վահրամ քահանայի կերպարը: Դա նրա հոգում իշխող գրչական արուեստի սէրն է: 1427 թուականին երաժշտագետը Կիլիկիայից ուխտի է գնացել Երուսաղէմ՝ Քրիստոսի գերեզմանը համբուրելու: Այդ ժամանակ նա Երուսաղէմի միաբան կարագետ արեղայից գնել է Վրիգօր Տաթևացու 1407 թուականին գրած «Վիրք հարցմանց» ձեռագիրը և իր հետ բերել է Կիլիկիա: Այս մասին ձեռագիր յիշատակարանում կարգում ենք. «... Քանզի յայսմ ամի, որ էր թվական հայոց ՊՀ (870 + 551 = 1421) ամ, գնացեալ յերուսաղէմ յերկրպագութիւն սուրբ անաւրինականացն Քրիստոսի, և տեսեալ զմատեննս աստուածային, ծաղկաւէտութաստանս որպէս զրախտ վայելուչ և զեղեցիկ, հաւաքեալ ի սմա ծաղիկս զանազանս, բերելով մեզ ճաշակս քաղցթահամս և զեղս բժշկարարս, և եռափափաք սիրով գնեաց զսայ ի հաւալ արգեանց ի նոյն վերոյիշեալ կարագետ արեղաէ, որ էր յայն-

Սաղմոսաց», իսկ 1407 թուին՝ «Քարոզչիրք»ը: Նոյն թուականին նրան տեսնում ենք Սինեաց աթոռի վրայ, որպէս տեղապահ, նա կրթել և հայ ժողովրդին նուիրել է բազմաթիւ աշակերտներ, որոնցից շատերն ընթացել են իրենց ուսուցչի գծած լուսաւոր հանապարհով: Նրա զրչին են պատկանում նաև «Լուծմունք զժուարիաց բանից ի մեկնութիւն գրոցն Յօրայ» (1408 թ.), «Լուծմունք Ասիտակիսի Գէորգայ ի խրատ զԸշութեան», «Քաղուածոյ մեկն. Յովհաննու աւետարանի» և ուրիշներ:

Երևանյի պետական Ձեռագրատան գտնուող ԱՅ 0607 ձեռագրի յիշատակարանից երեւում է, որ Տաթևացին ծնուել է վրաց աշխարհում, «ի յամուրն թմօք» (Ջաւախք գաւառում), «եւ էր մանուկ գեղեցկատիպ և ուշիմ, և լի հոգոյն պարզեօք»: Ուսել է նշանաւոր վարդապետ և «մեծ փիլիսոփայ»: Յովհաննէս Որոտնեցու մօտ իր ուսուցիչը տարել է նրան «ի Սեպուհ լեռան» և սարկաւազ ձեռնագրել, «յանուն Լուսաւորչի» կոչելով Վրիգօր: Նրա մկրտութեան անունն եղել է Խաթիւշաչ: Երուսաղէմում ձեռնագրուել է քահանայ, ապա՝ վարդապետ: Նա եղել է «աղքատասէր և օտարասէր, առատ ի տուրս աղքատաց, խորազանազգեստ մարմնով և խոնարհ հոգեով և ծննդական մտօքն. հասակաւ երկայն, զիմօք պայծառ, տեսակարժանի գոռոզու թեանն, ներօք խարտեաշ, մուրուօք առատ, միշտ պահեցող»: Վախճանուել է 1409 թ. Դեկտ. 27ին:

ժամ փակակալ և սպասուոր սուրբ դամբարանի Յակոբայ տափերունոյ:

Երաժշտացեալ Վահրամի իր միջավայրում յայտնի է դարձել նաև որպէս լուսագոյն մանկավարժ: Նա կրթել է և դաստիարակել երաժշտասէր մի ամբողջ սերունդ և նրա հոգում վառ պահել հայ եկեղեցական և աշխարհիկ երաժշտութեան սկզբ:

1421 թուականին գրուած «Քիրք հարցմանց» ձեռագրի յիշատակարանն ուշագրաւ է նաև այն տեսակէտից, որ ցայտուն գոյներով գծել է ընտանիքի տիպար և օրինակելի հայր հանդիսացող երաժշտացեալ ընտանեկան կեանքի պատկերը, ուր տեսնում էք վաստակուոր քահանայի տիրուրուհին՝ քրարհամեստ» եղները, նազելի դուստրը՝ տիկ. Մարիուն, փեսան՝ պարոն Թորոսը և արամիա, մաքուր և անբիծ» սարկաւազ Հիթում որդին, որ 1421 թուականին, 18 տարեկան հասակում, վախճանուել է: Նրա վաղածամ մահը խոր վիշտ, կսկիծ և անփարատելի տրտմութիւն է պատճառել թէ՛ ծնողներին և թէ՛ բոլոր հարազատներին: Ահա յիշատակարանի վկայութիւնը. «Արդ, աղաչեմ զձեզ զամենեւեան . . . յիշեցէք ի յերկնաթուղ աղաւթս ձեր զվերայգրեալ քահանայն զՎահրամի, և գրարհամեստ դուգակիցն իւր զտիկին եղներն, և զիւր նազելի դուստրն՝ տիկին Մարիունն, և զփեսայն իւր՝ զպարոն Թորոսն, և զաստուածապարզ և զուսկիցն իւր: Այլև զհանգուցեալ սիրուն որդեակն իւրեանց, զարամիա, զմաքուր և զանբիծ սարկաւազն, որոյ անուն յորջորջիւր Հիթում, քանզի յայտ ամի, որ է թվական հայոց ՊՀ (870 + 551 = 1421) ամ, ի յուրիս ամսոյ ԺԱ. (11) և պատկեր աւուրն չորեքշաբթի, փոխեցաւ առ Քրիստոս յոյան ամենեցուն և զնայ տարժամ յաշխարհէս, զի էր ամաց Ժ. և Ը. (18)ից և եթող մեծ սուգ և անփարատելի տրտմութիւն իւր ծնողացն և ամենայն զարմիցն, և ստաւել մեզ, քանզի ի մանկութենէ ի վեր անուցել էաք զորովայն աղետաւ ք»: Թէ ո՞ր թուականին է վախճանուել վաստակուոր երաժշտացեալը և ո՞ր պատմական վանքի կամարներին ներքոյ են հանգչում նրա աճիւնները ստոյգ տեղեկութիւններ չկան: Պարզ է միայն այն, որ նա

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՍԻՐԱՀԱՅԵԱՑ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Սիրահայեաց Ս. Աստուածածնի վանքը կը գտնուէր Զնքուշ կամ Շէնքուշ աւանին մօտ, Զերմուկ գաւառին մէջ (Ղուկաս Վրդ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն, Ասիա, Հատոր Ա., Վենետիկ, 1806, էջ 239): Կոկիկ և սիրուն շէնք մըն էր, այգիներով և ծառերով շքեղապատուած (Պ. Վրդ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Մասն Բ., Կ. Պոլիս, 1884, էջ 187):

ՊԱՏՄԱԿԱՆ. — Սիրահայեաց Ս. Աստուածածին վանքին հիմնարկութեան, առաջնորդներուն և անոնց գործունէութեան մասին կան հետեւեալ տեղեկութիւնները:

1. — Պօլոս Վրդ. Հասառանցի (1561-ճ 1593). — Սա 1561ին Ս. Աստուածածնի վաղակառոյց մատրան կից ուխտ և սիտո կը հաստատէ (Թ. Աղբար, Բ., էջ 457-8): Այս ժամանակ Շէնքուշի մէջ իրրե գրիչ և ծաղկող յիշատակելի է Գասպար Քահանան, որուն օրինակած զրբքբէն ծանօթ են 1. — Ծարակուն, 1580 (Թ. Աղբար, Բ., էջ 384): 2. — Աւետարան, (նոյն, էջ 453): 3. — Ծարական, 1586 (Տուցակ Զեռ. Էջմիածնի, 1863, Թիֆլիզ, թիւ 1587. էջ 176): 4. — Եղարան = Ծարակնոց, 1591 (Սիւրմէեան, Տուցակ Զեռ. Եւր. Մասն. Հաւաքութեան, 1950, էջ 70):

2. — Մարտիրոս Վրդ. Շեկուցի (1593

ապրել է մինչև խորին ծերութիւնը և իր գեղարուեստական գործունէութեան ընթացքում հայ երաժշտական արուեստի ճանը միշտ վառ է պահել. միաժամանակ նպաստել է նոր սերնդի երաժշտութեան կրթութեան վեհ գործին: Այդ էական յատկանիշներով էլ նա առանձնաշատուկ տեղ է գրուում հայ երաժշտական արուեստի պատմութեան մէջ:

ՊԱՏՄ ԵՐԵՄԵԱՆ

(Ծարուակելի՛ 13)

- № 1632). — Աշակերտն էր Պետրոս Կարկառցիի, որմէ ստացած է եպիսկոպոսական ձեռնադրութիւն (Յուլիան Զեռ. Ս. Յակոբեանց, Բ. Հատոր, 1953, էջ 170): Վկայուած է իրրն «այր փրիստփայ և քաջ քարտուղար, որոյ գոն ծրեալ մատանց նորին յուով գրեանք ի սուրբ վանքս և յեկեղեցին որ ի Շէնքուշ» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին երեք հօգի (նոյն, էջ 484): Իր ձեռքի արդիւնքներէն յիշուած է Լամբրոնացոյ Պատարագի Մեկնութիւնը, օրինակուած 1613 թուին (նոյն, էջ 484-6):

3. — Յովհաննէս Վրդ. Շէնքուցի (1632 - № 1643). — Կը յաջորդէ իր ուսուցիչ Մարտիրոս Վարդապետին: Իր առաջնորդութեան շրջանին, իր ուսումնական եղիազար Հատկաշնչի ձեռնադրութեամբ նոր ի նորոյ կը շինուի վանքին պարխալը (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին հինգ հօգի (նոյն, էջ 464 և 484):

4. — Մարկոս Վրդ. Հացուցի (Շէնքուցի. 1643 - № 1679). — Մարկոս Վարդապետի մասին կը վկայուի թէ «ունի բազում յիշատակ ի սուրբ վանքս և ի Շէնքուշ, և Դանձտար մի գրեալ ձեռամբ իւրով» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Շէնքուշի Դաստան մէջ իր աշակերտն է եղած Մինաս Վրդ. Ամդեցի, որ 1674ին կ'երթայ Շէնքուշ և իր բարունիէն կը ստանայ Մեկնութիւն Ղուկասու՝ Իգնատիոս Վարդապետի (Սիւրբէեան, Յուլիան Զեռ. Երուսաղէմի, Ա. Հատոր, Վենետիկ, 1948, էջ 318):

5. — Մինաս Վրդ. Ամդեցի (1679-1701). — Մինաս Վրդ. Ամդեցի զաւակն էր Առաքելի և Հոսիսիմի և օր տղայութեան բերեալ և որդեգիր էր տուեալ ուսման Շէնքուշի Խաչատուրի» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր ուսումը կը ստանայ Շէնքուշի Դաստան մէջ, Մարկոս Վարդապետի ձեռքին տակ: Երուսաղէմի մէջ, 1666ին, եպիսկոպոս կը ձեռնադրուի Եղիազար Կաթողիկոսէն: Երկար տարիներ նուիրակի պաշտօն վարած է, իր վրայ պահելով վանահայրութեան պաշտօնը և յաճախ հանդիպելով և ժամանակ մը մնալով Շէնքուշի վանքին մէջ, ինչպէս 1680 Հոկտ., 1684 Յունուար 30 - Փետրուար 18, 1684 Հոկտեմբեր 18 - 1685 Մայիս 6, 1695 Օգոս. 24-31, և Նոյմ. 8-25 (Օրագրութիւն, Ե.

Չ. Քէօմիւրճեանի, էջ ձԼԶ, ձԼԸ, ձԽԱ-Բ. Հմմտ. Այսօրածեան, Պատմ. Եւրոպիոյ Հայոց, էջ 646 և 710):

Իր Օրագրութիւնը (1680-1704) մանրատառ, համառոտախօս և զժուարնթեանի ձեռագիր մը, կը մնայ անտիպ (Զեռ. Ս. Յ. Թ. 1316): Ասոր համառօտ մէկ ամփոփումը հրատարակած է Մեսրոպ Արք. Նշանեան (Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, 1939, Երուսաղէմ, էջ ձԼԵ-ձԽԴ):

Մինաս Եպս. Ամդեցի եղած է նաև պատրիարք Երուսաղէմի (1698 - № 1704). — (Մ. Եպս. Աղաւնունի, Միաբանք և Այցելութ. 1929, Երուսաղէմ, էջ 286-7):

Այդ հանգամանքով ան 1701 տարւոյ Սեպտեմբերին կը հասնի Երուսաղէմ և իր եղբորորդի Շէնքուշի Յովհաննէս վարդապետին Ծայրագոյն Վարդապետութեան զաւակն տալով կը զրկէ Շէնքուշի վանքը, որ կառավարէ զայն իրեն փոխնորդաբար (Թ. Աղբար, Բ., էջ 459):

6. — Յովհաննէս Վրդ. Շէնքուցի (1702 - № 1723). — Եղբորորդի և աշակերտ Մինաս Ամդեցիի: Իր շրջանէն կայ հետեւալ յիշատակագրութիւնը, 1708 Փետր. 5, շրթուականով. «Ես Շէնքուշացի մեղապարտ և անարժան Յովհաննէս էրէցս եկի ի Հապարման. վասն Ս. Աստուածածնայ շարակնուն համար. Սեպտեմբրի հարսնաուում են էկած, գեղացիքն ամէն խաղալ են գնացած, Գ. աւր կեցայ, մէկ մի չէկաւ մաւտս . . . » (Թ. Աղբար, Բ., էջ 456):

7. — Եղիազար Վրդ. Աւիսացի (Աւեսուրցի. 1723-1725). — Երկու տարի կը նստի և չի կրնար կառավարել աթոռը (Թ. Աղբար, Բ., էջ 459):

8. — Սեփանոս Վրդ. Կիւրիցի (1725 - 1737). — Սա կը նստի 12 տարի և ապա վանքէն կը փախչի առանց ունեւորութեան նենալու (Թ. Աղբար, Բ., էջ 459):

9. — Նիկողայոս Եպս. Շէնքուցի (1737 - № 1756). — «Շէնքուշի Նիկողայոս Վարդապետն Բաղդադաւելոնց տանէն՝ յաջորդէ զաթոռն Ս. Աստուածածնի մինչ ժԸ ամ, այր ճգնագգեաց, սնեալ յանապատի, որ ունի յիշատակ սուրբ վանքիս մեծ աւտան առաջնորդարանն և դուռքն երկաթի»: Իր աշակերտն է եղած Դասպար Վրդ. Շէնքուշի (Թ. Աղբար, Բ., էջ 459-460):

10. — Գասպար Արք. Շէնքուցի (1756

- № 1788). — Սա սորպէս ջահ փայլեալ վարուք, որ ունի բազում երախտիք սրբոյ տանս: Իր արգիւնաւէտ կեանքին և շինարարական գործերուն մասին բաւական տեղեկութիւններ հասած են մեզի: Այսպէս,

1726ին կու գայ Ս. Աստուածածնի վանքը:

1737ին արեղայ կը ձեռնադրուի Նիկոզոս եպիսկոպոսէն (Թ. Աղբար, Բ., էջ 466):

1746ին գաւազան կը ստանայ՝ դարձեալ Նիկոզոս եպիսկոպոսէն:

1749ին Երուսաղէմ ուխտի կու գայ:

1753ին կը շինէ Չնքուշի վանքին տաճարին գմբէթը:

1754ին վանքին ջրաղացը կը շինէ քարուկիր: Նոյն տարին կ'երթայ Ս. Կարապետ:

1756ին կը կոչուի վանքի առաջնորդութեան պաշտօնին:

1758ին սաստիկ սով կ'ըլլայ և Չնքուշի մէջ անօթութենէ կը մեռնին 400 հայեր: «Ը ամիս Չնքուշայ եկեղեցին ոչ կանթեղ վառաւ, ոչ ժամկոչ ելաւ, իբրև ծովու նման կու ծփայր երկիրն վասն մեղաց մերոց: Յայտ թժին ներքին Աղիշոյ եկեղեցին այլ այրեցաւ, որ մէկ հատ քար կամ փայտ չմնաց» (Թ. Աղբար, Բ., էջ 468):

1763ին նորոգեց վանքին արեւելեան կողմի պարիսպը:

1764ին էջմիածին երթալով եպիսկոպոս կը ձեռնադրուի Սիմէոն Կաթողիկոսէն:

1771ին աղբիւր մը շինել կու տայ Ս. Աստուածածնի վանքին զխմաց, ծախսելով հազար զրշ.:

1778. — «Բազում շաքուրկայ և կարկուտ էկաւ. կարի դժուար սով սաստիկ եղաւ...» (Թ. Աղբար, Բ., էջ 468):

1788ին կը վախճանի բազմադիրն Առաջնորդ Գասպար Արքեպիսկոպոսը. նոյն տարին կը մեռնի նաև իր գործակիցը՝ Պետրոս Վարդապետ (Թ. Աղբար, Բ., էջ 460):

11. — Յովնանեկա Վրդ. Շեմբուցի (1788 - № 1792). — Երբ Գասպար Արք. կը վախճանի «ի նոյն աւուր առեալ իշխանացն Շէնքուշայ և Աղիշոյ՝ տանին յԱթոռն Բարձրահայեաց Ս. Աստուածածնի վանք Արդնոյ, և անդ կալնու գաւազան ծայրագոյն վարդապետութեան ի Կարապետ վարդապետէն» (Թ. Աղբար, Բ., էջ 460): Իր գործերէն յիշուած են հետեւեալները.

1788. — «Նորոգեաց բազում աւտայիւք զսուրբ վանքն ուխտաւորացն:

1790. — «Բերաւ աղբիւրն ի մէջ վանքիս և եղև շինումն աւտային, և էառ ջրաղացն յիշատակ սուրբ վանքին» (նոյն, էջ 461):

1791ին Ս. Էջմիածին կ'երթայ և Ղուկաս Կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի:

1792 Սեպտ. 8ին կը վախճանի Յովհաննէս Եպոս. և կը թաղուի ի Շէնքուշ, Ս. Կարապետ եկեղեցոյ հովանիին տակ (նոյն, անդ):

12. — Կարապետ Վարդապետ, 1792ին կը յաջորդէ Յովհաննէս եպիսկոպոսին (նոյն, էջ 461):

Այդ դարուն վերջը կամ յաջորդին սկիզբը Չնքուշ աւանը ունէր իբր 400 տուն հայ և իբր 250 տուն տաճիկ բնակիչ (Ինճիճեան, Աշխարհագրութիւն, Ասիա, Հատոր Ա., էջ 240):

13. — Բաղդասար Վրդ. Տիգրանակեցի (1841-1880). — Սա «40 տարի շարունակ պաշտօն վարած է. իր օրով շինել տուած է վանքին Ս. Տաճարն և այլ շէնքերը, Չնքուշայ և Աղիշոյ եկեղեցիները, քարուկիր և վայելչակերտ. ունեցած է շատ մը երախտիք, և իւր բարեգործութեամբ ու բարեգործութեամբ սիրելի եղած է երկրի Շեխերուն, Թրքաց, Քրդաց, և Հայոց, որք առ հասարակ Մեծ Դէսէ կը կոչէին զինքն, և Հայք ամէն պատարագին կը յիշեն նորա անունը ի կարգի Հանգուցեալ բարունապետաց և շինողաց սուրբ եկեղեցոյ, իւր զերեզմանին ալ ուխտի կ'երթան...» (Թ. Աղբար, Բ., էջ 188): Հոս խնամքով պահպանուած մատեաններ շատ կային. ձեռագիրներու թիւն էր 43 (նոյն, էջ 452):

14. — Մինաս Վրդ. Մալսրիացի (1884). — Իր առաջնորդութեան ժամանակ Սիրահայեաց Ս. Աստուածածնի վանքը կ'այցելէ Գարեգին Վրդ. Սրուանձտեանց և համառօտակի կը ցուցակագրէ վանքին 43 ձեռագիրները (նոյն, էջ 187 և 452-486):

Այս թուականին Չնքուշ ունէր մէկ եկեղեցի, Ս. Կարապետ, վարժարան մը 125 աշակերտներով, և 500 տուն հայ (նոյն, էջ 190):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ժէ. դարուն սկիզբ- ները հաստատուած կը թուի ըլլալ Դասա- սուն մը, Սիրահայեաց վանքին մէջ, Շէն- քուչցի Մարտիրոս Վարդապետի միջոցաւ, որ աշակերան էր եղած Պետրոս Կարկանե- ցիի Դպրատան՝ Ս. Տրոսթէսի վանքին մէջ (Հմմտ. Կրէյտէրեան Բարգէն Ա. Կթդ., Պատմ. Կաթ. Կրկնկոյ, 1939, Անթիլիաս էջ 245 և 252): Այս Դասատան պատկերը իր գոյատուր գիծերով կը ներկայանայ այսպէս:

Ա. — Մարտիրոս Վրդ. Շէնքուչցի (1593 - * 1632). — Իր աշակերտներէն ծանօթ են հետեւեալները.

1. — Յովնանէս Վրդ. Չեմուցի, գոր սեանք վերը:

2. — Արիսակես Խաբեբոցի, որդի Կիրակոս Քահանայի: Իր ուսուցչէն դաւա- գանի իշխանութիւն ստացած է 1618ին Ս. Նշան եկեղեցւոյ մէջ:

1628ին գացած է Կ. Պոլիս և հոն օ- ժանդակած է ժողովուրդին որպէսզի կա- րենան ձեռք բերել Պալատի Ս. Հրեշտ- կապետաց եկեղեցին. — Ազգապատում, յօդ. 1640: Գր. Դարանազցի, Ժամանա- կագրութիւն, էջ 187-9:

Լեհահայոց Նիկոյ Եպիսկոպոսին խնդրին մէջ պահ մը խառնուած է Արիստակէս Վրդ. երբ կը զանուէր Բուրսայի մէջ, և վատ խորհրդատուի դեր մը կատարած է, որով- հետեւ այս Արիստակէս վարդապետս և այն կեսարացի Դրիգոր վարդապետն ունէին ընդ միմեանս որս նախանձու յոյժ սաս- տրիկս (Ա. Դաւրիթեցի, էջ 370-371):

Ունի երկար տաղ մը «Վասն Ծոազատ- կին Յունի», ձժժ տուն, գրուած 1634ին, «Արիստակէս խնդրող քանին» սկզբնաւորու- թեամբ: Ս. Յ. Թ. 1456 ձեռագրէն անը- ւած քանի մը կարևոր տողեր կարելի է տեսնել՝ Լասկ, 1953, էջ 172:

3. — Սիմեոն դիսողն, իր մասին ուրիշ տեղեկութիւն չունինք:

Բ. — Յովհաննէս Վրդ. Չնքուչցի (1632 - * 1643). — Իր օրով Դասատունը կը շա- րունակէ արգիւնաւորութիւլ: Իր աշակերտ- ներէն յիշուած են հետեւեալները.

1. — Ասուածատուր Վրդ. Տարանցի, ապա պարք. Երուսաղէմի (1645 - * 1671):

2. — Խաչատուր Վրդ. Աղիւտցի կամ Չեմուտցի, ծնողքը Տէր Բարսեղ և Ղիմաթ:

Աստուածատուր պատրիարքին հետ Պոլիս երթալուն առթիւ ՌՂԸ (= 1649)ին կը գնէ Աստուածաշունչ մը և ծաղկել տալով, Ղազարոս անուն նկարչին, կը նուիրէ Ե- րուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքին (Չեմ. Ս. Յ. Թ. 1927: Հմմտ. Միտրանք, էջ 175): Իրրն Երուսաղէմի միտրան կը մաս- նակցի Փիլիպպոս Կաթողիկոսի 1651ին Ե- րուսաղէմի մէջ դումարած ժողովին (Սր- մանեան, Ազգապատում, էջ 2457): Հաւա- նարար ինքն ըլլայ Երուսաղէմի վէճիկ Խա- չատուր Վարդապետը, որ 1677ին Ստամ- պուլի մէջ կը գնէ Գործք Առաքելոցի Մեկ- նութիւն մը (Տուցակ Չեմ. Ս. Յակոբեանց, Գ. Հատոր, 1954, էջ 238):

3. — Կիրակոս Վրդ. Պուլանքիցի, ու- րիշ ծանօթութիւն չունինք իր մասին:

4. — Եղիազար Վրդ. Հոսովկայեցի, ապա Պատրիարք Երուսաղէմի և Կաթողի- կոս Էջմիածնի:


5. — Մարկոս Վրդ. Շեմուցի, որ յիշուած է վերև:

Գ. — Մարկոս Վրդ. Շէնքուչցի (1643 - * 1679) կոչուած նաև Հայուսցի, ծանօթ է մէկ աշակերտով միայն որ ապա կը յա- ջորդէ իրեն, այն է՝

Դ. — Մինաս Վրդ. Սմոնցի (1679- 1701). — Սա հետագային կը դառնայ Պատ- րիարք Երուսաղէմի (1698 - * 1704): Ասոր ալ մէկ աշակերտը միայն ծանօթ է որ իր կարգին կը դառնայ առաջնորդ Չնքուչի վանքին, այն է Յովնանէս Շեմուցի (1702 - * 1723):

Այսպէս ժէ. դարու մասւորական վե- րագարթումի շրջանին Շէնքուչի վանքին Դասատունն ալ կը կատարէ յիշատակելի դեր մը, տալով քանի մը նշանաւոր դէմ- քեր իրրն պատրիարք և կաթողիկոս, որոնք ժէ. դարու մեր ազգային եկեղեցական կեանքին մէջ ուշագրաւ եղան իրենց գոր- ծունէութեամբ:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ



ԳՐԱԿԱՆ

ՍԵՒ ԳՈՅԺԸ

«Տե՛ս ինչպէս զեղեցկացոց Մանր, բրաւ զիս արտիկի» (Մ. Պէտրկապետեան):

Հոկտեմբեր 17ի իրիկուն, Հայաստանի ձայնասփիւռը զուժեց Աւետիք Բասակեանի մահը, անասնման սուգով լեցնելով բոլոր հայերու սիրտերը, ուր ալ գտնուին անոնք, ինչ զաղափարի ալ ծառային: Աւետիք տակաւին շուարած, շշմած, զահանգած ենք այս մեծ կորուստին դիմաց: Որովհետև Աւետիք Բասակեանի մահով մեծ մարդ մը չէ միայն մեր կորսնցուցածը, այլ շատ աւելի մեծ բան մը, մեր տառապանքներու, իղձերու, երազներու մարմնացումը: Ան վաղուց անձ մը ըլլալէ զազրած էր արդէն ու եղած մարմնացած գաղափար բոլոր հայերու համար, հայրենիքէն ներս թէ դուրս:

Աւետիք չկրցանք հաշտուիլ իր մահուան հետ: Օրերով սպասեցինք որ հրաշքով մը հերքուէր Երևանի ուստիոյն տուած լուրը: Օրերով մղձաւանջի մը մէջէն անցանք, և Հոկտեմբեր 21ի զիշերը, պահ մը հրաշքը իրականացած կարծեցինք: Աւագած էինք օրնդունիչը բանալու այդ զիշեր, երբ անասնման հրճուածքով լսեցինք վարպետին կենդանի ձայնը: Ծանօթ էր իր ձայնը մեզի. ուրիշ շատ անգամներ լսած էինք զայն Հայաստանի ձայնասփիւռէն. կասկած չկար այդ ձայնին վաւերականութեան մասին: Արեւմտի չար սատանան օրերով սեցուցած էր արեւը, մեր կեանքը դժոխքի վերածած սխալ լուրի մը տարածումով:

Երկար շաբաթ մեր պատրանքը սակայն: Ինչ յետոյ անասնման հիասթափութեամբ իմացանք որ Բասակեանի տարի մը առաջ ձայնագրուած մէկ պատգամն էր որ կը տրուէր մեզի:

Աւետիք առաջին հարցումը որ յամառօրէն կը ներկայանայ մեր մտքին այն է թէ ո՞վ պիտի կարենայ գրաւել տեղը այս մարդուն որ իր անձին մէջ կը խտացնէր մեր անցեալի փառքն ու տառապանքը, մեր ներկայի ճիգն ու խանդավառութիւնը և մեր ապագայի երազները:

Ո՞վ պիտի կարենայ, իր անձով ու հեղինակութեամբ, լեցնել այն խոր ու լայն անդունդը որ Բասակեանի մահով կը բացուի մեր ազգային կեանքին մէջ: Ո՞վ պիտի կարենայ պարտադրել այն յարգանքը, անանձանքը, վստահութիւնը որ այս մարդու շուքը միայն կը բաւէր թելադրել, սիրով, հաճոյքով: Ո՞վ իր ձայնը լսելի պիտի կարենայ ընել բոլորին — մաւաւորականին, զրոյին, գիտունին, պետական մարդուն, տարադիր հայուն: Ո՞վ իր ողջոյնները պիտի զրկէ աշխարհացրիւ հայութեան և իր պատգամներով զեռ վառ պահէ մեր յոյսին ջահը ու կանգուն՝ մեր խարխուղ հաւատքը:

Անասնման էր այս մարդուն բարոյական ազդեցութիւնը Հայաստանէն ներս, և այդ ազդեցութեան միակ աղբիւրը իր սիրտն էր, այն մշտակարիտ աղբիւր որ կրնար ջուր հոսցնել ամէն բանի որ լաւ է և ուրկէ կը թխէին իր սրտաուռ երգերը և իր պարզ, անսեթեւեթ խօսքը: Եւ այս մարդուն ազդեցութիւնը կը հասնէր մինչև հեռաւոր անկիւնները աշխարհի մէջ ցրուած հայութեան, իր սիրոյ միջոցով այս ժողովուրդին համար, անոր լեզուին համար, անոր պատմութեան համար, անոր անցեալի փառքին, ներկայի վերելքին և ապագայի չքեղ հեռանկարին համար: Ո՞վ պիտի սրտապնդէ զմեզ հիմա մեր արիւնտ զատի յազթանակին համար:

Մեր ժողովուրդի իմաստութեան մարմնացումն էր Բասակեանը: Բնականէն առատօրէն օժտուած այդ շնորհով, թուամեհանի և Յովհաննէսեանի մահէն յետոյ կարծես անոնց հոգին ալ իջած էր այս մարդուն վրայ, կրկնապատկելով անոր աստուածային իմաստութիւնը:

Իր ամբողջ կեանքը, իր զուլալ երգերը, իր կենդանի խօսքը, Բասակեանը նուիրեց իրեն ծնունդ ատուող ժողովուրդին. տառապեցաւ այդ ժողովուրդի ցաւերով և աւելի քան երեք տասնեակ տարիներէ ի վեր, ոչ ոք իրեն չափ բաժին ունեցաւ մեր հայրենիքի վերելքին մէջ:

Անասնման սիրով սիրեց մեր ժողովուրդն ու մեր երկիրը. փառաւորեց զանոնք իր ամբողջ կեանքի ընթացքին, ու փառաւորեց զանոնք իր մահով ալ: Որովհետև Հայաստանէն սկսած մինչև Մոսկուա, մինչև Պալքանեան ու Պալթիկ երկիրները,

ՊԱՅՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մեր վերջին հաղորդագրութեամբ յիշած էինք որ Ս. Աթոռս վերաքննութեան դիմած էր, Երուսաղէմի Նախնական Ստեանի այն վճիռին դէմ, որով այդ դատարանը իր իրաւասութեանց սահմաններէն դուրս ելնելով, կը բռնաբարէր Հայոց Պատրիարքութեան եւ իր Միաբանութեան անկապտելի իրաւունքները Տէրութեան Եպս.ի Միաբանութեանս դէմ բացած դատին կապակցութեամբ: Ուրախ ենք ըսել որ վտանգուած արդարութիւնը վերահաստատուեցաւ իր տեղը Վերաքննիչ Ստեանի որոշումով: Արդարեւ Վերաքննիչ Ստեանը, Սեպտ. 28ի եւ Հոկտ. 7ի նիստերուն մէջ, լսելէ յետոյ երկու կողմերը, իր վճիռը արծակեց Հոկտ. 21ին ի նպաստ Միաբանութեանս, Նախնական Ստեանի իրաւասութեան սահմանէն դուրս հռչակելով այս խնդրով զբաղիլը, եւ հետեւաբար չեղեալ համարելով անոր տուած վճիռը ընդդէմ Միաբանութեանս:

Տէրութեան Եպս. վերաքննութեան մէջ կորսնցնելէ ետք դիմեց Վճռաբեկ Ստեանին, որուն վճռին կը սպասուի:

Ստորեւ թարգմանաբար կուտանք Վերաքննիչ Ստեանի դատավճիռին մեծագոյն եւ գլխաւորագոյն մասը, իր շահեկանութեան եւ վաւերագրային արժէքին համար: -

ԴԻՒԱՆ Ս. ԱԹՈՐՈՅ

Իսկ միւս կողմէն մինչև Մանկուիա ու Զրնասաան՝ պիտի տարփողուի հիմա անգամ մըն ալ այս մարդուն փառքը, որ ալ ամբողջովին կը պատկանի իրեն ծնունդ տուող Ժողովուրդին ու երկրին:

Ու հայ Ժողովուրդն ալ, հասարակ աշխատաւորէն սկսած մինչև պետական ամենաբարձր պաշտօնատարը, մինչև գրողն ու զիտուը, գլխոցաւ փառաւորել իր մեծ զաւակը, անսահման սիրով ու յարգանքով, իր ողջութեան ատեն և իր մահուան մէջ:

Ու մենք տակաւին շուարած, շլմած, զահանգած ենք այս կորուստին դիմաց: Որովհետև բանաստեղծուհիին ըսածին պէս Իսահակեանը արարատ մըն էր Արարատին դիմաց. էջմիածին էր էջմիածնայ քով, Զուարթնոց մըն էր անոր խորտակուած շքեղութեամբ. մեր ներկան էր իր հզօր թափով, մեր ապագան էր իր լայն հորիզոնով, պայծառ երկինքով ու վսեմ երազներով:

Ու հիմա մենք մէկ մարդու մահով քանի՜ անձ, քանի՜ անձնաւորութիւն հողին կը յանձնենք:

Ո՞ր կորուստը սգանք մենք հիմա:
Մեծ բանաստեղծը սգանք, որ այնքան

սրտառուչ կերպով իմ, քու, իր, ամենուն սէրը, ցաւը, յոյսը, երազը, գայրոյթը երգեց, թէ՛ հոյակապ առաջնորդը: Իտերբու փորձառութիւնը իր մէջ խտացուցած իմաստօ՞ւնը, թէ՛ անկաշառ հայրենասէրը: Անսոգիւտ ազգասէ՞րը, թէ՛ ամենուն դէմ սիրտը բաց մարդասէրը: Աւանդապա՞հը, թէ՛ յառաջապահը:

Ո՞վ կրնար այս մարդուն չափ, անոր պէս, սիրել հինը, առնել անկէ ինչ որ արժէք է, ինչ որ գեղեցկութիւն է և նոյն ատեն հասկնալ, զնահատել, գուրգուրալ նորին վրայ: Անսահման թանգարան մըն էր Իսահակեանի սիրտը ուր հին արժէքները իրենց տեղը ունէին ու նորերը իրենցինը:

Ու հիմա երբ այս տողերը կը գրուին, վարպետի մարմինը կը յանձնուի հայրենի հողին, Երեսնի բանթէռնին մէջ, իր հին զրչի եղբայրներուն քով, ճիշդ Կոմիտասին մօտ, նոր փառք մըն ալ աւելցնելով հայկական այդ տաճարին: Ու մենք տակաւին լրիւ կերպով չհաշտուած իր մահուան գաղափարին հետ, ցաւով, յարգանքով, ակնածանքով կը խոնարհինք հեռուէն իր թարմ հողակոյտին:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՎՅՐԱՔՆՆԻՉ ԱՏԵԱՆ, ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՔԱՂԱՔԱՑԻՆ (ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ) ԳԻՄՈՒՄ : 332/57

**ՍՈՒՋԻ. — Նորին Մեծապատուութիւն Հիգմար Թաճի — Նախագահ
Նորին Մեծապատուութիւն Ֆուաա Սպտուլ Հասի — Դասաւոր
Նորին Մեծապատուութիւն Ֆայիգ Հալազուց — Դասաւոր**

**ԲՈՂՈՔԱՐԿՈՒՔ. — 1. Նորին Ամենապատուութիւն ընտելալ-Պատրիարք
Տիրան Ներսոյեան — Երասաղէմ :
2. Սրբոց Յակոբեանց Հայոց Միաբանութիւն, Երասաղէմ :**

Ներկայացում հետեւեալ փաստաբաններով .

Ա. և Յ. Շիհասէ, Ռամալլան, և Տաթ. Հաննէ Նեսաի, Ամման :

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ. — Եղիշէ Եպ. Տէրտէրեան, Երասաղէմ :

Ներկայացում հետեւեալ փաստաբաններով .

**Ապտուլ-Ռահման Սիբսէ, Ամման, և Աւաճիգ
Հիւսէյնի, Երասաղէմ :**

ԴԱՏԱՎՃԻՒ

Ասիկա (վերաբնութեան) դիմում մըն է կատարուած Նորին Ամենապատուութիւն ընտելալ-Պատրիարք Տիրան Ներսոյեանի և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կողմէ, Երասաղէմ. ընդդէմ Երասաղէմի Նախնական Ատեանի վճիռին. Քուարրուած 1 Օգոստոս, 1957. Քաղաքային Դատ թիւ 48/57. տրուած ի նպատակ Պատասխանատուին, որով Պատասխանատուի Տեղապահական պաշտօնէն վար առնուելու որոշումը չեղեալ կը նկատուէր. ինչպէս նաեւ առաջին Բողոքարկուի ընտրութիւնը իրրեւ Տեղապահ չեղեալ կը նկատուէր, և որով առաջին Բողոքարկուի ընտրութիւնը որպէս Պատրիարք աննկատաբար թողուած էր, (և կը վճուուէր նաեւ որ Բողոքարկուին վճարէ զատական) ծախսերը և 50 Յորդ. Տիւար որպէս փաստաբանի նորձր :

Դիմումագիրը հիմնուած էր 15 կէտերու վրայ. քայլ Բողոքարկուներու փաստաբանը վերածնց զանոնք Տի. այս կէտերէն ոմանք իրարու միացնելէն վերջ : Ութ կէտերը կրնան ամփոփուիլ ըստ հետեւեալի .

1. — Նախնական Ատեանը սխալեցաւ երբ վճռեց թէ ինք իրաւասութիւն ունի նկատառանել և վճռել Պատասխանատուին Տեղապահի իր պաշտօնէն վար առնուելու որոշման օրինականութիւնը, որովհետեւ ան իրաւասութիւն չունի այսպիսի խնդրով մը զբաղելու :
2. — Նախնական Ատեանը սխալեցաւ երբ վճռեց թէ ինք իրաւասութիւն ունի վճիռ տալու թիւ 1 Բողոքարկուի Տեղապահ ընտրութեան օրինականութեան մասին, որովհետեւ ան իրաւասութիւն չունի այսպիսի խնդրոյ մը նկատառութեամբ զբաղելու : Բաց աստի, Պատասխանատուին պահանջազրուութիւնը զործադրելի որոշումի մը պատճառ մը չէր յայտնաբերեր :
3. — Նախնական Ատեանը սխալեցաւ երբ ըսաւ թէ զործնական կապ մը կայ Դատախազին և Պաշտպանեալին միջև այս դատին մէջ, և սխալեցաւ երբ ըսաւ թէ Բողոքարկուին ունէ շահ կամ հանգամանք ունէր այս դատը բանալու :
4. — Նախնական Ատեանը սխալեցաւ անտեսելով թիւ 1 Պաշտպանեալին յարուցած այն կէտը թէ զատը անարժէք կը դառնայ այլևս Պատրիարքի ընտրութիւնը կատարուելէն վերջը, և սխալեցաւ զատը չմերժելով այս հիման վրայ :
5. — Նախնական Ատեանը սխալեցաւ ընդունելով որ Դատախազը (Պատասխանատուն) Տեղապահ մըն է նատատուած ըստ օրէնի, և ի նետեանս ասոր՝ սխալեցաւ երբ չըսաւ թէ Տեղապահութեան պաշտօնը թափուր էր որովհետեւ (նախկին Տեղապահին) պաշտօնը նատատուած չէր, և կամ փոխանակարար (սխալեցաւ երբ չըսաւ թէ Բողոքարկուին բողոքը) ժամանցեալ էր (*) :
6. — Փոխանակարար, Նախնական Ատեանը սխալեցաւ երբ ըսաւ որ ոչ Միաբանութիւնը և ոչ ալ ուրիշ իշխանութիւն իրաւունք ունի Տեղապահի իր պաշտօնէն վար առնելու Դատախազը, որովհետեւ Միաբանութիւնը իրաւունք ունէր Տեղապահը պաշտօնազրկելու, և թէ այս իրաւունքը պատշաճ կերպով կիրարկուած էր օրէնքի համաձայն և բանաւոր պատճառով :

(*) **Ցանօք. բարգմանողի.** — Բոլմի համար սահմանեալ օրինական ժամանակամիջոցը 60 օր է, այս պարագային՝ Հոկտեմբեր 13 — մինչև Դեկտեմբեր 12 : Մինչ Տէրտէրեան եպ. այս դատը բացաւ Մարտ 20ին :

7. — Նախնական Ատեանը սխալեցաւ ընդունելով որ Տեղապահը իրաւունք ունի իրեն փոխ անորդ մը նշանակելու իր բացակայութեան, և, հետեւաբար երբ չըսաւ թէ Տեղապահի պաշտօնը թափուր մնացած էր իր բացակայութեան պատճառով, և փոխանակաբար՝ նախնական Ատեանը սխալեցաւ չընդունելով որ Դատախազի (Պատասխանատուի) կողմէ արուած փոխանորդագիրը այս դատի ձեռք առնուելէն յետոյ արուած է, և, փոխանակաբար՝ սխալեցաւ երբ չըսաւ թէ կարծեցեալ փոխանորդագիրը օրինական արժէք չունէր:

8. — Նախնական Ատեանը սխալեցաւ նկատի առնելով Բողոքարկուին Միաբանութեան անդամակցութենէն վտարման օրինականութեան հարցը որովհետեւ այս խնդիրը չէր յիշուած իր դատական պահանջարկին մէջ իրբե պատճառներէն մէկը դատ բանալու, և սխալեցաւ նկատի չառնելով Միաբանութեան և Ընդհանուր Ժողովի կողմէ կատարուած տնօրէնութիւնները, և սխալեցաւ վճռելով որ Սուրէն Եպիսկոպոսի ընտրութիւնը իրբե Պատրիարքարանի Գործոց Ընդհանուր Վարիչ, զատարկ և ապօրէն էր:

Եւ յետ ուշադիր եւ համընթացաբար ունինդրութեան, թէ՛ Բողոքարկուի եւ թէ՛ Պատասխանատու փաստաբաններուն երկար եւ մանրակրկիտ փաստարկութեանց որոնք լրիւ բացատրեցին իրենց տեսակէտները, եւ մանրազնին քննելէ ետքը վերաքննութեան դիմումագիրը, եւ վերաքննութեան ասիկ եղող դատավճիռը, ինչպէս նաեւ ներկայացուած վաւերագրերնիրը, մենք կը գտնենք որ այս վերաքննական դիմումին դատավճիռը կախեալ է լոկ դիմումի առաջին երկու կէտերուն մասին արուելիք վճիռէն՝ թէ նախնական Դատարանը իրաւասութիւն եւ կամ ձեռնհասութիւն ունէ՞ր վճռելու այս դատը զոր ան գործնականապէս վճռեց՝ թէ ոչ:

Բողոքարկուներու փաստաբանը այդ երկու կէտերու նկատմամբ իր փաստարկութիւնը համառօտեց ըստ հետեւեալի:

1. — Նախնական Ատեանը սխալեցաւ երբ ըսաւ որ ինք մնացորդական (*) իրաւասութիւն ունի Ընդհանուր իրաւասութեան Դատարանի իր հանգամանքով:

2. — Նախնական Ատեանի իրաւասութիւնը, Քաղաքային Դատարաններու 1952ի Օրինաց [4] (1) հատուածով, սահմանափակուած է լոկ քաղաքային դատերու և անշարժ կալուածներու վերաբերեալ դատերով:

3. — Նախնական Ատեանը սխալեցաւ երբ ըսաւ թէ քանի որ Արքայ Յակօբեանց Միաբանութեան կողմէ կատարուած ընտրութիւն մը չեղեալ նկատելու խնդրանքը չիմար Արքայութեան Բարձրագոյն Ատեանի իրաւասութեան ներքեւ, հետեւաբար կ'իյնայ իր իրաւասութեան սահմանին մէջ. (սխալեցաւ) որովհետեւ իրաւասութիւն մը կրնայ կիրարկուիլ (Օրէնքի) բացորոշ նախատեսութեամբ մը միայն:

4. — Արքայութեան Բարձրագոյն Ատեանը իշխանութիւն ունէր, Քաղաքային Դատարաններու Օրինաց Յօդուածի 3րդ և 10րդ հատուածի Գ, Դ և Ե պարբերութիւններու դրութեամբ, վճռելու դատ մը որ խնդրոյ առարկայ կ'ընէ օրինաւորութիւնը Պատասխանատուին Տեղապահի պաշտօնէն զրկուելուն օրինականութիւնը, այն չիման վրայ թէ Տեղապահը հանրային պաշտօնեայ մըն է:

5. — Արքայ Յակօբեանց Միաբանութիւնը հանրային մարմին մըն է. (այսինքն հանրային օրէնքի անձ մը) և թէ անկէ ելած որոշումները վարչական որոշումներ են, որոնք կ'իյնան Արքայութեան Բարձրագոյն Ատեանի իրաւասութեան ներքեւ:

Պատասխանատուի փաստաբանը պատասխանեց ըստ հետեւեալի:

1. — Նախնական Ատեանի մնացորդական իրաւասութիւն ունէր Քաղաքային Դատարաններու Օրինաց 2րդ յօդուածի զօրութեամբ, այնքան որքան ան իշխանութիւն ունէր ամէն մարդու վրայ բոլոր քաղաքային խնդիրներու մէջ, «Քաղաքային դատեր» եղբը, որ կ'երեւի Քաղաքային Դատարաններու Օրինաց [Գ] (1) յօդուածին մէջ, կ'ազնարկէ ու է բնօրէն ունեցող ու է իրաւունքի:

2. — Չնայած այն իրողութեան որ հանրային պաշտօնեայ մը պաշտօնէ արձակելու հրամանը վարչական հրաման մըն է, որ կ'իյնայ Բարձրագոյն Ատեանի իրաւասութեան ներքեւ ըստ Քաղաքային Դատարաններու Օրինաց 10րդ հատուածի 3րդ պարբերութեան, այսպիսի հրաման մը պէտք է բոլորի ձեռնհաս իշխանութենէ մը. մինչդեռ պաշտօնանկութեան այս հրամանը ելած է անձեռնհաս իշխանութենէ մը և հետեւաբար չեղեալ է. այսպիսի հրաման մը կ'իյնայ նախնական Ատեանի իրաւասութեան ներքեւ՝ իր մնացորդական իրաւասութեան զօրութեամբ Ասիկ զատ, կ'անոնք կը արամազրէ որ պաշտօնանկ անձը պէտք է ըլլայ հանրային պաշտօնեայ մը, ինչ որ ներկայ պարագային չի պատշաճիր:

(*) Ծանօթ. քաղցմանդի. — Մնացորդական իրաւասութիւն կը կոչուի Դատարանի մը համար օրէնքով բացառապէս յիշուած դատելու տեսակներէն զուր մնացածները:

3. — Պատասխանատուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տեղապահի իր հանգամանքով հանրային պաշտօնեայ չէ, և Սրբոց Յակոբեանց Միաբանութեան կողմէ տրուած որոշումները վարչական որոշումներ չեն, որովհետեւ այն նախապայմանները որոնք անհրաժեշտ են անձ մը հանրային պաշտօնեայ ընելու՝ չկան այս պարագային:

4. — Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը հանրային մարմին մը չէ և իր որոշումները վարչական որոշումներ չեն, այլ ան հանրային օգտի հաստատութիւն մըն է, որովհետեւ չէ հաստատուած պետութեան կողմէ, որպէսզի յատկանշուէր իբրև հանրային հաստատութիւն, այլ ստեղծուած է առանձինն անհատներու կողմէ, որոնք սկսած են զայն իբրև ընկերութիւն, համաձայն մասնաւոր կանոններու, որոնք կրնան սահմանուիլ իբրև պայմանագրութիւն, որուն դէմ մեղանշուածը կ'իյնայ նախնական Ատեանի իրաւասութեան ներքև:

(Ծանօթ. բարգմանողի. — Այսեղ հանգամանօրէն կը տրուի պատմութիւնը թէ ինչ պայմաններու ներքև տեսադէմի Հայոց Պատրիարքիւնը իբրև Յիմնական Մարմին հաստատուեցաւ Օսմանեան պետութեան կողմէ 1863ի Սահմանադրութեամբ):

Կ'եզրակացնենք վերոյիշեալ (տուեալներէն) որ հաստատութիւն մը հանրային մարմին ընող անհրաժեշտ նախապայմաններ կան Հայ Ուղղափառ Պատրիարքութեան եւ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան մէջ, իսկ երբ նախապայմաններ որոնք հաստատութիւն մը հանրային օրինաց մարմինի կը վերածնան անոնք են:

1. — Որ ան հաստատուած ըլլայ օրէնսդրութեամբ: Կը գտնենք որ թէ և Հայ Ուղղափառ Պատրիարքութիւնը իշխանութիւն կը կիրարկէր իր անդամներուն վրայ, և թէ և Սրբոց Յակոբեանց վանքը գոյութիւն ունէր 1863էն առաջ, և թէ և ան իր իշխանութիւնը կը կիրարկէր հիմնուելով Առաքեալներու վարդապետութեանց և օրէնսդրութեան շփեցումով կրօնական օւսուցումներու վրայ, այսուհանդերձ Օսմանեան պետութիւնը անհրաժեշտ տեսաւ սահմանել այս հաստատութեան իրաւասութիւնները և հանդերձել զայն օրինական պատուահանով մը և այսպէս հանեց 1863ի հրովարտակը, և այդու Պատրիարքութիւնը (օրէնքով) հաստատուեցաւ: Աւելին, Սուլթանը, հրովարտակի 48րդ յօդուածի զօրութեամբ, իշխանութիւն տուաւ Միաբանութեան կանոններ սահմանելու, և այսպէս իր, (Միաբանութեան), 1888ի կանոնադրութիւնը կազմուեցաւ: Անկէ վերջ, Միաբանութիւնը գործեց համաձայն տրամադրութեանց օրէնքի մը, որ կանոնաւորեց իրեն ենթակայ կազմակերպութիւնները և այն եղանակը, որով այս ենթակայ կազմակերպութիւնները և անոնց իրաւասութիւնները կազմուեցան: Պետութեան օրէնքը կը տրամադրէր որ Միաբանութիւնը կրնայ վճել անձնական իրաւանց խնդիրները, շնայած այն իրողութեան որ նման վճիռներ տալը նախարար պետութեան գործն է: Այս օրէնքը կանոնաւորեց նաև Միաբանութեան և իր ենթակայ կազմակերպութիւններու յարաբերութիւնը պետութեան հետ, և ո՛չ Պատրիարքը ո՛չ ալ Տեղապահը կրնային իրենց պաշտօնները ի գործ դնել մինչև որ պէրթա՞ մը չելլէր որ հաստատուէր անոնց նշանակումը պետութեան գլուխին կողմէ, կամ վերջինի պարագային՝ ձեռնհաս պաշտօնեային կողմէ: Վերի օրէնքը, սակէ զատ, կանոններ սահմանեց Պատրիարքի ընտրութեան մասին և քուէարկողներու հանգամանքներու մասին: Հետեւաբար բացայայտ է որ Միաբանութիւնը և Պատրիարքութիւնը այս օրէնքի զօրութեամբ համարուած են անարժանելի մասը քաղաքային վարչութեան՝ ինքնավար կազմութեամբ, և հետևաբար հանրային մարմիններ են, և ոչ թէ հանրային օգտի հաստատութիւններ, ինչպէս կ'ըսէր Պատասխանատուի փաստաբանը:

2. — Որ ան իրեն նպատակ ունեայ հանրային օգուտը: Աւելորդ է յիշել թէ Պատրիարքութիւնը, որ առաջ կուգայ Միաբանութենէն, հաստատուած է ազանովեւ համար Հայ Ուղղափառ Համայնքի անդամներուն շահերը և անոնց տալու համար անհրաժեշտ ծառայութիւնը՝ ամուսնութիւններ կատարելու, ամուսնալուծումներ տալու, (ժառանգական) յաջորդութեանց մասին որոշումներ տալու, և այլն: Այս իրաւասութիւնները տրուած են օրէնսդրութեանց մասին որոշումներ տալու, և այլն: Այս իրաւասութիւնները տրուած են օրէնսդրութեան մէջ են, բայց անոնք փոխանցուած են Պատրիարքութեան, և Պատրիարքութեան կողմէ մատուցուած այս ծառայութիւնները մասն են հանրային ծառայութեան, որոնք սկզբնապէս կը պատկանին պետութեան, եթէ անոնք փոխանցուած չըլլային համաձայն Միաբանութեան օրինաց և համաձայն Յորդանանեան Օսմանադրութեան 1(9րդ հատուածին, որ կը լիազօրէ կառավարութիւնը ճանչնալու կրօնական համայնքները և կազմելու անձնաւորութեան խորհուրդները, (Յորդանանեան) Օսմանադրութեան 1(9րդ հատուածին զօրութեամբ ճանչցուելու կրօնական խորհուրդները, մէջն ըլլալով Հայ Ուղղափառ համայնքի խորհուրդները, և (ճանչցուելու նաև) գործադրութիւնը անոնց որոշումներուն, Գործադրութեան Պաշտօնատան մէջ, ինչպէս յիշուած է այս խորհուրդներու համար զրուած օրէնքներու մէջ:

3. — Որ ան ունենայ պատժական իշխանութիւն իր անդամներուն վրայ, Բացայայտ է այս պարագային՝ որ համաձայն Միաբանութեան կանոնադրութեանց 15րդ հատուածին, Միաբանութիւնը լիազօրուած է որոշումներ տալու արտաքսելու համար իր անդամներէն ոեւէ մէկը որ հակառակ կ'ընթանայ իր կանոնադրութեանց: Ասկէ կը գտնենք որ օրէնքը կուտայ Միաբանութեան պատժական իշխանութիւն իր անդամներուն վրայ, ինչ որ եղաւ Պատասխանատուի պարագային, որովհետեւ որոշում մը տրուեցաւ անոր արտաքսման համար: Բացայայտ է որ երբ Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը պաշտօնազրկեց Պատասխանատուն և արտաքսեց զայն, (Միաբանութիւնը) զայդ ըրաւ համաձայն օրէնքի, և գործեց որպէս պատժական մարմին մը և Միաբանութեան կողմէ այս կերպով տրուած որոշումները պատժական որոշումներ են, որոնք կրնան նկատուիլ իբրև վարչական որոշումներ:

Հետեւաբար Պատասխանատուի դիմումագրի 3 և 4 կէտերուն կապակցութեամբ կը գտնենք որ Պատասխանատուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան Տեղապահի իր հանգամանքով հանրային պաշտօնեայ մըն էր, Միաբանութեան հետ ունեցած իր ընկերակցութեան՝ և այդ ընկերակցութեան պայմաններուն իր յանձնառութեան նետեանքով, այս պայմանները և կանոնադրութիւնները, որոնք հիմնուեցան և կանոնի կարգան պետութեան օրէնքով, ընդունուած են Պատասխանատուի կողմէն: Եւ որովհետեւ Միաբանութիւնը հանրային մարմին մըն է՝ Պատասխանատուն օրէնքի զօրութեամբ կ'ըլլայ հանրային պաշտօնեայ մը և հետեւաբար զայն արտաքսելու որոշումը վարչական որոշում մըն է որ չիյնար նախնական Ատեանի իրաւասութեան ներքեւ, որովհետեւ հանրային մարմիններու կողմէ տրուած որոշումները դատական չեն այլ վարչական և կը պատկանին շինդրանքներու զատին:

Իսկ զալով այն վերագրումին, թէ պաշտօնանկութեան որոշումը չեղեալ է՝ որովհետեւ տրուած է մարմինի մը կողմէ որ գործեց առանց ձեռնհասութիւն ունենալու, և որովհետեւ ժողովը որուն մէջ պաշտօնանկութեան որոշումը տրուեցաւ չէր գումարուած ըստ կանոնի, և թէ այսպիսի պաշտօնանկութեան որոշում մը տալու ոյժը ունեցող իշխանութիւն մը գոյութիւն չունէր, և նետեւաբար այս խնդրը կ'իյնայ նախնական Ատեանի իրաւասութեան մէջ, մենք կը գտնենք որ վարչական որոշում մը չեղեալ կ'ըլլայ միայն՝ երբ իշխանութիւն մը կը յախճարէ ուրիշ իշխանութեան մը իրաւասութիւնը: Բայց երբ օրէնքը չի սահմաներ մասնաւոր իրաւասութիւններ և վարչական իշխանութիւնը իր վրան կ'առնէ այսպիսի իրաւասութիւններ կիրարկելու իրաւունքը, նման արարք մը չեղեալ չի նկատուիր օրէնքի մէջ, այլ օրինական բացատրութեամբ կը նկատուի օրէնքի բռնաբարում, որովհետեւ երբ վարչութիւնը գործնական քայլ մը կ'առնէ որ չէ նախատեսուած կամ նոյնիսկ արգելուած է օրէնքով, նման պարագաներու մէջ եղած թերացումը կը նկատուի օրէնքի բռնաբարում և նման պարագաներուն օրէնքը կը նախատեսէ դարման մը այսպիսի օրինական բռնաբարումներուն համար:

Եթէ ենթադրենք, այսուհանդերձ, որ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը չունէր իշխանութիւնը Պատասխանատուն պաշտօնանկ ընելու, և թէ պաշտօնանկութեան համար կանչուած ժողովը չէր գումարուած ըստ օրինի, այն ատեն իր որոշումը պիտի ըլլար օրէնքի հակառակ և դարձեալ նախնական Ատեանը իրաւասութիւն պիտի չունենար չեղեալ համարելու որոշումը կամ մինչև իսկ նկատի առնելու զայն:

Գալով խնդրագրին, որով ապօրէն կը նկատուի Տեղապահի ընտրութիւնը, բացայայտ է թէ անիկա խնդրագիր մըն է՝ որ ընտրութեանց կը վերաբերի, և այսպիսի խնդիրներու վերաբերեալ խնդրագրերը Արդարութեան Բարձրագոյն Ատեանի իրաւասութեան սահմանէն դուրս կ'իյնան, որովհետեւ Քաղաքային Դատարաններու Օրինաց 10 յօդուածի 3 պարբերութեան 3 հասուածը կը սահմանափակէ Արդարութեան Բարձրագոյն Ատեանի իրաւասութիւնը ընդունելու միայն այնպիսի խնդրագրերը՝ որոնք կը վերաբերին Քաղաքապետական, Տեղական և վարչական խորհուրդներու ընտրութեանց, և Պատրիարքական ընտրութիւնները չեն իյնար վերև յիշուած խորհուրդներու համար եղած ընտրութեանց սահմանին մէջ:

Կը մնայ մեզի նկատի առնել թէ նախնական Ատեանը կրնա՞ր որոշել այս խնդիրը մնացորդական իրաւասութեան հիմքերու վրայ: Մեր գաղափարով մնացորդական իրաւասութիւնը կարելի է ունենալ միայն երբ բացորոշ նախատեսութիւն կայ առ այդ, և մնացորդական իրաւասութիւն չի կրնար ըլլալ ուր որ չկայ բացորոշ նախատեսութիւն այս նպատակով: Իսկ նախնական Ատեանի իրաւասութիւնը թիւրեղի պէս յստակ է, որովհետեւ նախատեսուած է 1952ի Քաղաքային Դատարաններու Օրինաց թիւ (1) հատուածով: Անիկա կրնայ տեսնել այն բոլոր քաղաքային դատերը և անշարժ կալուածներու վերաբերեալ դատերը, որոնք չեն իյնար նախադատ Ատեաններու իրաւասութեան ներքեւ: Եւ մենք կը գտնենք որ երբ օրէնքին մէջ կը բացակայի նախատեսութիւն մը որ տայ Արդարութեան Բարձրագոյն Ատեանին իրաւասութիւն՝ վճռելու խնդրագրերը, որոնք կը վերաբերին Պատրիարքական ընտրութեանց, այդ անհրաժեշտաբար չի նշանակեր որ նախնական Ատեանը ինքնաբերաբար իրաւասութիւն պիտի վայելէ այն հիման վրայ թէ ինք իբրև նախնական Ատեան մնացորդական իրաւասութիւն ունի:

Պաղեստինի մէջ գոյութիւն ունեցող Արդարութեան Բարձրագոյն Ատեանի մնացորդական իրաւասութիւնը ի զօրու էր՝ Պաղեստինի «Լրահանգ ի Խորհրդեան» (չլուխի) 11րդ հատուածի զօրութեամբ, և թէ՛ այդ նախատեսութիւնը չըլլար՝ Լոգատարութեան միջոցին մնացորդական իրաւասութեամբ ոչ մէկ Դատարան պիտի գտնուէր, բայց այսօր այսպիսի նախատեսութիւն գոյութիւն չունի։ Նախնական Ատեանը հետևաբար սխալեցաւ լեցնելով պարագայութիւն մը, առանց բացորոշ նախատեսութեան, որովհետև Յորդանանեան Սահմանադրութեան 100 և 103 հատուածները կը նախատեսեն որ քաղաքային զատարանները իրաւասութիւն կը կիրարկեն միայն գոյութիւն ունեցող օրէնքներու զօրութեամբ և վճիռ կ'արձակեն Յորդանանեան Թագաւորութեան մէջ ի զօրու եղող օրէնքներու համաձայն։ Երբ բացորոշ նախատեսութիւն մը կը բացակայի նախնական Ատեանի իրաւասութեան մասին, նախնական Ատեանը չի կրնար մնացորդական իրաւասութիւն պահանջել, և հետևաբար չի կրնար զատ ընդունիլ այնպիսի խնդրոյ մասին՝ որ չիլնար իր իրաւասութեան մէջ բացորոշ նախատեսութեամբ, և չիլնար նաև որևէ ուրիշ զատարանի մը իրաւասութեան մէջ։

Լսած ըլլալով այս եզրակացութեան՝ մենք անհրաժեշտ չենք նկատեր վճռել վերաքննութեան դիմումին միւս կէտերը։

Նկատի ունենալով վերոյիշեալները, մենք կը վճռենք որ այս դատը չիլնար նախնական Ատեանի իրաւասութեան ներքեւ, և թէ՛ յիշեալ Ատեանը իր իրաւասութեան սահմանէն դուրս ելած է ունկնդրելով դատը, և հետևաբար մենք արդարացի կը գտնենք վերաքննութեան դիմումը, չեղեալ կը նկատենք վարի Ատեանի զատավճիռը, և կը հերքենք պատասխանատուն թացած գատը (կը վճռենք նաև որ Պատասխանատուն) վճարէ այս (զատարանի) և վարի (զատարանի) ծախքերը և 75 Յորդ. Տիւրք. որպէս փաստարաններու վարձք։

Տրուեցաւ լսուելու նորին Վեճախաւորին Լիւսէյն Թագաւորին բաց դատարանի մէջ 23 Հոկտեմբերի 1957:

Նախագահ Վիգմար Թաւի	Դատաւոր Յուսա Ապտուլ Հասի	Դատաւոր Ֆայիզ Հալազուե
-------------------------------	-------------------------------------	----------------------------------

ԽՆԴԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

**Վերաքննիչ Ատեանին առջեւ շահուած դատի առթիւ Ասմե. Ս. Պատրիարք Հայրը
բացի անձնագրէն ու նամակաւ կատարուած բազում շնորհաւարութիւններէ
ստացաւ նաև հեռեւեալ հեռագիրներ.**

Բերկրալից սրտով շնորհաւորութիւններ և մաղթանքներ Զեր պաշտօնին շուտափոյթ Արքայա-
կան բարեհաճ վաւերացման: Կը յուսամ հեռագրեցիք նաև կիւլպէնկեան Լիմնարկութեան:
23 Հոկտ. 1957, Կ. Պոլիս Պարեզին Պատրիարք

Շատ ուրախացանք լսելով նախնական Ատեանի տուած վճիռն ջնջումը, հաստատելով Զեր ըն-
տրութեան օրինաւորութիւնը: Սրտագին շնորհաւորութիւններ և մաղթանքներ Զեր Ամենապատ-
ուութեան և Ս. Յակոբեանց Միաբանութեան խաղաղ բարգաւաճման:
24 Հոկտ. 1957, Պահիրէ Մամբրէ Արեւոպ.

Ուրախութեամբ տեղեկացանք Յորդանանի վերաքննութեան Ատեանի արձակած վճիռը յօգուտ
Սուրբ Աթոռից և կը խնդակցինք և կը մաղթենք Զերդ Ամենապատուութեան արեւշատութիւն և
բազմարդիւն գործունէութիւն:
30 Հոկտ. 1957, Նիւ եօր Վարդան Քենյ. Մկրեան
Առաջն. Փոխանօրդ Ամերիկայի

Ուրախ ենք որ Յորդանանի Բարեխնամ կառավարութիւնը արդարութիւնը պաշտպանեց Ոյս
առթիւ յանուն-կեցողական վարչութեան և թեմիս համայն հայութեան սրտագինս կը շնորհաւո-
րենք Զերդ Սրբազնութիւնը և համօրէն Միաբանութիւնը և կը մաղթենք արեւշատութիւն և բա-
րեբաասիկ տարիներ:
24 Հոկտ. 1957, Յրէզնո Կարապետ Աւագ Քենյ. Պալճայեան
Տեղապան Պալմօրեիոյ Թեմիի

Շնորհաւորութիւններ երուսաղէմի վերաքննիչ Ատեանի տուած վճիռին, յայտարարելով Պատրիարքարանի ընտրութեանց օրինաւորութիւնը: Կ'աղօթենք վեհափառ Թաղաւորի շուտափոյժ վաւերացման պսակելու շահուած արդարութիւնը: Յարգանք:

24 Հոկտ. 1957, Պաղատ

Զգօճ Ծ. Վրդ.

Պատրիարքարանին ի նպատակ Դատական վճիռին տրուած լուրը ստացանք մեծ ներախութեամբ: Սրտագին շնորհաւորութիւններ Ձերդ Ամենապատուութեան և Միաբանութեան Կ'աղօթենք առ Բարձրեալն պարգեւելու Ձեզ առողջութիւն, արեւշատութիւն ի կատար ածելու Ձեր բարձր պաշտօնի պատասխանատուութիւնը որուն արժանի էք: Եթէ Աստուած ի մեր կոյս է ո՞վ իցէ մեզ հակառակ: Թող Աստուած անասան և բարգաւան պահէ Հայաստանեայց Եկեղեցին և Պատրիարքարանը:

23 Հոկտ. 1957, Լոս Անճելըս

Տիրայր Վարդապետ

Խորին շնորհակալութիւններ Ձեր երէկուայ քաջած հեռազրին համար և սրտագին շնորհաւորութիւններ արդարութեան յաղթանակին համար:

23 Հոկտ. 1957, Միլանո

Հիւսիսեան

Սրտագին շնորհաւորութիւններ:

22 Հոկտ. 1957, Պէլյուս

Տիկ. Սիրան Սեզա

Սրտագին շնորհաւորութիւններ:

23 Հոկտ. 1957, Լոնտոն

Ճօրն Քիւրճեան

Կը շնորհաւորենք արդարութեան յաղթանակը և Կ'աղօթենք Ձերդ Ամենապատուութեան արեւշատութեան:

23 Հոկտ. 1957, Երիբոլ

Յովակիմ Մնացականեան

ՄԱՅՐ ԱԹՈՒԷՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՍՏԻ ԴԻԻԱՆԱՏԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Առաջինը, սոյն բուականի Հոկտեմբերի 22ին, հետեւեալ ուղերձը յղեց Անքիլիաս, հեռագրաւ եւ յատկ գրութեամբ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Արքուակալ

Ամենազախ Տ. Զարեհ Եպիսկոպոսին

Պէլյուս

Մենք, Վազգէն Առաջին, Կաթողիկոս Ամենայն Հայոց, տեղեկացած ըլլալով Հոկտեմբերի սկզբի մամուլի հալոյրդումներէն Ձեր որոշումի մասին ամերիկահայ էջմիածնական բեմի շարք մը եկեղեցիներ Կիլիկեան Արքային իբրանութեան ներքեւ առնելու, Մեր վրդովումը եւ վիճար կը յայնենք այս աննախընթաց օճնձուրեան եւ պատմականօրէն ըստեղծուած կանոններու եւ իրաւասութեանց սահմաններու խախտման համար:

Յանուն Հայաստանեայց Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. էջմիածնի եւ հայ հաւատացեալ ժողովուրդի այսու վճռապէս կը հրաւիրենք Ձեզ յեսս կոչել Ձեր այդ որոշումը ի սեր Աստուծոյ եւ ազգի:

Հետևողական Մեր խաղաղասիրական եւ միասնութեան ոգիին եւ վերջ տալու համար ներքին անիմաստ հերձուներուն եւ ազգակործան պառակտումներուն, միաժամանակ վերսին կ'առաջարկենք Ձեզ անյապաղ կերպով բանակցութիւններ սկսիլ որեւէ յարմար տեղ, վերականգնելու համար հոգեւոր միութիւնը եւ խաղաղութիւնը՝ մեր նախնեաց լոյս հաւատով եւ դարերու հերոսական մաքառումներով ստեղծուած ու պահպանուած մեր Ս. եկեղեցւոյ:

Կը սիրենք յուսալ որ Ձեր դրական պատասխանը պիտի ստանանք յառաջիկայ աստուծոյ ստացուեց հետագիրը:

ՎԱԶԳԻՆ Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Ի պատասխան սոյն Հայրապետական ուղերձին Նոյեմբեր 4ի առաւօտեան Մայր Աթոռում ստացուեց հետեւեալ հեռագիրը՝

Պէյրուքից

2 Նոյեմբերի 1957 թ.

Ամենայն Հայոց Կարողիկոս Վազգէն Ա.

Էջմիածին

Կիլիկեան Կարողիկոսութեան ուղղուած Ձեր Սրբութեան 22 Հոկտեմբերի հեռագիրը ստացուած է: Կը յայտնենք թէ Կիլիկիոյ Կարողիկոսութեան եպիսկոպոսական դասուն մէջ Ջաւեն կամ Ջարեն անունով եպիսկոպոս գոյութիւն չունի: Կիլիկիոյ Աթոռը եղած է եւ կը մնայ նախանձախնդիր Հայ եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի միութեան եւ համերաւութեան: Խոնարհ աղօթակից՝

Կարողիկոսութեան Դրան եպիսկոպոս
ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վեհափառ Հայրապետը յասուկ կոնցալով, ուղղուած համայն հայ ժողովրդեան, պիտի նշդէ Մայր Աթոռի դիրքը Աճրիլիասի եւ նրա հակականոնական եւ եկեղեցախնդրեցող հանդէպ:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒԻ

5 Նոյեմբերի 1957 թ.

Ս. Էջմիածին

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սոյն Հոկտեմբերի 12-15ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցաւ Նորին Սուրբ Օծուրբին Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կարողիկոսի Գանակալութեան երկուրդ տարած հանդիսութիւնը:

Վեհափառ Հայրապետի հրաւերով, հանդիսութեան առիթ ժամանել էին Մայր Աթոռ Համայն Վրաստանի Պատրիարք-Կարողիկոս Նորին Սրբութիւն Տ. Տ. Մելքիսեդէկ Գ. Բ., Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Սրբազնագոյն Պատրիարք Նորին Սրբութիւն Ալեքսի Ինչագոր ներկայացուցիչ Նորին Սրբազնութիւն Սերգի եպիսկոպոսը, ինչպէս եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերաւանդ Տ. Մամբրէ Արեւոյ, Գալիպոլեան, Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գերաւանդ Տ. Սիւն Արեւոյ. Մա.

նուկեանը, Նուսադէմի Ս. Յակոբեանց վանքի Միաբաններ Գերաւորեն Տ. Հայկազուն Նպս. Աբրահամեանը եւ Հոգեւորն Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեանը եւ ուրիշներ:

Կիրակի Հոկտեմբերի 13ին Մայր Տաճարում տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ: Պատարագեց եւ քարոզեց Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաւորեն Տ. Մամբրէ Արեւոյս. Գալթայեանը: Յաւատարմ. Պատարագի վեհաբանի Ծաղկեայ դահլիճում կայացաւ պաշտօնական ընդունելութիւն: Վեհափառ Հայրապետի Գանակալութեան երկրորդ տարեկան արարածի առթիւ ողջոյնի խօսք ասացին Նորին Սրբութիւն Մելիքեանցեկ Գ. Կարողիկոսը, Նորին Սրբազնութիւն Սերգի Նպխակոսը, Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի Նախագահ Պրն. Ս. Գապարեանը, Գերաւորեն Տ. Սիոն Արեւոյս. Մանուկեանը, Գերաւորեն Տ. Մամբրէ Արեւոյս. Գալթայեանը, Գերաւորեն Տ. Հայկազուն Նպս. Աբրահամեանը, Հոգեւորն Տ. Ասողիկ Ծ. Վրդ. Ղազարեանը եւ Գերազոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Գոնչ.-Պրն. Ար. Ղարիբեանը:

Վերջում խօսք ասաւ Նորին Վեհափառութիւնը ողջունելով եւ օրհնելով բոլորին: Ընդունելութիւնից յետոյ ձեմարանի մեծ Գանձիւնում կայացաւ նաեկերոյր:

Մայր Աթոռում գտնուած ժամանակ հիւրերը դիտեցին Ս. Հռիփսիմէի եւ Ս. Գայանէի վանքերը, Զուարթնոցը, ինչպէս եւ Նրեւանի տաճարը վայրերը:

Ներկուշաբթի Հոկտեմբերի 14ին, Համայն Վրաստանի Պատրիարք-Կարողիկոս Մելիքեանցեկ Գ., ընկերակցութեամբ միւս բարձրաստիճան հոգեւորականի, այցելեց Ս. Մեսրոպի շիրիմը Օշականում եւ մասուցեց հոգեհանգիստ:

Համայն Վրաստանի Պատրիարք-Կարողիկոս Մելիքեանցեկ Գ. ին գիմնաւորելիս, ինչպէս եւ նախապահելիս, Նրեւանի երկարուղային կայարանն էր ժամանել Նորին Սրբութիւն Վաչէն Ա. Կարողիկոսը, ընկերակցութեամբ Գերազոյն Հոգեւոր Խորհրդի անդամների եւ Մայր Աթոռի Միաբանութեան:

Գ Ի Ի Ա Ն Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ի

Ամենապատիւ

Տ. Տիրան Արեւապետոս Ներսոյեանին,
Պատրիարք Հայոց Սրբոյ Նուսադէմի,

Նուսադէմ.

Ստորեւ յայտնուած ենք Ձեզ, ի գիտութիւն, Մայր Աթոռի Գիւանատան պաշտօնական հաղորդագրութիւնը:

Սեպտեմբերի 20ից 28 Նորին Սրբութիւն Վազգէն Ա. Կարողիկոսը հովուապետական այցելութիւն տուեց Ազրբեջանի հայոց բնակիչ:

Վեհափառ Հայրապետը եղաւ Բախում, ուր բազմահազար ժողովրդի ներկայութեամբ պատարագեց եւ քարոզեց: Նա այցելեց Կիրովաբադը, Ինճնավար Լեռնային Ղարաբաղի կենտրոն Ստեփանակերտը, Շուշի, Ամարասի եւ Գանձասարի վանքերը:

Ամենուրեք Նորին Սրբութիւնը արժանացաւ հայ հաւատեացեալ ժողովրդի, ինչպէս եւ Ազրբեջանի պետական իշխանութիւնների ամենաջերմ ընդունելութեան: Ի պատիւ Վեհափառի տեղի ունեցան ընդունելութիւններ Անդրկովկասի մուսուլմանների Շէյխ-ուլ-Իսլամի մօտ, Կիրովաբադի Քաղաքային Սովետում եւ Լեռնային Ղարաբաղի Մարզային Գործադիր Կոմիտեում:

Վեհափառը ընդունուեց Ազրբեջանի Հանրապետութեան Նախագահ Պարոն Միրզա Իբրահիմովի եւ Կրօնից Գործերի Լիազոր Պարոն Մանսեդովի կողմից սրտեց հետ գրոյց ունեցաւ Ազրբեջանի հայ եկեղեցիների եւ սրբավայրերի հետ կապուած հարցերի շուրջը:

Գ Ի Ի Ա Ն Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ Ի

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ն Ո Ս Գ Ի Բ Ը Ն Ե Բ

Ասորոց Պատրիարքի բնօրոքեան առքիւ

Նրուադէմ, 27 Հոկտեմբեր 1957

Նորին Ամենապատուութիւն

Մար Իզնասիոս Տագուպ Գ.

Ս. Մարիամ Եկեղեցի

Հօմս

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Տ. Վ. ազգէն Ա. Սրբազնազոյն Կարողիկոսի Գահակալութեան երկրորդ տարեդարձին առիթով:

Նրուադէմ, 1 Հոկտեմբեր 1957

Նորին Ս. Օձուրիւն Տ. Տ. Վ. ազգէն Ա.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին

Մեր խոնարհ յարգալից շնորհաւորութիւնները Ձերդ Վեհափառութեան Գահակալութեան տարեդարձին առքիւ, Մեր, Միաբանութեանս եւ հօտին կողմէ: Կ'աղօթենք Ձեր առողջութեան, Ձեր Ս. գործին իրականացման եւ Մայր Աթոռոյ հաստատման: Հաստատութեամբ եւ խոնարհութեամբ:

ՏԻՐԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

Ս. Էջմիածին, 25 Հոկտեմբեր 1957

Ամեն. Տ Տիրան Պատրիարք Ներսայեան

Նրուադէմ

Ընդունեցե՛ք մեր շքեմագին շնորհակալութիւնը մեր Գահակալութեան տարեդարձին առքիւ Ձեր շնորհաւորանքին համար, ինչպէս եւ սրտագին բարեմաղորութիւնները Ձեր քաջառողջութեան եւ արեւատեան:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա.

Խրիմեան Հայրիկի մահուան յիշատեանի մասին

Ամենայն Հայոց Երջանկայիշատակ Կարողիկոս Խրիմեան Հայրիկի մահուան Յիշատեանի մասին կարգադրում ենք հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել եւ խօսել հայրենասէր մեծ հայրապետի կեանքի ու գործի մասին Կիրակի Նոյեմբերի 17ին:

Վ Ա Ջ Գ Է Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն

Ծանօթ. — Համաձայն Վեհափառ Հայրապետի հրահանգին, իր օրին եղաւ հանդիսաւոր Պատարագ եւ հոգեհանգիստ: Խօսեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայր: Խրիմեան Հայրիկի մասին աւելի հանգամանօրէն պիտի անդրադառնանք Ամառգրիս յառաջիկայ թիւով:

ԽՄԲ.

Ձեր Անխոփ Պատրիարքական Աթոռին բարձրացման բարեբաւոյն առիթով, կ'ուղղենք Ձեզ մեր յարգալից շնորհաւորութիւնները: Կը հայցենք Բարձրելոյն օրհնութիւնը Ձեր Ս. Եկեղեցւոյն եւ սիրելի Հօտին վրայ:

ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ.

Պատրիարք Հայոց Նրուադէմի

Հօմս, 31 Հոկտեմբեր 1957

Ամեն. Տ. Տիրան Արքեպս.

Պատրիարք Հայոց Նրուադէմի

Շնորհակալութիւններ Ձեր սիրոյն եւ յարգանաց համար:

ՊԱՏՐԻԱՐԿ Ի Գ Ն Ա Տ Ի Ռ Ս Ե Ա Գ Ռ Ի Պ

Կիւլպէնկեան տոնին համար մատուցուած հոգեհանգստեան պաշտամանց առքիւ

Նրուադէմ, 26 Հոկտեմբեր 1957

Մեծարգոյ Վարիչ Անդամ

Կիւլպէնկեան Հիմնարկութեան

Լիզպոն

Կիւլպէնկեան յիշատակի օրուայ առիթով այսօր Ս. Պատարագ մատուցուեցաւ հանգուցեալ Գալուս եւ Նուարդ Կիւլպէնկեաններու եւ իրենց ծնողաց հոգւոցն ի հանգիստ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին՝ ինչպէս նաեւ Նրուադէմի եւ Բերդինեմի Սրբաեղեաց մէջ: Թող Բարձրելոյն Ասուած պարգեւէ Ձեզ երկար առողջ տարիներ եւ ասուածահանոյ արդիւնաբեր գործ: Յարգանքներով եւ օրհնութեամբ:

ՏԻՐԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

Լիզպոն, 29 Հոկտեմբեր 1957

Ամեն. Տ. Տիրան Ս. Արեւազ. Ներսիսյան

Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Պատեօնակիցներս եւ ես մեծապէս կը գնահատենք Ձեր ազնիւ եւ քրիստոնէական մտածումը՝ մասուցանելով հոգեհանգստեան պատեօն մեր Հիմնարկչին եւ իր ընտանիքի հանգուցեալ անդամներուն համար: Յարգանքներով:

ԱԶԼՎԷՏՕ ՓԷՐՏԻԿԱՆ

Երուսաղեմ, 26 Հոկտեմբեր 1957

Տիար Նուպար Կիւլպէնկեան

Լոնտոն

Կիւլպէնկեան յիշատակի օրուայ առիքով այսօր Ս. Պատարագ մասուցուեցաւ Ձեր հանգուցեալ մեծ հօր եւ մօր եւ ծնողաց հոգիներուն համար Ս. Յակոբեանց Մայր Տանարին՝ ինչպէս նաեւ Երուսաղեմի եւ Բերկեհեմի Սրբատեղեաց մէջ: Թող Բարձեալն Աստուած պարգեւէ Ձեզ արեւատուրիւն եւ առողջ միտք եւ մարմին, շնորհելով Ձեզ արդիւնաբեր կեանք: Անկեղծօրէն:

ՏԻՐԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

Լոնտոն, 31 Հոկտեմբեր 1957

Ամենապատիւ Տ. Տիրան Արեւազ.

Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Երախտագիտութեամբ ընդունեցինք Ձեր հեռագիրը որով ինձի կը տեղեկացնէիք թէ Ձեր բարեհաճ կարգադրութեամբ կատարուած է Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան պատեօն ծնողացս եւ մեծ ծնողացս հոգիներուն ի հանդիս: Շատ երախտագորտ եմ Ձեր օրհնութեանց: Ընդունեցէ՛ք Ձեր Եկեղեցւոյ զաւկին որդիական ջերմ զգացումները:

ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ

Վեհափառ Թագաւորի Ծննդեան Տարեգարձին առթիւ

Երուսաղեմ, 14 նոյեմբեր 1957

Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւոր

Արեւայական Ծննդեան Երջանիկ տարեգարձին առթիւ, մեծ յարգանքով եւ հաւատարմաբար կը յայտնենք մեր ամենեւնի անկեղծ շնորհաւորութիւնները եւ հաւատարմութիւնը մեր կողմէ եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու հայ համայնքին, եւ կ'աղօթենք որ Ամենակալն Աստուած շնորհէ Ձերդ Վեհափառութեան երկարադաւան, փառաւոր եւ յղորակեալ իշխանութիւն:

ՏԻՐԱՆ ԱՐՔԷՊՍ. ՆԵՐՍՈՅԵԱՆ

Տեղապահ եւ Ընտրեալ Պատրիարք Հայոց Երուսաղեմի

Ի պատասխան ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը Նորին Վեհափառութեան

Արեւայական Պարտ, Ամման, 18 նոյեմբեր 1957

Նորին Ամենապատուութիւն

Տիրան Արեւազ. Ներսիսյան

Երուսաղեմ

Կը փափաքիմ յայտնել շնորհակալութիւնս Ձեր բարի զգացմանց եւ անկեղծ շնորհաւորութեանց համար մեր Ծննդեան տարեգարձին առթիւ:

ԷԼ ՀԻԻՍԷՅՆ

Աւետիք Իստեակեանի մատուան առթիւ

Ս. Էջմիածին, 28 Հոկտեմբեր 1957

Ամեն. Տ. Տիրան Պատրիարք Ներսիսյան

Երուսաղեմ

Կիրակի Հոկտեմբեր 27ին, Մայր Տանարում մասուցուեց Ս. Պատարագ եւ հոգեհանգստեան արարողութիւն, նախազանութեամբ Վեհափառ Հայրապետի, ի յիշատակ մեծանուն բանաստեղծ եւ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի պատուական անդամ Աւետիք Իստեակեանի: Պատարագեց Գերաւորն Մամբէ Արեւազ. Գալթայեանը, քարոզեց Վեհափառ Հայրապետ: Ներկայ էին Մայր Աթոռի Միաբանութիւնը, հանգուցեալի հարազատները, գրականութեան ու արուեստի աշխատողներ եւ մեծ բոլով հաւատացեալ ժողովուրդ: Հոգեհանգստեան արարողութիւնից յետոյ Վեհափառի սեղանատունը տուեց հոգեհաւ:

ԳԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՅ

Փ Ա Ռ Է Ն Ե Պ Ս. Մ Ե Լ Ք Ո Ն Ե Ա Ն

Տարւոյս Հոկտ. ամսի 21ին, խաղաղ պայմաններու ներքեւ, իր հոգին աւանդեց Կիլիկեան Միաբանութեան երիցագոյն անդամը Փառէն Եպս. Մելրոնեան, Երուսաղէմի մէջ: Համաձայն իր կտակին փափաքած էր որ թաղուի Երուսաղէմ. եւ հետեւաբար զինք խնամողներ զգալով որ իր երկարամնայ եւ արկածալից կեանքին պատրոյզը կ'առկայձի արդէն, զինք Երուսաղէմ փոխադրելու բարեմիտ փութկոտութիւն ունեցած էին: Հասաւ անիկա Հոկտ. 20ի երեկոյեան, պատգարակով. մեծ հոգածութեամբ զետեղուեցաւ Ս. Աթոռոյս Միաբաններու յատուկ սենեակներէն մէկը. ուշքը թէ եւ վրան էր բայց հոգեվարքի հերքը զգալի էր: Առանձինն հիւանդապահուհի նշանակուեցաւ որ հակեց իրեն հետ ամբողջ գիշերը անպակաս ընելով պահանջուած ամէն խնամք: Պատր. Փոխանորդ Տ. Սուրէն Սրբազան եւ Լուսարարապետ Տ. Ենորհք Եպս. նոյն երեկոյին Հաղորդեցին զինքը ըստ օրինի: Վստահ ենք որ վերջին այս Քոշակն ալ, Երուսաղէմ ապահով հասած ըլլալու գիտակցութեան հետ, հոգեկան մեծ մխիթարութիւն պատճառեց Աստուծոյ տառապեալ այս բարձրաստիճան պաշտօնեային: Խաղաղ գիշեր մը անցնելէ վերջ՝ առաւօտեան ժամը 10ին մարեցաւ իր երկրաւոր կեանքը, նման կանթեղի մը որ կը շիջի ձիթախիւղին սպառելովը:

Նոյն օրը, յետ երեկոյեան ժամերգութեան, մարմինը կանոնական լուսացումէ եւ հանդերձուելէ վերջ, տարուեցաւ իր սենեակէն եկեղեցի: Ս. Աթոռիս ամբողջ Միաբանութիւնը եւ ժառնգ. վարժարանի աշակերտութիւնը՝ հանդիսապետութեամբ Պատր. Փոխանորդ Դեր. Տ. Սուրէն Եպս. թափօր կազմած, պատշաճ շարականներու երգեցողութեամբ, եւ աւետարաններու ընթերցմամբ, առաջնորդեց մարմինը Մայր Տաճար, ուր մնաց ամբողջ գիշերը: Յաջորդ առաւօտ կատարուեցաւ մարմինին օծումը Ս. Պատարագի ընթացքին ձեռամբ Սմնն. Սրբազան Պատրիարք Հօր որ խօսեցաւ դամբանականը, վեր հանելով հանգուցեալի կեանքին եւ ծառայութեան պատկերը: Յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ թաղման կարգը եւ յուղարկաւորութիւնը նախագահութեամբ Սմնն. Ս. Պատրիարք Հօր եւ ի ներկայութեան ամբողջ Միաբանութեան եւ աշակերտութեան: Մարմինը ամփոփուեցաւ Մատենադարանի կից, եպիսկոպոսաց յատուկ գերեզմանատան մէջ, Պարգեւ Եպս. կողքին: Փառէն Եպս. յուզումնալից կեանքի ամբողջ տեւողութեան, հաւանաբար միակ ըզձանքն էր որ լիովին գործադրուեցաւ համաձայն իր փափաքին:

Փառէն Եպս. ծնած է 1873ին, Էհնէշ, աւազանի անուամբ՝ Ներսէս: Հայրը, Մելրոն, Սասունցի՝ եւ արհեստով ոսկերիչ. իսկ մայրը, Ռաչ-Ռաթուն, եկեղեցասէր կին մը: — 1875ին ընտանեօք կը փոխադրուին Էհնէշէն Այնթապ: — Նախնական կրթութիւնը ստացած է Այնթապի Ազգ. Ներսէսեան վարժարանի եւ Վարդանեան կրթարանին մէջ: — 1890ին Արմաշի Դպրեվանքը զրկուած է Կրօնասիրաց Ընկերութեան կողմէ: Սարկաւազ ձեռնադրուած է 1893ին Դպրեվանքի վերատեսուչ Մաղաբիա Արքեպիսկոպոս Օրմանեանէ, Չարխափան Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, իսկ կուսակրօն քահանայ՝ 1896ին, օծակից ունենալով ի միջի այլոց, Թորգոմ Պատր. Գուշակեանը:

1898ին վարդապետական գաւազանի իշխանութիւն ստացած է, իսկ 1908ին՝ Ծայրագոյն վարդապետութեան աստիճան՝ Օրմանեան Պատրիարքէն ի Գ. Պոլիս:

- Վարած է առաջնորդական, ուսումնական եւ այլ պաշտօններ:
- Եղած է Սղերդի Առաջնորդ, 1899 - 1905:
- Մարաշի Առաջնորդական Տեղապահ 1905 - 7, ապա՝ հրաժարած:
- 1908ին՝ Արմաշի Դպրեվանքին ելեւմտից տեսչութիւնը ստանձնած:

Ատանայի եղեռնին հետեւանքով եկեղեցականի պէտքը զգալի դարձած ըլլալով՝ Պոլսոյ Պատրիարք Եղիշէ Արքեպս. Դուրեանի կարգադրութեամբ եօթը քահանանքով ղրկուած է Կիլիկիա: Երջանկայիշատակ Սահակ Կաթողիկոսի կողմէ նշանակուած է Առաջնորդ Հաճնոյ: Ապա կանչուած է որբախնամի գործին եւ կարեւոր դեր ունեցած է Կիլիկեան Ազգային որբանոցներու կազմակերպութեան գործին մէջ, փոխարինելով Գնէլ Ծ. վարդապետ Գալէմբէրեանը: Փառէն վարդապետ նուիրումով կը ծառայէ Հայ Որբախնամին, նախ իրրեւ Տէօրթ-Եոլի Ազգ. Որբանոցին Տեսուչ 1909-1911, յետոյ՝ Տէօրթ-Եոլի եւ Հասանպէյլիի Որբանոցներուն միացումով՝ Հասանպէյլիի մէջ՝ 1911-13:

1913ին անցած է Այնթապ ստանձնելու համար Կիլիկեան ձեմարանի գիշերօթիկ բաժնի տեսչութիւնը եւ մատակարարութիւնը: — Պաղտատի Գաւառական Ժողովին կողմէ Առաջնորդ ընտրուելով՝ 1915ին անցած է Պաղտատ: Համաշխարհային առաջին պատերազմի այդ դժուարին եւ տառապագին պայմաններուն մէջ, 1915-1917ի շրջանին, կը վարէ Պաղտատի Առաջնորդութիւնը: 1917ին կը հրաժարի Պաղտատի Առաջնորդութենէն «ազատագրուած Հայաստան» երթալու համար: — Թաթար-Պոլշեվիկ բախումներու պատճառաւ, չի կրնար Հայաստան անցնիլ, այլ՝ քահանայագործութեամբ ու զաղտնի ուսուցչութեամբ կ'ապրի Ռուսիոյ մէջ, մինչեւ որ 1919ին կը հրաժարի Հայաստան մտնելու մտադրութենէն եւ կ'անցնի Պոլիս: — 1920-21 կը կարգուի քարոզիչ Նարլը Գափուի եւ ապա Գում Գափուի եկեղեցիներուն:


1921ին, Տէօրթ-Եոլի առաջնորդական փոխանորդ կը կարգուի, եւ Քէլէկեան եւ Սիսուան որբանոցի որբերուն հետ կ'երթայ Ալեքսանտրէթ:

1923-24 վարած է Հալէպի կաթողիկոսական փոխանորդութիւնը՝ տազնապալի պայմաններու տակ: — Հակառակ իր վրայ բանեցուած կուսակցական ճնշումներու, կը մնայ պատնէշին վրայ, մինչեւ որ Տոհմունի Եփրեմ Ծ. վարդապետ առաջնորդական տեղապահ կ'ընտրուի, որուն կը փոխանցէ գործերը եւ ինք այնուհետեւ կը զբաղի հովուութեամբ, ի Թրիփոլի՝ 1924-25, ձիւնի՝ 1926, Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ՝ 1926-28, Կրկին ձիւնի 1929-30:

1930ին, երբ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կը հաստատուի Անթիլիասի մէջ, Փառէն վարդապետ, Աթոռակից Բարգէն Կաթողիկոսի հրաւերով կը մտնէ Կիլիկեան նորակազմ Միաբանութեան շարքերէն ներս եւ հաւատարմօրէն կը ծառայէ Կիլիկեան Աթոռին: Գպրեմանքէն ներս կը ստանձնէ դասեր, եւ կը դասաւանդէ մինչեւ իր եպիսկոպոսացումը 1947 թուականին ձեռամբ Գարեգին Կաթողիկոսի:

Փառէն եպս. Մելրոնեան օրէնսգէտ ու ծիսագէտ հոգեւորական մըն էր: Զերմ պաշտպան հայրենի աւանդութիւններուն եւ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ միասնականութեան: Մաքառած է կաթողիկեան խեղաթիւրումներու դէմ, ՀԱՍԿ ամսագրի 1940-49 տարիներու թիւերուն մէջ հմտալից յօդուածներով: — Գրած է Հայկական Պատարագամատոյցի մասին ուսումնասիրութիւն մը: ՀԱՍԿի մէջ ունի նաեւ անդենական կեանքի մասին խորհրդածութիւններու շարք մը:

Աստուած ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ զհոգի տառապակոծ ծառայի եւ անձնդիր պաշտօնէի Եկեղեցւոյ իւրոյ:



● Գշ. 1 Հոկտ. — Առաւօտեան ժամը Տին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, բացած կատարեց ժողովարժարանի և ընծայարանի, և այսպէս Ս. Թարգմանչաց Վարժարանի 1957-1958 ուսումնական տարեշրջանին:

● Եշ. 3 Հոկտ. — Կէսօրէ վերջ, Քաղաքիս Ամերիկեան Հնարգիտական Ուսումնարանի Տնօրէնութեան և կամ հրաւերին ընդառաջելով, զարդակական վերամուտի առիթով տրուած թէյ-յաւեղանին ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան և Տիար Կարպիս Հինգիսեան:

● Եշ. 10 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Հին Քաղաքի Ոստիկանապետ Պաղար Պէյ իր առաջին այցելութեամբ տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր:

● Գշ. 16 Հոկտ. — Աւերայի Ընդհ. Տնօրէնութեան և կամ հրաւերին ընդառաջելով, Աւստաստոր Պանդոկին մէջ, ի պատիւ Ամերիկեան Գօկիլէյի անդամ Տիկ. Յրանտիս Պօլիքիտի տրուած ֆօթիլի Բարբիլի ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, նեան ունենալով Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրպրբայեանն ու Տիար Կարպիս Հինգիսեանը:

● Կիր. 3 Նոյ. — Կէսօրէ վերջ, Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմնահեան և Տիար Կ. Հինգիսեան ներկայ եղան Աղարբայի ճամբուն վրայ նորակառոյց Անկեղանցի բացման հանդիսութեան որուն կը նախագահէր Պապական Նախարար:

● Բշ. 4 Նոյ. — Օսմանեան Դրամատան Տնօրէնութեան և կամ հրաւերին ընդառաջելով, Ամերիկեան Գօլօնի սրահին մէջ, ի պատիւ Լոնտոնի Օսմանեան Դրամատան Ընդհ. Տնօրէն Պր.

Վ. Սթուարթ Մաքսիլի տրուած ընդունելութեան ներկայ եղան Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչիսեան և Տիար Կարպիս Հինգիսեան:

● Եշ. 7 Նոյ. — Երեսօղակի Ամերիկեան Ընդհ. Հիւպատոսի և իր տիկնոջ՝ Տիկ. Յրանտիլի կողմէ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, նեան ունենալով Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանը, Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրպրբայեանն ու Տիար Կարպիս Հինգիսեանը:

● Գշ. 12 Նոյ. — Աէուտի Արարիտյ Վեն. Թագաւորի Գահակալութեան տարեգործի առիթով, իրենց Հիւպատոսարանին կողմէ եղած հրաւերին ընդառաջելով, Աւստաստոր Պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմնահեան, նեան ունենալով Դիւանապետ Հոգ. Տ. Զաւէն Վրդ. Ձինչիսեանը, Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրպրբայեանն ու Տիար Կարպիս Հինգիսեանը:

● Եշ. 14 Նոյ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Ծննդեան 23րդ տարեգործին առիթու, Հարամ էլ Շէրիֆի Մեծաւորին կողմէ արքունած թէյյաւեղանին ներկայ եղան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմնահեան, Հոգ. Տ. Վազգէն Արք. Գրպրբայեան և Տիար Կ. Հինգիսեան:

● Ո. ր. 22 Նոյ. — Լիբանանի Անկախութեան տարեգործին առիթու, Քաղաքիս Լիբանանեան Հիւպատոսարանին մէջ արքունած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, նեան ունենալով Հոգ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեանն ու Տիար Կարպիս Հինգիսեանը:

ՊՕՂՈՍ ՊԱՊԱ ՔԷՇԻՇԵԱՆ

Հոկտ. 8ին ի Տէր հանգեալ վանուցս աշխատաւոր Միաբաններէն Պօղոս Պապա Քէշիշեան, գրեթէ 100ամեայ հասակի մէջ: Հանգուցեալը ծնած էր Էփէթէկ՝ 1857ին և 1922ին ընդունուած էր ի շարս Ա. Աթոռոյ Միաբանից: Ծառայած է որպէս խոհարարի օգնական, որպէս ժամակոչ Ա. Հըրտակապետաց վանուց, և Ա. Գլխադրի պահապան: 1952էն ի վեր արդէն հանգստեան կոչուած էր:

Թաղման կարգը կատարուեցաւ Դշ. Հոկտեմբեր 9ին Ա. Էջմիածին մատրան մէջ, և մարմինը ամփոփուեցաւ Չամ-Թաղի պուրակ-գերեզմաննոցին մէջ:

Հանգիստ յաւիտեան կը ընդհանրուի:

ՌԱՖԱՅԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Ցաւով իմացանք նաեւ Կիպրոսի ծանօթ ազգայիններէն և ՍՌՆի պատուակալ գործակալ Տորթ. Ռաֆայէլ Արմատունիի մահը: Հանգուցեալը Կիպրոսի մէջ ծանօթ էր երկար տարիներու իր ազգանուէր և եկեղեցանուէր գործունէութեամբ: — Աստուած երկար տարիներու իր ազգանուէր և եկեղեցանուէր Տիկնոջ և պարագաներուն և ի լոյս երկնային մխիթարութիւն պարգևէ հանգուցեալի Տիկնոջ և պարագաներուն և ի լոյս երեսաց իւրոց հանգուցէ պատուական Տորթորը: